ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(80-րդ տարի) Թիվ-8 (1714) Օգոստոս 2026

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhtps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1 - Առաջնորդող

Պայքարին այլընտրանք չկա (էջ 1-4)

2 - Քաղաքական

Լիանա Պետրոսյան
«Խաղաղություն» առանց երաշխիքի. օգոստոսի 8-ի դիվանագիտության հետևաբեմը և վաշինգտոնյան ձևաչափի «թակարդները» (էջ 5-10)

Անի Մելքոնյան
Փաշինյանական իշխանությունը որպես Հայաստանի գլխին կախված դամոկլյան սուր (էջ 11-13)

3 - Տարածաշրջանային

Նարե Գևորգյան
TRIPP-ը և Իրանը. անվտանգային մտահոգություններ պատերազմի պայմաններում (էջ 14-15)

4 - Աշխարհաքաղաքական

Սարգիս Սարգսյան
Հայաստանը և ՀԱՊԿ-ը մոտենում են անդարձելի կետին (էջ 16-19)

5 - Հասարակություն

Մանվել Մկրտչյան
Արդյո՞ք լավ ենք ճանաչում մեր հասարակությանը (էջ 20-22)

5 - Հասարակություն

Արեգ Ղարաբեգյան
Ի՞նչն է «վատ» կամ «լավ» հայության համար (էջ 23-25)

6 - Բնապահպանություն

Արմեն Վարդանյան
Ինչ է լինում, երբ «ասֆալտը՝ ասֆալտ» է և այդ բառը պետք է «խանդաղատանքով» արտասանել(էջ 26-29)

7 - Պատմության լուսարձակ

Տարոն Վլադիկի Հակոբյան
Միացումից անկախացում: ՀՀ և ԼՂՀ (Արցախ) Միջպետական հարաբերությունները և դրանց ազդեցությունը ներքաղաքական կյանքի վրա (1992 թ. սեպտեմբեր – 1993 թ. մարտ ամիսներին) (էջ 30-32)

8 - Հարցազրույց

Հարցազրույց «Դրօշակի» խմբագիր Արտաշէս Շահբազեանի հետ
Գաղափարական պայքարի Դրօշը դեռ երկար պետք է փողփողայ իր բարձունքին վրայ (էջ 33-36)

9 - Ընթերցումներ

Դավիթ Գասպարյան
Մկրտիչ Արմենի անտիպ նամակները Գևորգ Ղարիբջանյանին (Մկրտիչ Արմենի ծննդյան 120-ամյակի առիթով) (էջ 37-44)

Պայքարին այլընտրանք չկա

2026 թվականի խորհրդարանական ընտրություններում վերարտադրվելու համար Նիկոլ Փաշինյանը մեծ խաղադրույք կատարեց, և այժմ եկել է այդ մեծ գինը վճարելու ժամանակը: Խոսքն այս դեպքում այն մասին չէ, որ պաշտոնը և դրանից բխող անձնական անձեռնմխելիության երաշխիքները պաշտպանելու համար Փաշինյանը դիմեց ընտրական խարդախությունների, շանտաժի, սպառնալիքների ու մրցակիցների հետապնդումների՝ բացահայտելով ժողովրդական առաջնորդի, արդարության մարտիկի իմիջի քաղաքական ողջ սնանկությունը: Երկրի ղեկավարը ընդգծված արկածախնդրական վարք դրսևորեց արտաքին հարաբերությունների ոլորտում՝ ակնհայտ դարձնելով թուրք-ադրբեջանցիների և Արևմուտքի բացահայտ քաղաքական ու ֆինանսական աջակցությունը, ինչպես և հովանավորությունը Փաշինյանի աղաղակող անօրինականությունների հարցում: Մյուս կողմից այդ հովանավորությունն ապահովելու համար դրածո ղեկավարը հարկադրված եղավ ընդգծված ձևով փաստելու Ռուսաստանի հետ եղած տնտեսական, էներգետիկ, ռազմական և այլ բնույթի կապերը խզելու, Անդրկովկասից վերջինիս դուրս մղելու գործում իր ստանձնած պարտավորություններն անշեղորեն իրականացնելու վճռականությունը: Ռուսաստանի դեմ այս քայլերին Հայաստանի իշխանություններին հետևողականորեն մղում են, մասնավորապես, Թուրքիան ու Ադրբեջանը՝ այն պարագայում, երբ այս երկու պետություններն էլ փորձում են Ռուսաստանի հետ պահպանել կեղծ բարեկամությունը, երբեք չգնալով ակնհայտ առճակատման: Ընդգրկված լինելով հակառուսական ճակատում և փայփայելով Ռուսաստանին Անդրկովասից դուրս մղելու դարավոր երազանքը, այս տանդեմը ձգտում է, որ Հայաստանը թշնամանալով Ռուսաստանի հետ հեռանա ու քաղաքականորեն հակադրվի նրան, իրենց դիմաց մնա միայնակ: Եվ Նիկոլ Փաշինյանը, որպես նրանց ձեռքին կույր ու բութ գործիք, իրականացնում է այս հակահայ ծրագիրը:

Թռուցիկ հայացք նետելով պատմական անցյալին՝ կարող ենք անդրադառնալ, որ մեր նախնիները մահմեդական օվկիանոսում հայության համար փրկություն չտեսնելով, փորձեցին տարածաշրջան հրավիրել Եվրոպայի քրիստոնյա տերություններին, որոնք այստեղ կմրցակցեին իսլամական աշխարհի հետ, և հակադիր շահերի բախման շրջագծում կապահովվեր հայության գոյատևման հնարավորությունը: 18-րդ դարի սկզբներից, Քրիստոնյա Եվրոպայից աջակցության որևէ խոստում չստանալով, հայ գործիչները դիմեցին Ռուսաստանին, որը գրեթե մեկ դար անց հայտնվեց Անդրկովկասում: Նպատակ չունենք այստեղ պատմական էքսկուրս կատարելու, լավ հայտնի է նաև թե ռուսական կայսրության երկիմաստ քաղաքականությունն ինչպիսի կորուստներ է արժե-

ցել մեր պատմական հայրենիքի համար, մանավանդ Արևմտյան Հայաստանի ողբերգական ճակատագրում: Մյուս կողմից հնարավոր չէ ժխտել, որ տարածաշրջանում հենց ռուսական շահերի հաստատման հետ հնարավորություն ընձեռվեց Արևելյան Հայաստանի վերահայացման ժողովրդագրական շրջադարձն ապահովել: Վերջին երկուհարյուր տարվա ընթացքում, Առաջին Հանրապետության կարճատև շրջանը չհաշված, ռուսական ու թուրքական հակադրության դաշտում է հայ ժողովուրդը կարողացել ապահովել իր գոյատևումը: 1920 թվականին այս երկու ոխերիմ թշնամիները դաշնակցեցին, և մեծ խաղերի մեջ մենք կորցրինք մեր պետականությունը: Երկու դարերի ողբերգական ու հաղթական իրողությունները նկատի ունենալով, ինչպեսև արտաքին այս կամ այն ուժին սիրելու կամ ատելու զգացմունքային զեղումները մի կողմ թողնելով, սառը դատողությամբ, փաստենք, որ երբ այժմ Հայաստանի իշխանությունները ձգտում են ռուսական զինուժը հեռացնել Հայաստանից, նրանք շատ լավ հասկանում են, որ դրանով բացում են Հայաստանի դարպասները թուրքերի, ինչպես նաև ադրբեջանցիների առջև (վերջիններս, արդեն Հայաստանում են): Ի դեպ, հայ պատմաբանը, քաղաքագետը կամ գաղափարական ազդեցության ներքո գտնվող շարքային հայը, երբ անդրադառնում են պատմական իրողություններին և հանգում այն եզրակացության, որ Ռուսաստանին պետք է դուրս մղել Անդրկովկասից, կամա թե ակամա դառնում են Նիկոլի քաղաքականության դաշնակիցը՝ ռուսական ազդեցությունը թուրք-ադրբեջանական ազդեցությամբ փոխարինելու հարցում: Առանց չափազանցնելու կարելի է եզրակացնել, որ Հայաստանից ՀԱՊԿ-ի զինուժի հեռացումից հետո Հայաստանի Հանրապետությունը քաղաքականորեն կհայտնվի 19-րդ դարի վերջի և 20-րդ դարասկզբի Արևմտահայաստանի իրավիճակում: Չեմ ցանկանում որևէ մեկին վախեցնել. թուրքական զորքերի ներխուժման և մեր երկրում կոտորածներ սարքելու հեռանկարով, նույնիսկ դրա

կարիքը չի լինելու: Թուրքական տանդեմը Եվրոպայի անունից կգա և ոչ երկար ժամանակահատվածում Հայաստանը կկլանի, տնտեսական, էներգետիկ, հաղորդակցական ու սրանցից բխող քաղաքական զենքերի կիրառմամբ: Որ Եվրոպան չի գալու այստեղ իր զորքով մեզ պաշտպանելու, այլ նրա անունից տարածաշրջանում հայտնվելու է թուրքը. այսօր կարծես թե Նիկոլի աղանդավորներից բացի, բոլորն են հասկանում, և եվրոպացիք էլ չեն թաքցնում այդ հեռանկարը: Մասնավորապես այս մասին հայտարարել է Եվրամիության արտաքին քաղաքականության և անվտանգության հարցերով բարձր ներկայացուցիչ Կայա Կալասը: Սույն թվականի հունիսի վերջին, Թուրքիայում գտնված ժամանակ, Եվրոպայի գլխավոր դիվանագետը հայտարարել է, որ Թուրքիան թիվ մեկ ռազմավարական գործընկեր է և ավելացրել է. «Նկատի ունեմ այնպիսի հարցեր, ինչպիսիք են միգրացիան, պաշտպանությունը և տարածաշրջանային կայունության ապահովումը: Եթե խոսենք Մերձավոր Արևելքում տեղի ունեցող իրադարձությունների մասին, ապա Թուրքիան այնտեղ կարևոր դեր է խաղում: Իսկ եթե դուրս գանք Մերձավոր Արևելքի սահմաններից, ապա կա նաև Կովկասը, որտեղ Թուրքիան նույնպես շատ կարևոր դեր ունի»:[1]

Թուրքիան և Ադրբեջանը Նիկոլ Փաշինյանի միջոցով կհասնեն իրենց մեկ այլ վաղուցվա երազանքի իրականացմանը՝ Հայկական ատոմակայանի փակմանը, ինչը Ռուսաստանի հետ Հայաստանի կապվածության կարևորագույն ևս մեկ օղակի վերացումը կնշանակի: Այս առիթով վկայաբերենք Իլհամ Ալիևի հայտարարությունը, որը նա արել է Նախիջևանում, ադրբեջանական հեռուստատեսության համար տրված հարցազրույցի ժամանակ: Ադրբեջանի ղեկավարը խոսել է. «Մեծամորի ատոմակայանի (ԱԷԿ) փակումից հետո Հայաստանում էներգետիկ ճգնաժամի ռիսկի մասին և հայտարարել, որ Բաքուն պատրաստ է երկիրն ապահովել էլեկտրաէներգիայի լրացուցիչ աղբյուրով»: Այնուհետև նա ավելացրել է. «ադրբեջանցի մասնագետներն արդեն իսկ անհրաժեշտ հետազոտություններ են անցկացրել Հայաստանում և որոշել են այն վայրերը, որտեղ կարող են տեղադրվել էլեկտրահաղորդման գծերի հենարաններ»:

«Իսկ առավել ուշագրավ դրվագն այն է, որ Փաշինյանը, ի պատասխան Ալիևի հայտարարության, նշել էր, որ Հայաստանի և Ադրբեջանի միջև ենթակառուցվածքների շուրջ երկկողմ աշխատանք է իրականացվում: Իր ընկալմամբ, երկկողմն այն է, որ Ադրբեջանն ասում է՝ իրենք անում են Հայաստանի հետ...»:[2]

Այս շղթայի կարևոր օղակներից մեկն էլ Հայկական երկաթուղիների հարցն է, որոնց կառավարման իրավունքը Նիկոլ Փաշինյանը ցանկանում է վերցնել Ռուսաստանից և հանձնել Թուրքական պետությունների կազմակերպության ակտիվ անդամներից մեկին՝ Ղազախստանին: Հայաստանը թուրք-ադրբեջանական կառավարման հանձնելուց առաջ Նիկոլ Փաշինյանը, ցանկանում է նաև երկրի ներսում այնպիսի պայմաններ ստեղծել նոր տերերի համար, որ վերջինները խնդիր չունենան ոչ երկրի, ոչ էլ նրա կառավարման ղեկին Փաշինյանի մնալու հանգամանքի հետ: Արցախից հետո Փաշինյանը Հայաստանում ոչնչացնում է այն ամենը, ինչը կապվում է Արցախի և Արցախյան պատերազմի հետ: Որպեսզի թուրքական տանդեմը որևէ մտահոգություն չունենա, թե մի օր ազգային ինքնությունը հայ ժողովրդի մոտ կարող է արթնանալ, Փաշինյանը փորձում է վերացնել այն ամենը, ինչը կապվում է այդ ինքնության հետ՝ արժեքային համակարգ, ազգային եկեղեցի, պատմական անցյալ: Քանի որ թուրքերը մշտապես ցեղասպանության հարցի հետապնդումը կապում են Սփյուռքի գործոնի հետ, Փաշինյանը ցեղասպանության հարցի հետ մերժում է նաև Սփյուռքը, նրա կապը հայրենիքի հետ: Երրորդ հանրապետության էջի փակումը և մոգոնված 4-րդ հանրապետության հռչակման ցանկությունը նշանակում է հենց մերժումը վերը թվարկված արժեքների, 36 տարվա անցած ճանապարհի ջնջումը և հայության վերածումը անհող, անինքնություն ու անողնաշար զանգվածի, նույնպիսի անբովանդակ էությամբ տարածքի վրա:

Նիկոլ Փաշինյանը Արևմտաթուրքական հովանավորներին ճգնում է հավաստիացնել, որ եթե ինքը մնա, պատրաստ է Հայաստանի հաշվին գնալու ցանկացած տեսակի զիջումների ու փոփոխությունների, իսկ իր չլինելու դեպքում կգան «Ռուսաստանին ծառայող ազգայնականները» և ամեն ինչ գլխիվայր շուռ կտան: Հնարավոր պատերազմի մասին Փաշինյանի նախընտրական հիստերիկան ուղղված էր ոչ միայն ներքին լսարանին, այլև ուղերձ էր արտաքին ուժերին, որ իր պարտության դեպքում եկող նոր իշխանությունների հետ առճակատվելու են, որովհետև վերջինները չեն դառնալու արտաքին ուժերի հլու կամակատարը:

Փաշինյանն ասում է, թե TRIPP-ը Հայաստանի անվտանգության երաշխիք է, սակայն այն հսկայական զիջում է, որը կարող էր տեղի ունենալ, օրինակ, ԱՄՆ-ին պատերազմում պարտվելուց հետո: Ժողովրդից գաղտնի՝ Հայաստանի իշխանությունների կողմից Սյունիքի ընդերքի ազգային հարստության հարցում հերթական զիջումն արվեց: Ընդ որում, նույնիսկ Հայաստանի իշխանություններին բանի տեղ

չդնելով՝ պարզապես Արարատ Միրզոյանին կանչեցին «Զվարթնոց» օդանավակայան, որտեղ նա ԱՄՆ պետքարտուղարի հետ ստորագրեց ղազագիր, որից հետո Ռուբիոն հեռացավ Հայաստանից:

Ոչ մի այցելություն Հայաստանի Հանրապետության պետական հաստատություններ և ոչ մի դիվանագիտական ընդունելություն, և ոչ էլ որևէ պատշաճ արարողակարգ: Իսկ մի՞թե արտաքին ուժերի համար դրածոներն արժանի են այդ պատվին:

Փաշինյանն իր բոլոր արտաքին հարաբերությունների մեջ Հայաստանի փոխարեն փորձում է բարձրացնել իր արժեքը: Սա միաժամանակ այն հանգամանքն է, որն, ըստ Փաշինյանի, պետք է շահագրգռի ամերիկացիներին և մյուսներին իր իշխանության վրա մնալու հարցում, այլապես, ուրիշները եթե գան, կարող են վերանայել հակահայ ու գլխավորաբար թուրքամետ գործարքները: Իրականում հենց այս է սկզբունքը Նիկոլ Փաշինյանի վարած 8-ամյա արտաքին քաղաքականության՝ համոզել արտաքին ուժերին, թե իրենց շահերի առումով միայն Փաշինյանի իշխանավարումն է նպաստավոր, այլապես մյուսները չեն ենթարկվի և կպաշտպանեն Հայոց պետության ինքնիշխան շահերը:

Ինչպես մեր ասելիքի սկզբում նշեցինք, Նիկոլ Փաշինյանը մեծ գրավ դրեց և այժմ կանգնած է մեծ գին վճարելու իրողության առջև: Նա իր բոլոր հայտարարություններով խաբեց ժողովրդին, և այդ խաբեությունները այսօր դուրս են եկել ջրի երես: Նա չկարողացավ շտկել հարաբերությունները Ռուսաստանի իշխանությունների հետ և լայն առումով, վերջինի շուկայի փակվելու հետ, ոչ միայն հայ արտադրողն է մնում առանց եկամտի, այլև Հայաստանը զրկվում է հսկայական առևտրաշրջանառության օգուտներից: Նիկոլ Փաշինյանը խաբեց խոստանալով, թե Հայաստանի առջև կբացվեն Եվրոպական շուկաների դռները, լավ իմանալով, որ Եվրոպան անորոշ հեռանկարում նման բան թույլ չի տա: Իշխանությունն ուզուրպացրած ղեկավարը խոսեց կայացած խաղաղության ու բարիդրացիության մասին, իսկ դրա դիմաց այսօր նրանից թուրքական տանդեմը պահանջում է նորանոր և անհապաղ զիջումներ՝ անկլավների հանձնում, Ադրբեջանի ցանկացած Սահմանադրության ընդունում, ադրբեջանցիների վերադարձ, հայ եկեղեցու և հայ ազգային-պետական գործիչների հալածանք և այլն:

Այս իշխանությունը սարսափի ու կատաղության նոպա է ունենում, երբ քաղաքական գործիչը, վերլուծաբանը, սփյուռքահայը, հոգևորականն ու պարզ քաղաքացին որևէ ակնարկ են անում Արցախի ու արցախահայության իրավունքների, հայ ժողովրդի անցյալի հաղթական էջերի կամ թե ցեղասպանության վերաբերյալ, աղաղակելով, թե դա վտանգում է խաղաղության գործընթացին: Միևնույն ժամանակ իրեն խուլի ու հիմարի տեղ է մեր երկիրը Արևմտյան Ադրբեջան հայտարարելու, Հայաստանից կենսական նշանակության զիջումներ պահանջելու ամենօրյա խոսույթի ու գործողությունների պարագայում, որոնք գեներացվում, գործնականորեն զարգացվում ու պաշտոնական բնույթ են ստանում Ադրբեջանի իշխանությունների կողմից: Ուրեմն սա՞ է կայուն խաղաղությունը և այսպիսի խաղաղությունը պահպանելու երաշխիքը:

Նիկոլ Փաշինյանի իրարահաջորդ, ռեպրեսիվ գործողությունները ցույց են տալիս, որ նա այրում է օրինականության և արդարադատության հետ ունեցած բոլոր կամուրջները և գնում է վա բանկ՝ երբ իր դավաճանական, անօրեն քայլերի համար պատասխանատվությունից խուսափելու միակ միջոցը իր իշխանության ժամկետը հնարավորինս երկարաձգելն է: Որքան արտաքին գործոններն ավելի ճնշեն Փաշինյա-

նին, նա ավելի շատ է գնալու ներքին հալածանքների: Նա փորձելու է շեղել ժողովրդին արտաքին լրջագույն խնդիրներից, փորձելու է չեզոքացնել ժողովրդական կազմակերպված ըմբոստացման հնարավորությունը, ի սկզբանե զրկելով հավանական շարժումներին հավանական ղեկավարությունից, ինչպես և սարսափ սերմանելով ստիպել, որ պարզ մարդկանց մտքով իսկ չանցնի վատթարացող իրավիճակը չհանդուրժելու գաղափարը:

Փաշինյանն ընտրություններում դեմ առ դեմ առերեսվեց իր նկատմամբ ժողովրդի ատելությանը, բայց որովհետև ողջ ժողովրդին պատժել չի կարող, վայրենի կրքով փորձում է նսեմացնել ազգային աչքի ընկնող գործիչներին: Վերջիններիս խորապատկերի վրա ընդգծվում էր, Փաշինյանի բռի-գեղջկական, սանձարձակ և դատարկ էությունը: Եթե մյուսները խոսում էին Հայաստանի զարգացման ծրագրերից, 8 տարվա վարչապետը շարունակում էր հայհոյել նախկիններին, սպառնալ, թե կնստացնի, կկզացնի, ունեցածները ձեռքերից կխլի: Կարելի է ասել, որ խարդախությամբ ընտրությունների արդյունքները սեփականած Փաշինյանի համար սկսվել է քաղաքական հոգեվարքը, որը կարող է երկար տևել, եթե կուտակված հասարակական էներգիան գեներացնող չլինի: Այսօր Հայաստանին անհրաժեշտ է համախմբված ազգային ուժերի միասնական պայքար, ինչը կիրականացվի երկարատև ժամանակի համար կազմված գործողությունների ճանապարհային քարտեզով: Պետք է ընդունենք, որ դժվարին մարտահրավերների առջև է ոչ միայն իշխանությունը, այլև ընդդիմությունը: Իրականությունը թելադրում է նաև ընդդիմության անելիքը, որը նույնպիսի քննության առջև է քաղաքական դաշտում իր առաքելության իրականացման հարցում: Ընդդիմության անունից հանդես եկող մի շարք ուժեր ու անհատներ նախընտրական շրջանում իրենց քննադատության սլաքն ուղղել էին ավելի շատ մրցապայքարի մեջ մտած ազգային ուժերի դեմ, դրանով ոչ միայն պառակտելով ազգային ընդդիմադիր դաշտը, այլև տրամաբանական հարց ծնելով, թե իրականում ում հետ են և ում դեմ են իրենք: Առաջատար ընդդիմադիր ուժերը պետք է միավորեն քաղաքական-հասարակական դաշտը, որտեղ այսօր առողջ ուժեր և բազմաթիվ կարող անհատներ կան, ինչպես և հսկայական դժգոհ ժողովուրդ, որի մոտ կամաց-կամաց հասունանում է դժգոհությունը նաև ընդդիմադիր դաշտի կրավորական պահվածքի համար:

Անցած ընտրություններում ընդդիմության անվիճելի հաղթանակին խանգարեցին նաև փոքր ուժերի ու անհատ գործիչների մասնավոր հավակնությունները և մասնատված գործունեությունը: Այնինչ Հայաստանի այսօրվա տագնապալի իրավիճակը բոլոր առողջ ազգային ուժերին պարտադրում է հավակնությունները առժամանակ մի կողմ թողնել և համախմբվել հանուն երկրի փրկության: Խնդիրների լուծումը ժամանակի դատին թողնելը հանցանք կլինի պետության ճակատագրի հանդեպ: Մինչև ընդհուպ 2023 թվականի աշունը դժվար էր հավատալը, թե մենք ամբողջովին կկորցնենք Արցախը (հուսանք ժամանակավորապես): Այսօր էլ կարծես չենք ցանկանում ընդունել, որ լինել-չլինելու ճակատագրական իրողության առջև է Հայաստանի Հանրապետությունը: Գործնական և հրապարակային պայքարը այլընտրանք չունի, յուրաքանչյուրը պետք է հանձնի իր քննությունը կամ մի կողմ քաշվի: ■

Ծանոթագրություններ

1. https://iravunk.com/?p=343746&l=am (մուտք՝ 28.08.2026):
2. https://hraparak.am/am/post/5950ffdc3ffa7d680b8400b297a322aa), (մուտք՝ 28.08.2026):

«Խաղաղություն» առանց երաշխիքի. օգոստոսի 8-ի դիվանագիտության հետնաբեմը և վաշինգտոնյան ձևաչափի «թակարդները»

Լիանա Պետրոսյան
Պատմ. գիտ. թեկնածու, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի ասիստենտ, դասախոս

2025 թվականի օգոստոսի 8-ին Վաշինգտոնում Սպիտակ տան տիրոջ՝ Դոնալդ Թրամփի մասնակցությամբ կազմակերպված արարողությունը միջազգային PR-արշավներում փաթեթավորվեց որպես «Պատմական խաղաղության պայմանագիր»: Իրականում, սակայն, տեղի ունեցավ հերթական քաղաքական թատերախաղը, որտեղ Հայաստանի գործող իշխանությունները հերթական անգամ հայտնվեցին միակողմանի զիջողի դերում, քանի որ իրավական տեսանկյունից որևէ վերջնական պայմանագիր այդպես էլ չստորագրվեց:

Վաշինգտոնում արձանագրվեց ընդամենը երեք քայլ, որոնցից յուրաքանչյուրն իր մեջ պարունակում է լուրջ ռազմավարական ռիսկեր: Նախ՝ տեղի ունեցավ «Խաղաղության և միջպետական հարաբերությունների հաստատման մասին» համաձայնագրի տեքստի նախաստորագրում (initialing), ինչն ընդամենը դեռևս 2025 թ. մարտին համաձայնեցված տեքստի տեխնիկական արձանագրում է, այլ ոչ թե իրավական ուժ ունեցող փաստաթուղթ: Բաքուն սրանով որևէ իրավական պարտավորություն չստանձնեց: Երկրորդ՝ Ի. Ալիևի, Ն. Փաշինյանի և Դ. Թրամփի՝ որպես վկայի, ստորագրած եռակողմ համատեղ հռչակագիրը զուտ քաղաքական հայտարարություն է, որը չունի միջազգային-իրավական պարտադիր ուժ և Ադրբեջանին չի զսպում նոր ագրեսիայից: Եվ երրորդ՝ ԵԱՀԿ-ին ուղղված համատեղ դիմումով Մինսկի խումբն ու առնչվող կառույցները լուծարելու հարցը Բաքվի գլխավոր պահանջներից մեկն էր, որով Հայաստանի իշխանությունները սեփական ձեռքերով քանդեցին Արցախյան հիմնախնդրի միջազգային միակ լեգիտիմ ձևաչափը՝ չստանալով ոչ մի իրական անվտանգային երաշխիք:

Օգոստոսի 29-ին ԱՄՆ պետդեպարտամենտի հրապարակած երկկողմ հուշագրերը ևս ակնհայտ են դարձնում շահերի անհամաչափությունը: Մինչ Հայաստանին առաջարկվում են անորոշ խոստումներ «Խաղաղության խաչմերուկի», արհեստական բանականության կամ էներգետիկայի վերաբերյալ, Ադրբեջանի հետ ձևավորվում է Ռազմավարական գործընկերության խարտիայի հստակ աշխատանքային խումբ:

Անցել է ամբողջ մեկ տարի, իսկ, այսպես կոչված, «խաղաղության պայմանագիրը» դեռևս ստորագրված և վավերացված չէ: Սա պատահականություն կամ տեխնիկական ձգձգում չէ, այլ Բաքվի հաշվարկված ռազմավարությունը, որով Ալիևը ստացավ

իրեն անհրաժեշտ քաղաքական զիջումները, իսկ բուն պայմանագրի ստորագրումը կախված թողեց օդում՝ այն պահպանելով որպես մշտական մահակ և լծակ Հայաստանից նորանոր զիջումներ կորզելու համար:

Նախաստորագրված տեքստը, որը միջազգային հարթակներում փորձ է արվում ներկայացնել որպես «փոխադարձության» վրա հիմնված փաստաթուղթ, իրականում Հայաստանի համար կապիտուլյացիոն բնույթի էական բացթողումների և թաքնված թակարդների մի ամբողջ հավաքածու է: Թեև թղթի վրա ֆիքսված են 1991 թ. Ալմա-Աթայի հռչակագրով սահմանների փոխադարձ ճանաչումը, ապագայում տարածքային պահանջների բացակայությունը, ուժի կիրառման մերժումը, սահմանից երրորդ երկրի ուժերի դուրսբերումը, անհետ կորածների հարցն ու միջազգային դատական հայցերի հետկանչը, այս ամենը կրում է զուտ հռչակագրային բնույթ: Ավելին, «սեպարատիզմի» և «էքստրեմիզմի» դատապարտման ձևակերպումները Բաքվի ձեռքին լեգիտիմ գործիք են դառնում Արցախի ինքնորոշման պայքարը հանցագործություն որակելու համար, իսկ միջազգային հայցերից հրաժարումը Հայաստանին զրկում



է Ադրբեջանի հանցագործություններն իրավական դաշտում դատապարտելու վերջին լծակից:

Փաստաթղթի ամենավտանգավոր կողմը, սակայն, այն կենսական հարցերի իսպառ բացակայությունն է, որոնք վերաբերում են Հայաստանի անվտանգությանն ու ազգային շահերին: Տեքստում չկան պայմանագրի կատարման որևէ միջազգային մեխանիզմներ կամ երաշխիքներ, իսկ Ադրբեջանի կողմից օկուպացված հայկական տարածքների ապաօկուպացիայի հարցը նենգաբար տեղափոխվել է անվերջանալի «սահմանազատման» տիրույթ: Լիովին շրջանցված են Արցախի ժողովրդի՝ իր հայրենիք վերադարձի իրավունքը, Բաքվում պահվող ռազմագերիների ու պատանդների վերադարձը, ինչպես նաև օկուպացված տարածքներում հայկական հոգևոր-մշակութային ժառանգության պահպանման հարցը:

Այս ակնհայտ անհամաչափությունը պատահականություն կամ դիվանագիտական վրիպում չէ: Միջազգային հեղինակավոր վերլուծական կենտրոնները (EVN Report, International Crisis Group, RAND) այս բացթողումները որակում են որպես առկա ուժային ասիմետրիայի ինստիտուցիոնալացում: Հայաստանի գործող իշխանությունների զիջողականության հետևանքով ուժեղի դիրքերից հանդես եկող Ադրբեջանը դիտավորյալ բաց է թողել այս հանգուցային հարցերը՝ դրանք պահպանելով որպես մշտական ճնշման և Հայաստանի դեմ հետագա ագրեսիաների լեգիտիմացման գործիք:

Վաշինգտոնյան հռչակագրի ամենավտանգավոր և աշխարհաքաղաքական առումով պայթյունավտանգ նորույթը դարձավ TRIPP-ը (Trump Route for International Peace and Prosperity) կամ «Թրամփի ուղին»: Սա Սյունիքի մարզով անցնող մոտ 43 կիլոմետրանոց բազմաձև տրանսպորտային երթուղին է, որը կապելու է Ադրբեջանը Նախիջևանին, և որը թուրք-ադրբեջանական տանդեմի պաշտոնական բառապաշարում շարունակում է բացահայտորեն կոչվել «Զանգեզուրի միջանցք»: Թեև ամերիկյան կողմի պաշտոնական պարզաբանումներով փորձ է արվում ցույց տալ, թե տարածքը մնում է Հայաստանի ինքնիշխանության ու օրենսդրության ներքո, իրականում առաջարկվող մոդելը լիովին իմաստազրկում է այդ ինքնիշխանությունը: ԱՄՆ-ին 99 տարի ժամկետով բացառիկ զարգացման իրավունք տալը, երկաթուղային, ավտոմոբիլային, էներգետիկ և թվային ենթակառուցվածքների հանձնումը, ինչպես նաև սահմանային մուտքի վերահսկողությունն անհայտ ծագման «մասնավոր օպերատորին» վստահելը Հայաստանի ինքնիշխան տարածքի փաստացի արտատարածքայնացում է և հայրենի հողի վրա օտարերկրյա կոնցեսիոն ռեժիմի հաստատում:

Ակնհայտ է, որ TRIPP-ը ոչ թե տնտեսական, այլ խոշոր աշխարհաքաղաքական նախագիծ է, որն իրականում ներդրվում է որպես «Միջին միջանցքի» (Չինաստան–Կենտրոնական Ասիա-Կասպից-Հարավային Կովկաս–Եվրոպա) առանցքային օղակ: Սույն նախագծի բուն նպատակը տարածաշրջանից Ռուսաստանին և Իրանին վերջնականապես դուրս մղելն է: Հայաստանի գործող իշխանությունները, հանուն կարճաժամկետ քաղաքական գոյատևման, Սյունիքը վերածում են աշխարհաքաղաքական բախման թատերաբեմի: Թեհրանի և Մոսկվայի համար սա ընկալվում է որպես իրենց կենսական ազդեցության գոտուց դուրսմղում և ուղղակի սպառնալիք, ինչը Հայաստանը կանգնեցնում է Իրանի հետ ավանդական բարեկամական հարաբերությունները վերջնականապես փլուզելու և տարածաշրջանային մեծ պատերազմի մեջ ներքաշվելու իրական վտանգի առջև:

2026 թվականի օգոստոսի 10-ի ԱՄՆ-Հայաստան-Ադրբեջան համատեղ հայտարարությունը, որում փորձ է արվում թվարկել իբրև թե «չափելի արդյունքներ» ու ութ «նշաձողեր», իրականում իշխանական քարոզչամեքենայի կողմից իրականացվող սովորական ինքնագովասանք է և քաղաքական ինքնագնահատական, որը որևէ աղերս չունի ռազմավարական իրականության հետ:

Սահմանային «կայունության» մասին հայտարարությունները զուտ աչքակապություն են, քանի որ մասշտաբային կրակոցների բացակայության ֆոնին սահմանազատումն այդպես էլ մնում է կիսատ, իսկ ադրբեջանական օկուպացիոն զորքերը շարունակում են անպատիժ տեր ու տնօրինություն անել Հայաստանի ինքնիշխան տարածքի շուրջ 200–241 կմ² հատվածում (Սյունիք, Վայոց ձոր, Գեղարքունիք):

TRIPP-ի («Թրամփի ուղու») մասով Հայաստանի իշխանությունները բավարարվում են ընդամենը տեղում ինժեներական չափագրումներ անելով, մինչդեռ Ադրբեջանն իր տարածքում գրեթե ավարտին է հասցրել մոտեցող ճանապարհն ու երկաթուղին՝ պատրաստի ենթակառուցվածքով սպասելով հայկական կողմի վերջնական կապիտուլյացիոն զիջմանը:

Ամերիկյան կողմից մատնանշվող «Trans-Caspian Enterprise Fund»-ի 201 միլիոն դոլարն ընդամենը մասնավոր ներդրումների համար նախատեսված ընդհանուր ֆոնդ է, այլ ոչ թե Հայաստանի անվտանգությունն ապահովող իրական ենթակառուցվածք, իսկ ԱՄՆ–Հայաստան երկկողմ «ռազմավարական» հուշագրերն ու արհեստական բանականության

գործարանի բացումը չեն պարունակում որևէ ռազմական կամ անվտանգային երաշխիք:

Տարանցման սահմանափակումների «վերացումն» ու Ադրբեջանից մատակարարված 20.000 տոննա նավթամթերքը Հայաստանին էներգետիկ և տնտեսական կախվածության մեջ են դնում Բաքվից, իսկ երկկողմ առևտրի թվերը ցույց են տալիս ծաղրալի անհամաչափություն. 2026 թ. առաջին եռամսյակում Ադրբեջանից Հայաստան է ներմուծվել մոտ 6 մլն դոլարի ապրանք, մինչդեռ Հայաստանից արտահանումը կազմել է ընդամենը խայտառակ 960 դոլար:

Telecom Armenia-ի և Azertelecom-ի համաձայնագիրը կամ Թրամփի «Խաղաղության խորհրդին» (Board of Peace) միանալը մշուշոտ, իրավական հստակություն չունեցող քայլեր են, որոնց դիմաց հայկական կողմն արդեն իսկ վճարել է ամենաբարձր գինը՝ սեփական ձեռքերով լուծարելով ԵԱՀԿ Մինսկի խումբը:

Անցած մեկ տարվա իրական պատկերը հետևյալն է. խաղաղության պայմանագիրը ստորագրված չէ, օկուպացված հայկական տարածքները վերադարձված չեն, Բաքվում պահվող ռազմագերիներն ազատ արձակված չեն, իսկ սահմանազատումն ու TRIPP-ի շահագործումը ծառայեցվում են բացառապես թուրք-ադրբեջանական տանդեմի օրակարգին:

Մեկ տարի անց Հայաստանի ստացած «ձեռքբերումները» հարաբերական շահի տեսանկյունից չափելիս ակնհայտ է դառնում, որ իշխանությունների խոստացած «խաղաղության դարաշրջանը» ընդամենը ռազմավարական թակարդ է, որտեղ իրական անվտանգությունը փոխարինվել է ժամանակավոր ու խաթարված խաղաղությամբ:

Սահմանին մեծածավալ ռազմական գործողությունների բացակայությունը և պատերազմի կարճաժամկետ հավանականության նվազումը հենված են ոչ թե իրավական պարտադիր երաշխիքների կամ սեփական բանակի մարտունակության, այլ բացառապես Ադրբեջանի քաղաքական հաշվարկների և ամերիկյան ժամանակավոր ուշադրության վրա: Սա անվտանգություն չէ, այլ թշնամու քմահաճույքից կախվածության վիճակ, որը Բաքուն կարող է խախտել ցանկացած պահի:

Արտաքին միջնորդի փոփոխությունը և Ռուսաստանի փոխարեն ԱՄՆ-ի՝ որպես գործընթացի գլխավոր սեփականատիրոջ ներգրավումը, որն իշխանությունները մատուցում են որպես «բազմավեկտոր արտաքին քաղաքականություն», իրականում անվտանգային կախվածության տեղափոխում է մի կենտրոնից մյուսը: Ընդ որում, դա արվում է առանց ԱՄՆ-ի կողմից որևէ պայմանագրային անվտանգության երաշխիք ստանալու, փոխարենը, տարածաշրջանային մյուս դերակատարների հետ հարաբերությունները վերջնականապես փլուզելու գնով:

Ադրբեջանով բեռնափոխադրումների և նավթամթերքի ներմուծման ուղու մասնակի բացումը, որը ներկայացվում է որպես շրջափակման հաղթահարում, իրականում ունի ծայրաստիճան ասիմետրիկ և վտանգավոր բնույթ: Սա ոչ թե հավասարազոր

տնտեսական համագործակցություն է, այլ Հայաստանի աստիճանական տնտեսական ու էներգետիկ կախվածության հաստատում Բաքվից:

2026 թ. հունիսի 7-ի խորհրդարանական ընտրությունները ցույց տվեցին, որ թեև պատերազմի վախի մանիպուլյացիայով իշխող «Քաղաքացիական պայմանագրին» հաջողվեց կորզել 49.89% քվե (64 մանդատ), հասարակությունը նրանց չտվեց 2/3 մեծամասնություն: Սա նշանակում է, որ ժողովուրդը չի տվել սահմանադրական փոփոխությունների և Ադրբեջանի պահանջով Մայր օրենքը վերանայելու մանդատ:

Վերջապես, TRIPP-ի շուրջ հյուսվող տնտեսական հեքիաթները՝ տարանցիկ վճարների, էներգետիկ ու թվային ենթակառուցվածքների մասին, ընդամենը չիրականացված, պոտենցիալ ու մշուշոտ սցենար են: Իրականությունն այն է, որ Հայաստանը զրկվում է Սյունիքի նկատմամբ լիարժեք վերահսկողությունից՝ փոխարենը ստանալով անորոշ տնտեսական խոստումներ:

Այս վերլուծության ամենացավոտ ու ռազմավարական առումով կործանարար հատվածը վերաբերում է նրան, թե ինչից է զրկվել Հայաստանը վերջին մեկ տարվա ընթացքում: Զրկումն այստեղ պետք է հասկանալ ոչ միայն որպես տարածքային կորուստ, որը հիմնականում տեղի ունեցավ 2020 և 2023 թվականների ողբերգական իրադարձությունների հետևանքով, այլև որպես պետության իրավական, քաղաքական ու դիվանագիտական գործիքակազմի կամավոր հանձնում թշնամուն:

Առաջին հերթին տեղի ունեցավ Արցախյան հիմնախնդրի վերջնական միջազգային փակում՝ առանց արցախահայության կենսական իրավունքների պաշտպանության: Նախաստորագրված տեքստում իսպառ բացակայում են ինքնորոշման, հայրենիք վերադարձի կամ մշակութային ժառանգության պահպանման վե-

ռաբերյալ ձևակերպումները: Իսկ ԵԱՀԿ Մինսկի խմբի լուծարման համատեղ դիմումով Հայաստանի իշխանությունները սեփական ձեռքերով վերացրին այն միակ միջազգային ձևաչափը, որի մանդատը հենց այդ հակամարտության կարգավորումն էր: Մարդու իրավունքների պաշտպաններն ու միջազգայնագետները սա արդարացիորեն գնահատում են որպես 2023 թվականի էթնիկ զտման և բռնի տեղահանման հետին թվով օրինականացում:

Երկրորդ, ծանրագույն հարվածը միջազգային դատական հայցերի հետկանչման պարտավորությունն է: Հայաստանը հանձն է առնում դուրս բերել ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանում և այլ ատյաններում ընդդեմ Ադրբեջանի ընթացող հայցերը: Սա նշանակում է կամավոր հրաժարում Բաքվին իրավական պատասխանատվության ենթարկելուց՝ էթնիկ զտումների, ռազմագերիների խոշտանգումների, ապօրինի կալանավորումների և մշակութային վանդալիզմի համար:

Երրորդը ռազմավարական կարևորություն ունեցող Սյունիքի միջանցքի երկարաժամկետ օտարումն է: ԱՄՆ-ին 99 տարով տրված բացառիկ զարգացման իրավունքը, թեև ձևականորեն չի չեղարկում Հայաստանի ինքնիշխանությունը, սակայն կտրուկ սահմանափակում է պետության վերահսկողությունը սեփական տարածքի ամենազգայուն հատվածում՝ Իրանի հետ սահմանին: Սահմանային հսկողությունը «մասնավոր օպերատորին» հանձնելու մշուշոտ բանաձևը մնում է նոր հակամարտությունների աղբյուր, քանի որ Բաքուն մերժում է հայկական սահմանապահների ներկայությունը, իսկ ադրբեջանական կողմի ներկայությունը կործանարար է Հայաստանի համար:

Չորրորդ ռիսկը սահմանից երրորդ երկրների ուժերի դուրսբերման պահանջն է: Թեև այն առաջին հերթին ուղղված է ռուսական ներկայության դեմ, այն լուրջ հարցականի տակ է դնում նաև Եվրոպական միության դիտորդական առաքելության (EUMA) հետագա գործունեությունը: Արդյունքում Հայաստանը զրկվում է սահմանին միջազգային «արտաքին աչք» ունենալուց՝ փոխարենը չստանալով անվտանգության որևէ այլընտրանքային երաշխիք:

Վերջապես, տեղի է ունեցել բանակցային օրակարգի աղետալի նեղացում: Այն ամենը, ինչ մնացել է չստորագրված, Ադրբեջանի թելադրանքով այժմ ձևակերպված է ոչ թե որպես երկկողմ փոխզիջման առարկա, այլ որպես Հայաստանի «ներքին պարտականություն», մասնավորապես՝ Սահմանադրության փոփոխության պահանջ:

Այս գործընթացի ամենակայուն ու անփոփոխ տարրն Ադրբեջանի չդադարող սպառնալիքներն ու անհագ պահանջներն են: Վաշինգտոնյան բեմադրությունը ոչ թե չեզոքացրեց դրանք, այլ պարզապես վերափաթեթավորեց ու միջազգային հանրությանը մատուցեց որպես «խաղաղության նախապայմաններ»:

Բաքվի կառուցվածքային պահանջների կիզակետում Հայաստանի Սահմանադրության փոփոխությունն է: Ալիևը Վաշինգտոնից հետո անմիջապես կրկնեց իր վերջնագիրը. պայմանագիրը չի ստորագրվի, քանի դեռ ՀՀ Մայր օրենքի նախաբանում հղում կա 1990 թ. Անկախության հռչակագրին: 2026 թ. փետրվարին նա բացահայտ հայտարարեց. «Հենց որ փոփոխությունը կատարվի, պայմանագիրը կարող ենք ստորագրել հենց հաջորդ օրը»: Իրավական առումով սա բացարձակ ավելորդություն է, քանի որ նախաստորագրված հոդված II-ն արդեն իսկ արգելում է տարածքային պահանջները, իսկ Վիեննայի կոնվենցիայով միջազգային պայմանագիրն ունի գերակայություն ներպետական օրենքների նկատմամբ: Քաղաքական տեսանկյունից սա Հայաստանի ներքին ինքնիշխանության վրա արտաքին վետո դնելու բացահայտ փորձ է: Թեև ՀՀ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ Մայր օրենքը տարածքային պահանջ չի պարունակում, Հայաստանի իշխանությունները, ընկրկելով Բաքվի ճնշման տակ, պատրաստում են նոր Սահմանադրություն՝ հանրաքվեն պլանավորելով 2027 թվականին: Սակայն 2026-ի ընտրություններից հետո չունենալով 2/3 մեծամասնություն՝ հանրաքվեի հնարավոր ձախողումը Բաքվին կտա նոր լեգիտիմ «հիմնավորում»՝ Հայաստանին «պարտավորությունները չկատարելու» մեջ մեղադրելու և նոր ագրեսիա սկսելու համար:

Մյուս առանցքային պահանջը Սյունիքով անցնող միջանցքն է՝ առանց հայկական վերահսկողության: Ալիևը շարունակում է օգտագործել «Զանգեզուրի միջանցք» թեզը նույնիսկ TRIPP անվան տակ: 2025 թ. օգոստոսի 26-ին «Al Arabiya»-ին տված հարցազրույցում նա պնդեց, թե ադրբեջանցիները Նախիջևան մեկնելիս «չպետք է իրենց անապահով զգան» և որ իրենք «միայն Հայաստանի վրա հույս դնել չեն կարող»: Սա ուղղակիորեն հարվածում է Հայաստանի ինքնիշխանությանն ու սահմանային հսկողության սկզբունքին: Սրան գումարվում են անկլավների վերադարձի միակողմանի պահանջները (մոտ 45 կմ²), այն դեպքում, երբ հայկական Արծվաշենն ու Հայաստանի օկուպացված 200+ կմ² տարածքները Բաքուն հրաժարվում է վերադարձնել: Ալիևը մերժել է նաև ռազմագերիների ներումը՝ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության ապո-

րինի դատավարությունները ծաղրաբար համեմատելով Նյուրնբերգյան տրիբունալի հետ, իսկ արցախահայության վերադարձի իրավունքը շաղկապել է, այսպես կոչված, «Արևմտյան Ադրբեջանի» կեղծ օրակարգի հետ:

«Արևմտյան Ադրբեջանի» հետևողականորեն հետապնդվող իրրեդենտիստական նախագիծը փաստում է Բաքվի իրական մտադրությունների մասին: Չնայած խաղաղության մասին կեղծ հայտարարություններին՝ Ալիևի վարչակազմը պաշտոնապես ու ֆինանսապես հովանավորում է Հայաստանի ամբողջ տարածքը «պատմական ադրբեջանական հող» ներկայացնելու և մինչև 300 000 ադրբեջանցիների «վերադարձի» քարոզարշավը: Սա բացարձակապես անհամատեղելի է խաղաղության տրամաբանության հետ. Ադրբեջանը պահանջում է փոխել Հայաստանի Սահմանադրությունը՝ զուգահեռաբար պահպանելով տարածքային հավակնություններն ամբողջ Հայաստանի նկատմամբ:

Ադրբեջանի ուղղակի սպառնալիքներն ունեն ինչպես պատմական («Հայաստանը պետք է ընդունի մեր պայմանները, եթե ցանկանում է հանգիստ ապրել 29.000 քառ. կմ-ի վրա»), այնպես էլ հետվաշինգտոնյան շերտ: Վերջինս ավելի վտանգավոր է, քանի որ քողարկվում է «խաղաղության պաշտպանությամբ»: Ալիևը բացահայտ սպառնում է, որ Վաշինգտոնյան համաձայնությունից շեղվելու դեպքում Հայաստանը կվնասի իր հարաբերությունները ԱՄՆ-ի հետ, և հայտարարում. «Եթե Հայաստանը դադարի ճանաչել մեր սահմանները, մենք էլ կդադարենք ճանաչել իրենցը: Եվ թե ով կհաղթի այդ սցենարի գործադրման դեպքում՝ պատասխանն ակնհայտ է»:

Գործնականում սա հարկադրանքային դիվանագիտություն է (coercive diplomacy), որտեղ սպառնալիքն ինքնին քաղաքական արդյունք է ապահովում առանց մեկ կրակոցի: Ինչպես Տավուշի հատվածում գյուղերի հանձնման ժամանակ, Փաշինյանի իշխանությունը սեփական զիջումները հանրությանը մատուցում է որպես «պատերազմից խուսափելու» միակ միջոց, ինչն Ադրբեջանին թույլ է տալիս անվերջանալի վերջնագրերով կորզել նորանոր տարածքային ու քաղաքական զիջումներ:

2026 թվականի օգոստոսի 8-ին տեղի ունեցած հեռախոսազանգերի շարքը, երբ Ն. Փաշինյանը զանգահարեց Ի. Ալիևին ու Դ. Թրամփին, իսկ Դ. Թրամփն էլ իր հերթին խոսեց Ի. Ալիևի հետ, պատահական շնորհավորական դիվանագիտություն չէր: Սա հաշվարկված քայլերի շղթա էր, որն ուներ հստակ նպատակներ: Առաջին հերթին, հայկական ու ադրբեջանական կողմերը փորձում են Դ. Թրամփին անձամբ կապված պահել այս գործընթացին: Քանի որ ԱՄՆ-ում մոտենում են միջանկյալ ընտրությունները, իսկ Դ. Թրամփի վարչակազմը ներքաշված է Իրանի շուրջ խորացող ճգնաժամում, Հարավային Կովկասը նրա համար մնում է սակավաթիվ «մաքուր» արտաքին քաղաքական հաջողություններից մեկը: Դ. Թրամփին Նոբելյան խաղաղության մրցանակի

համատեղ առաջադրումը և տարելիցի զանգերը ծառայում են հենց այդ անձնական քաղաքական կապն ամրապնդելուն, քանի որ երկու կողմերն էլ հասկանում են՝ գործընթացը կենդանի է միայն այնքան ժամանակ, քանի դեռ այն հանդիսանում է Դ. Թրամփի անձնական «հաջողության պատմությունը»:

Բացի այդ, սրանով փորձ է արվում հանրային տիրույթում ամրապնդել «խաղաղությունն արդեն կա» կեղծ թեզը: Եթե խաղաղությունը հայտարարվում է կայացած փաստ, ապա չստորագրված պայմանագիրը ներկայացվում է որպես ձևականություն, իսկ Բաքվի անհագ պահանջները՝ «տեխնիկական մանրամասներ»: Սա Ն. Փաշինյանին անհրաժեշտ է ներքին լեգիտիմությունը պահելու համար, իսկ Ի. Ալիևին թույլ է տալիս ստորագրման լծակը պահել իր ձեռքում: Զանգերի գործառնական բուն նպատակն էր TRIPP-ի («Թրամփի ուղու») շինարարության մեկնարկի վերահաստատումը թղթից գետնին տեղափոխելը: Քանի որ Ադրբեջանն իր տարածքում ենթակառուցվածքն արդեն կառուցել է, հայկական հատվածում հապաղումը Բաքվին նոր հնարավորություն կտար Վաշինգտոնի առջև Երևանին մեղադրելու «Թրամփի նախագիծը խափանելու» մեջ: Հունիսյան ընտրություններից հետո թուլացած մեծամասնություն ստացած Ն. Փաշինյանի համար սա նաև ներքին ազդանշան էր սեփական ընտրազանգվածին, թե իբր «խաղաղության գիծն աշխատում է»: Վերջապես, սա Հայաստանի համար Ադրբեջանին ամերիկյան ազդեցության շրջանակում պահելու փխրուն փորձ է. եթե Ի. Ալիևը մնում է Դ. Թրամփի նախագծի մաս, նրա համար ռազմական նոր էսկալացիան դառնում է քաղաքականապես ավելի ծախսատար:

Այս ամենը տեղի է ունենում մի իրավիճակում, երբ Հարավային Կովկասը 2025-2026 թվականներին վերածվել է մեծ տերությունների միջանցքային պատերազմի թատերաբեմի: Վաշինգտոնը փոխարինել է Մոսկվային՝ դառնալով արտաքին գլխավոր կարգավորիչ, որտեղ TRIPP-ի 99-ամյա իրավունքը և 201 մլն դոլարանոց ֆոնդը ծառայում են որպես ամերիկյան երկարաժամկետ խարիսխ: Սակայն ռիսկն այն է, որ ամերիկյան ուշադրությունը չափազանց անձնավորված է Դ. Թրամփի ֆիգուրով և կախված

է ԱՄՆ ներքին քաղաքականությունից ու Իրանի շուրջ զարգացումներից: Ռուսաստանը, թեև կորցրել է միջնորդի մենաշնորհը, չի հեռացել տարածաշրջանից: Մոսկվան վերականգնել է հարաբերությունները Բաքվի հետ և պահպանում է էներգետիկ ու տնտեսական լծակներ Հայաստանի նկատմամբ՝ խափանելով վաշինգտոնյան ձևաչափը:

Իրանի համար Սյունիքում ամերիկյան ներկայությունը և TRIPP-ի անցնելը իրանական սահմանի անմիջական հարևանությամբ կրկնակի սպառնալիք է՝ դեպի հյուսիս ֆիզիկական կապի կորուստ և ամերիկյան հետախուզական ներուժի հայտնվել իր դարպասների մոտ: Չնայած Հայաստանի իշխանությունների վստահեցումներին, իրանցի մասնագետները Կապանում փակ քննարկումների ժամանակ վերահաստատել են իրենց լուրջ մտահոգությունները, իսկ ԱՄՆ-Իրան հնարավոր ռազմական առճակատման դեպքում TRIPP-ը կարող է վերածվել ուղղակի ռազմական թիրախի: Մյուս կողմից, Թուրքիան Ադրբեջանի ռազմավարական թիկունքն է, և Հայաստան–Թուրքիա սահմանի բացումը Անկարան կապել է նույն սահմանադրական փոփոխությունների հետ, ինչ պահանջում է Բաքուն: Չինաստանը, շահագրգռված լինելով Ռուսաստանը և Իրանը շրջանցող «Միջին միջանցքով», Հայաստանին տալիս է տնտեսական հնարավորություն, բայց միաժամանակ ներքաշում ԱՄՆ-Չինաստան գլոբալ մրցակցության մեջ: Իսկ Բաքու-Թել Ավիվ ռազմատեխնիկական դաշինքը շարունակում է սահմանափակել Երևանի հնարավորությունները՝ Արևմուտքում Ադրբեջանի նկատմամբ իրավական ճնշում բանեցնելու հարցում: Արդյունքում Հայաստանը հայտնվել է «հավասարակշռված» քաղաքականություն վարելու անհնարինության առջև. TRIPP-ը, ԵԱՏՄ անդամակցությունը, իրանական սահմանն ու եվրոպական օրակարգը միաժամանակ պահպանելն անհամատեղելի են, և Երևանը վերածվել է միջանցքային պետության՝ առանց որևէ անվտանգային պայմանագրի:

Այս իրավիճակում Հայաստանի առջև ծառացած ռիսկերի քարտեզը ծայրահանդիպական է: Առաջինն ու ամենամեծ հավանականությունն այն է, որ չստորագրված պայմանագիրը Բաքվի ձեռքին կմնա որպես մշտական լծակ: Սահմանադրության փոփոխությունից հետո Ադրբեջանը կառաջադրի նորանոր պահանջներ՝ անկլավներ, «Արևմտյան Ադրբեջան» և պետական տարբերանշանների փոփոխություն: Երկրորդ ռիսկը 2027 թ. սահմանադրական հանրաքվեի հնարավոր ձախողումն է, քանի որ հասարակությունը դա ընկալում է որպես Ի. Ալիևի թելադրանքով գրվող Մայր օրենք, ինչը Բաքվին հնարավորություն կտա վերադառնալու ուղղակի սպառնալիքներին: Երրորդը TRIPP-ի կառավարման երկիմաստությունն է. եթե «մասնավոր օպերատորը» հայ սահմանապահներին դուրս մղի, Հայաստանի ինքնիշխանությունը կդառնա ձևական, իսկ լիարժեք հսկողություն պահանջելու դեպքում Բաքուն Երևանին կմեղադրի պայմանավորվածությունը խախտելու մեջ:

Չորրորդ ռիսկն արդեն իսկ իրականություն դարձած փաստ է. Հայաստանի օկուպացված 200–241 կմ² տարածքների վերադարձի հարցը սառեցված է, և սահմանազատումը կարող է այդ օկուպացիան վերածել «նոր սահմանի»: Հինգերորդը իրանական հնարավոր հակազդեցությունն է. ԱՄՆ-Իրան բախման դեպքում Սյունիքը կհայտնվի երկու կրակի միջև՝ առանց հակաօդային պաշտպանության: Վեցերորդը ռուսական հնարավոր խափանումն է՝ գազի գնի, ԵԱՏՄ ճնշումների կամ ներքաղաքական միջամտության տեսքով: Յոթերորդը կառուցվածքային ամենամեծ ռիսկն է՝ անվտանգության որևէ իրավական երաշխիքի բացակայությունը, քանի որ ամերիկյան ներկայությունը զուտ քաղաքական է, այլ ոչ դաշնակցային, և Դ. Թրամփի ուշադրության շեղվելուն պես զսպման մեխանիզմը կվերանա: Ութերորդը ներքին խորացող բևեռացումն է «պատերազմից խուսափելու» և «կապիտուլյացիայի» թեզերի միջև, ինչը թուլացնում է պետության դիմադրողականությունը: Եվ իններորդը իրավական անպատժելիության նախադեպն է. դատական հայցերից հրաժարումն ու Մինսկի խմբի լուծարումն աշխարհին ուղերձ հղեցին, որ ուժի կիրառմամբ ձևավորված իրողությունները կարող են օրինականացվել:

Վաշինգտոնյան փաստաթուղթը ոչ խաղաղության պայմանագիր է, ոչ էլ դասական կապիտուլյացիայի ակտ. այն անհավասար զինադադարի ինստիտուցիոնալացում է ամերիկյան հովանու ներքո: Մեկ տարում Հայաստանը ստացել է կրակոցների ժամանակավոր դադար, ԱՄՆ քաղաքական ներգրավվածություն, տարանցման մասնակի բացում և TRIPP-ի չիրականացված խոստում: Փոխարենը Հայաստանը զրկվել կամ կամովին հրաժարվել է Արցախյան հարցի միջազգային-իրավական շրջանակից, դատական գործիքներից, սահմանների արտաքին դիտարկումից և Սյունիքի ռազմավարական հատվածի նկատմամբ լիարժեք վերահսկողությունից: Ադրբեջանը չի հրաժարվել սպառնալիքներից, այլ դրանք թարգմանել է «նախապայմանների» լեզվի:

Փաստացի, Ն. Փաշինյանի 2026 թ. օգոստոսի 8-ի զանգերն այս համակարգի սպասարկումն էին՝ պահել Դ. Թրամփին որպես երաշխավոր, հայտարարել, թե խաղաղությունն արդեն կա, և արագացնել TRIPP-ի իրականացումը:

Հայաստանի գլխավոր ռազմավարական հարցն այժմ այն է, թե արդյո՞ք այս փխրուն ու իրավաբանորեն չձևակերպված կարգավորումը կարող է վերածվել ինքնիշխանության պահպանմամբ երկարաժամկետ կարգի, թե այն դառնալու է պետականության աստիճանական լուծարման մեխանիզմ: Պատասխանը կախված է սեփական անվտանգային կարողությունների վերականգնումից, որովհետև ոչ հոչակագրերը, ոչ Դ. Թրամփի անունը և ոչ էլ Նոբելյան մրցանակի առաջադրումը չեն կարող փոխարինել այն հիմնարար ճշմարտությանը, որ անվտանգության միակ իրական երաշխիքը սեփական ուժն է: ■

Փաշինյանական իշխանությունը որպես Հայաստանի գլխին կախված դամոկլյան սուր

Անի Մելքոնյան
Պատմաբան

Ինչպես գրել էինք «Դրոշակի» սույն թվակա-նի հունիս ամսվա համարում. «Հայաստանի Հանրապետության ժողովուրդն ու ընդդիմադիր քա-ղաքական ուժերն ունեն մեկ տարուց էլ քիչ ժամանակ դեպի անդունդ սլացքը կասեցնելու և Հայաստանի Հանրապետության լուծարումը կանխելու համար՝ հապաղելը, ուշացումը կամ նախկին սխալների ան-դադար կրկնումը կարող են Հայաստանի համար ողբերգական 2027-ի արժանանալ, հետևաբար պետք է գործել արագ և հնարավորինս արդյունավետ, քանի դեռ հավանականություն կա կանխելու անդառնա-լի և ճակատագրական կորուստները»:[1] Այն, որ այս մտահոգությունն արդարացված էր, ապացուցում են վերջին օրերին փաշինյանական ոչ լեգիտիմ իշխանու-թյան գործողություններն ու հայտարարությունները:

Եկեղեցու դեմ ուղղված ատելության ու թշնամա-նքի արշավին (որի մասին արդեն խոսել ենք), ար-ցախցիների, ընդդիմադիրների, և ռուսաստանցի հայ գործարարների նկատմամբ ատելության փաշինյա-նական խոսույթին հաջորդեց հավաքական Սփյուռքի նկատմամբ ատելության խոսքն ու Հայաստան-Սփյուռք շահերի արհեստական հակադրումը:

ՔՊ կուսակցության պատգամավորի խոսքն այն մասին թե. «Սփյուռքը պետք է անի այն, ինչ Հայաս-տանը կխնդրի»,[2] նպատակ ուներ տպավորություն ստեղծելու, թե մինչ այս Սփյուռքը չի արել այն, ինչ Հայաստանից են խնդրել, շարժվում է միայն իր շա-հերով և օրակարգով, ինչը հակասում է Հայաստանի շահերին: Զարգացնելով այս թեզը, նույն պատգա-մավորը պնդում է թե. «Եթե Սփյուռքը հզորանա, Հայաստանը կթուլանա. Սփյուռքը պիտի թուլանա, որ Հայաստանն ուժեղանա»:[3] Իրականությունն այն է, սակայն, որ անկախ Հայաստանի գոյության ողջ ընթացքում որքան ուժեղ է եղել Սփյուռքը, այնքան ավելի ամուր են եղել Հայաստանի դիրքերը մի-ջազգային ասպարեզում:

Ինչևէ, Սփյուռքի դեմ սկսված ատելության արշա-վը, առայժմ մի կողմ թողնենք և խոսենք ՀՀ-ի համար գոյութենական նշանակություն ունեցող Տիգրանաշե-նից:

Սկսած 2021-ից բազմիցս զգուշացրել ենք, որ փա-շինյանական զիջողական քաղաքականության հետև-անքով սև ամպեր են կուտակվում ինչպես Մեղրիի մի-ջանցքի, այնպես էլ ոչ պակաս կարևոր ռազմավարա-կան նշանակություն ունեցող Տիգրանաշենի գլխին:

Ընդամենը օրեր առաջ՝ Հայաստանի վարչապե-տի աթոռը զբաղեցնողը հայտարարեց. «Քյարքին Հայաստանի տարածք չէ»:[4] Հայկական Տիգրանա-շենից հրաժարվելու և այն թուրքական «Քյարքի»

հայտատարելու փաշինյանական «իրավական հիմ-նավորումը» Ալմա-Աթայի հռչակագիրն է, որով հետխորհրդային երկրները ճանաչում են միմյանց տարածքային ամբողջականությունը: Սակայն, այս-տեղ ևս, Փաշինյանը ստում է, որովհետև 1991 թ. դեկ-տեմբերին կնքված Ալմա-Աթայի հռչակագրով ան-կախանալու պահին փաստացի գոյություն ունեցող տարածքներում հետխորհրդային անկախ պետու-թյունների ճանաչումը չի ամրագրում Հայաստանի Հանրապետության 29.743 կամ Ադրբեջանի 86.600 քառ. կմ տարածք: Նշյալ հռչակագրում, կնքման պա-հին, անկախացող պետությունների փաստացի տի-րապետության տակ գտնվող տարածքներում, այդ պետությունների անկախության ճանաչումն է: Ըստ այդմ, 1991 թ. դեկտեմբերին, Ալմա-Աթայի հռչակագրի կնքման պահին՝ ինչպես Տիգրանաշենը, այնպես էլ Արծվաշենը գտնվում էին Հայաստանի Հանրապե-տության կողմից փաստացի տիրապետվող տա-րածքում, որն էլ ճանաչվել է Փաշինյանի այդքան սի-րած Ալմա-Աթայի հռչակագրով:

Ի դեպ, այդ հռչակագրի կնքման պահին Արցախը նույնպես չի գտնվել Ադրբեջանի կողմից փաստացի տիրապետվող տարածքում քանզի, ինչպես հիշում ենք, 1988 թ. հունիսի 12-ին ԼՂԻՄ Մարզխորհրդի որոշմամբ՝ ԼՂԻՄ-ը դուրս էր եկել Խորհրդային Ադր-բեջանի կազմից և առանձին ինքնավար մարզի կար-գավիճակով մտել ԽՍՀՄ կազմի մեջ, իսկ 1991 թ. սեպ-

Տիգրանաշեն գյուղը

տեմբերի 2-ին՝ հանրաքվեով անկախացել ԽՍՀՄ-ից, հետևաբար, ոչ Արցախը, ոչ էլ Տիգրանաշենը, որևէ կապ չունեն Ադրբեջանի տարածքային ամբողջականության հետ, իսկ Արծվաշենն ու Տիգրանաշենը ՀՀ միջազգայնորեն ճանաչված տարածքներ են:

Հետևաբար, Տիգրանաշենը Ադրբեջանին փոխանցելու փաշինյանական արդեն ակնհայտ մտադրությունը, հերթական դավաճանական գործողությունն է Հայաստանի Հանրապետության դեմ, քանի որ ստանալով Տիգրանաշենը՝ Ադրբեջանը Սյունիքն ու Վայոց Ձորը կկտրի Երևանից, կհայաթափվեն Արարատի մարզի տասնյակ գյուղեր, և թշնամին կհայտնվի Երևանի դարպասների մոտ:

Իսկ Ադրբեջանի կողմից «Արծվաշենը ՀՀ-ին վերադարձնելու» փաշինյանական հավաստիացումները ներքին լսարանին մոլորեցնելու համար են:

Եթե նույնիսկ Ադրբեջանը «բարի կամք դրսևորի» և վերադարձնի Արծվաշենը, այն չունի Տիգրանաշենի ռազմավարական նշանակությունը, և չի կարող կատարել այն դերը, որը կատարում է Տիգրանաշենը: Սա, իհարկե չի նշանակում, որ մենք դեմ ենք, որ ՀՀ միջազգայնորեն ճանաչված տարածք Արծվաշենը վերադառնա ՀՀ կազմ, բայց Ադրբեջանը պարտավոր է վերադարձնել իր կողմից օկուպացված Արծվաշենը, առանց դրա դիմաց, որևէ բան պահանջելու:

TRIP-ի անվան տակ, Մեղրիի միջանցքի հանձնմանը զուգահեռ նաև Տիգրանաշենի հանձնումը, կնշանակի տապանաքար դնել Հայաստանի Հանրապետության վրա: Սա, իհարկե, Փաշինյանը շատ լավ հասկանում է, և արդեն բացահայտ հրաժարվելով Տիգրանաշենից այլևս չի թաքցնում ՀՀ-ն լուծարելու իր մտադրությունը, որի մասին խոսեց օրեր առաջ «չորրորդ հանրապետություն» մոլորեցնող եզրույթով:

Օգոստոսի 24-ին ՀՀ անկախության հռչակագրի ընդունման 36-րդ տարեդարձին հաջորդող օրը՝ նա հայտարարեց. «Չորրորդ Հանրապետությունը հիմնադրված է, Չորրորդ Հանրապետությունն իրականություն է:... Ինչ վերաբերում է նոր Սահմանադրության տեքստին՝ այն կհրապարակենք առաջիկա ամիսների ընթացքում, և ինչպես ասել եմ՝ 1990 թվականի անկախության հռչակագրին նոր Սահմանադրության մեջ հողում չպետք է լինի...»:[5]

Իսկ ի՞նչ է Փաշինյանի երևակայած «չորրորդ հանրապետությունը» - ընդամենը վարչատարածքային միավոր, որտեղ չեն խոսի Արցախի մասին, որտեղ մոռացության կտան Հայոց ցեղասպանությունը, և որտեղ արտաքին ու ներքին քաղաքականությունը, արժեհամակարգը, կյանքի որակն ու ապրելակերպը կթելադրվեն Բաքվից, իսկ չհնազանդվողները կբանտարկվեն կամ ֆիզիկական հաշվեհարդարի կենթարկվեն: Ասվածի վկայությունը Փաշինյանի՝ նույն օգոստոսի 24-ի ելույթն է.

«Մենք որոշեցինք, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը չի լինելու մեր արտաքին քաղաքական օրակարգում»:[6] Մինչդեռ ՀՀ-ին քաղաքական կշիռ տվող և գործոն դարձնող երկու կարևորագույն օրակարգեր կային՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և հատուցման ու Արցախի ինքնորոշման իրավունքի օրակարգերը, երկուսից էլ փաշինյանական իշխանությունը հրաժարվում է՝ ՀՀ արտաքին քաղաքական օրակարգը հարմարեցնելով Թուրքիայի և Ադրբեջանի շահերին ու քմահաճույքներին:

Իսկ ինչ վերաբերում է աշխարհի շատ երկրներում, Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր հռչակված ապրիլի 24-ին, ապա, ըստ ՀՀ վարչապետի աթոռը զբաղեցնողի, եթե մտածենք թե «դա

զենք է նաև մեր ձեռքին, այդ զենքի կրակոցից էլի ու էլի մենք ենք զոհվել, էլի ու էլի մենք ենք զոհվելու»:[7] Այլ կերպ ասած, Հայաստանի այսպես կոչված ղեկավարը, ոչ բաց ենթատեքստով՝ Հայոց ցեղասպանության զոհերի ժառանգ ՀՀ քաղաքացիներին սպառնում է Թուրքիային որևէ պահանջ չներկայացնել:

Մեր սրբադասված նահատակների մասին էլ նա ձևակերպում է անում թե. «Միջազգային խաղացողները, մեր նահատակների մասունքներով իրար գլխի բամփում են»:[8] Այսինքն՝ Հայոց ցեղասպանության զոհերի մասունքները, որ մեզ համար սրբություն են և սրբադասված են, Հայաստանում թուրքական շահերի սպասարկուի համար «բամփելու» միջոց են, և պետք է մենք հրաժարվենք մեզ համար այդ սրբազան հիշատակումից ու մեր ազգային խախտված իրավունքների միջազգային ճանաչման համար պայքարից, որ դրանով Թուրքիայի «գլխին չբամփեն»:

Հարց է ծագում, գուցե Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումից Թուրքիայի «գլխացավերն» են այդքան հուզել և անհանգստացրել թուրքական շահերի անխոնջ պաշտպան Փաշինյանին:

Վերջինս այնքան խորն է հուզվել ու ցնցվել Թուրքիայի «գլխացավերից», որ հայ ժողովրդին ու թուրք ժողովրդին շփոթել է, և հայ ազգին խորհուրդ է տալիս. «Մենք չպետք է այլևս երազենք այլ հայրենիքի մասին, որովհետև Հայաստանի Հանրապետությունն է մեր երազանքների հայրենիքը….»,[8] ինչպես ասում են՝ մեկ բոպե պարոն Փաշինյան, ո՞վ է ասել, որ հայ ազգը, երբևէ այլ հայրենիքի մասին է երազել: Ո՛չ, հայ ազգը երազել ու երազում է ԻՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ մասին, քանզի հայ ազգը Ալթայի երկրամասում կամ միջինասիական անապատներում առաջացած թուրք ու թաթար (ադրբեջանցի) քոչվոր խառնամբոխ չէ, որ երազի այլ (այլոց) հայրենիքը զավթելու մասին:

Հայ ազգն ունի իր հայրենիքը՝ Հայակական Լեռնաշխարհը, և նվազագույնը 161.000 քառ կմ միջազգայնորեն ճանաչված տարածքով Հայաստանի Հանրապետություն, որի տարածքների մեծամասնությունը օկուպացված է Ադրբեջանի և Թուրքիայի կողմից, ինչի մասին, լռում եք:

Եթե խոսում ենք հայ ազգի երազանքների հայրենիք-պետության սահմանների մասին, ապա այն չպետք է փոքր լինի 161.000 քառ կմ-ից:

Իսկ ինչո՞ւ է «ինքնիշխանություն» ճառող և հակառուսական քաղաքական ուղեգիծ առաջ մղող փաշինյանական իշխանությունը փորձում հայ ժողովրդի վզին փաթաթել բոլշևիկյան Ռուսաստանի գծած կեղծ սահմանները, և թե ինչո՞ւ է Փաշինյանի համար խորհրդային ինչ-որ ենթադրյալ քարտեզ «աստվածաշնչյան ճշմարտություն», բայց 1920 թ. փետրվարի 24-ին Ազգերի լիգայի (ժամանակակից ՄԱԿ-ի նախորդը) Արցախի ու Նախիջևանի, որպես ՀՀ տարածք ճանաչող բանաձևը և Սևրի պայմանագիրն ու դրանից բխող Վիլսոնյան իրավարար վճիռը անհիշատակելի՝ կարծում ենք հասկանալի է, և խոսուն ապացույցը նրա, որ Փաշինյանը պանթուրքիստական քաղաքականության առաջամարտիկ է, իսկ նրա իշխանությունը Հայաստանի գլխին կախված դամոկլյան սուր:

Արդեն, անհերքելի փաստ է, որ Փաշինյանի իշխանության յուրաքանչյուր օրը վտանգավոր է ՀՀ գոյության համար, դրա մասին են վկայում նաև անվերահսկելի մահերը բանակում, ոչ մարտական պայմաններում՝ այսինքն՝ Հայաստանի պաշտպանական ուժի վերացումը «դժբախտ պատահարների» միջոցով՝ ՀՀ-ի դեմ փաշինյանական վարչակազմի հերթական կոլաբորացիոնիստական գործողություններից առաջ:

Եվ, եթե հայաստանյան ընդդիմադիր շրջանակները չարագացնեն իրենց գործողություններն ու ամիսների ընթացքում իշխանությունից չհեռացնեն փաշինյանական վարչակազմին, իրենք ևս կմնան Հայաստանի Հանրապետության լուծարման պատմական բեռի տակ, իսկ պատմության բեռը ամենածանրն է, որի տակից, ոչ ոք դեռևս չի կարողացել դուրս գալ: ■

Ծանոթագրություններ

1. https://www.arfd.am/wp-content/uploads/2026/07/%D4%B4%D6%80%D6%85%D5%B7%D5%A1%D5%AF-%D5%A9%D5%AB%D5%BE-6-2026%D5%A9.pdf
2. https://azg.am/news/%D5%A5%D5%A9%D5%A5-%D5%BD%D6%83%D5%B5%D5%B8%D6%82%D5%BC%D6%84%D5%A8-%D5%B0%D5%A6%D5%B8%D6%80%D5%A1%D5%B6%D5%A1-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%A8-%D5%AF%D5%A9%D5%B8%D6%82%D5%AC/
3. Նույնը;
4. https://news.am/hy/video/1056586
5. https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2026/08/24/Nikol-Pashinyan-Speech/
6. https://news.am/hy/video/1057272
7. Նույնը:
8. Նույնը:

TRIPP-ը և Իրանը. անվտանգային մտահոգություններ պատերազմի պայմաններում

Նարե Գևորգյան
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի դասախոս

TRIPP-ը Հայաստանի Հանրապետության հարավային տարածքով անցնող մոտավորապես 43 կիլոմետր երկարությամբ երկաթուղային և ավտոմոբիլային տրանսպորտային միջանցքի նախագիծ է, որի նպատակն է վերականգնել Ադրբեջանի և Նախիջևանի Ինքնավար Հանրապետության միջև կապը: Նախագիծը ձևավորվել է 2025 թվականի օգոստոսի 8-ին Վաշինգտոնում կայացած եռակողմ (Հայաստան–Ադրբեջան–ԱՄՆ) համաձայնագրի շրջանակներում և նախատեսում է ամերիկյան կողմի գերակշիռ մասնակցությունը այս ընկերությունում: Իրանի համար այս նախաձեռնությունն ի սկզբանե կրել է երկիմաստ բնույթ. մի կողմից՝ Թեհրանը պայմանականորեն ողջունել է տրանսպորտային ուղիների ապաշրջափակումը և տնտեսական հնարավորությունների ընդլայնումը որպես տարածաշրջանային կայունությանը նպաստող գործոն, մյուս կողմից՝ այն ընկալվել է որպես սպառնալիք Իրանի տարանցիկ դերին և տարածաշրջանային ազդեցությանը:

2026 թվականի փետրվարից ծավալված ռազմական հակամարտությունն էապես սրել է Իրանի այս ընկալումները՝ TRIPP-ը վերածելով անվտանգային դիսկուրսի առանցքային տարրի:

ԻԻՀ-ի դիրքորոշումը հիմնվում է մի քանի փոխկապակցված գործոնների վրա:

Առաջին հերթին, Թեհրանը մտահոգված է ամերիկյան ներկայության հնարավոր ընդլայնմամբ իր հյուսիսային սահմանի անմիջական հարևանությամբ: Պաշտոնական շրջանակներում պարբերաբար ընդգծվում է, որ տնտեսական նախագիծը կարող է վերափոխվել անվտանգային կամ հետախուզական բնույթի գործիքի, հատկապես՝ հաշվի առնելով ԱՄՆ-ի և Իրանի միջև երկարատև թշնամանքը:

Երկրորդ, TRIPP-ը դիտարկվում է որպես գործոն, որը կարող է նվազեցնել Իրանի աշխարհաքաղաքական լծակները Հարավային Կովկասում: Ավանդաբար Իրանը հանդիսացել է Ադրբեջան-Նախիջևան տարանցիկ ուղու կարևորագույն օղակներից մեկը: Նոր միջանցքի գործարկումը կարող է թուլացնել այդ դերը և սահմանափակել Թեհրանի կարողությունը՝ ազդելու տարածաշրջանային տրանսպորտային հոսքերի վրա:

Երրորդ, չնայած Հայաստանի իշխանությունների բազմաթիվ հավաստիացումներին, որ նախագիծը լիովին գործելու է Հայաստանի ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և իրավազորության շրջանակներում, Իրանում որոշ շրջանակներ շարունակում են այն նույնացնել նախկինում քննադատված, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցքի» հայեցակարգի հետ:

Իրանի բարձրաստիճան պաշտոնյաների հայտարարությունները վկայում են դիրքորոշման աստիճանական կոշտացման մասին: Ալի Աքբար Վելայաթին՝ Իրանի գերագույն առաջնորդի գլխավոր խորհրդականը, դեռևս 2025 թվականի վերջին և հետագայում բազմիցս ընդգծել է, որ TRIPP-ն էությամբ չի տարբերվում «Զանգեզուրի միջանցքից» և սպառնում է տարածաշրջանային անվտանգությանը:[1] Նա նախազգուշացրել է, որ նախագիծը կարող է հիմք ստեղծել ԱՄՆ-ի կամ ՆԱՏՕ-ի ռազմական ներկայության համար Իրանի հյուսիսային սահմանների երկայնքով և հայտարարել է, որ այն. «չի դառնա Թրամփի սեփականություն հանդիսացող անցուղի, այլ՝ գերեզմանատուն Թրամփի վարձկանների համար»: Իրանի ԱԳՆ խոսնակ Էսմայիլ Բաղաեին 2026 թվականի մայիսին ISNA գործակալությանը տված հարցազրույցում նշել է, որ Թեհրանը ողջունում է տնտեսական հարաբերությունների ընդլայնումն ու տրանսպորտային ուղիների ապաշրջափակումը, սակայն «խիստ կասկածամտությամբ է վերաբերվում ԱՄՆ-ի չարամիտ մտադրություններին» և հստակորեն դեմ է արտահայտվում ամերիկյան «ապակայունացնող ներկայությանը» Հարավային Կովկասում:[2] Հայաստանում Իրանի դեսպան Խալիլ Շիրոոլամին մի քանի անգամ հանրայնորեն անդրադարձել է հարցին: 2026 թվականի մարտին նա հայտարարել է, որ Հայաստանի

իշխանությունները հավաստիացրել են, թե նախագիծը չունի ռազմական կամ անվտանգային բաղադրիչ: Սակայն հուլիսին, արդեն հակամարտության պայմաններում, դեսպանը շեշտել է, որ Իրանի մտահոգությունները «շատ օրինական և տրամաբանական» են՝ հղում անելով ԱՄՆ-Իսրայել ռազմական արշավին, և որ անհրաժեշտ է մշակել մեխանիզմներ՝ ամերիկյան ներկայության հետ կապված ռիսկերը կառավարելու համար: 2026 թվականի օգոստոսին Իրանի զինվորական շրջանակներից հնչել են կոշտ գնահատականներ TRIPP-ի վերաբերյալ: Ըստ լրատվամիջոցների հաղորդումների՝ Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի ներկայացուցիչները հայտարարել են, որ Թեհրանը Հայաստանի հետ նախագծի շուրջ որևէ նախնական պայմանավորվածություն ձեռք չի բերել և որ այն, իր ներկայիս տեսքով, սպառնալիք է Իրանի սահմանային անվտանգության համար: Հատկապես շեշտվել է ամերիկյան ուժերի հնարավոր ներկայության անընդունելիությունը:

TRIPP-ի շուրջ Իրանի դիրքորոշման էվոլյուցիան պատերազմական պայմաններում բացահայտում է ոչ միայն անվտանգային մտահոգությունները, այլև ավելի խորքային կառուցվածքային փոփոխությունները Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական համակարգում: Նախագիծը, որն ի սկզբանե ներկայացվել է որպես տնտեսական և խաղաղարար նախաձեռնություն, Թեհրանի ընկալմամբ աստիճանաբար վերածվել է տարածաշրջանային ուժերի հարաբերակցության վերաձևակերպման գործիքի: Այս վերափոխումը հատկապես ակնհայտ է դարձել 2026 թվականի փետրվարից հետո, երբ ռազմական հակամարտությունը ստեղծեց նոր անվտանգային իրականություն, որում ցանկացած ամերիկյան մասնակցությամբ ենթակառուցվածք ընկալվում է որպես պոտենցիալ սպառնալիք: Իրանական մոտեցման առանձնահատկությունն այն է, որ այն համատեղում է պրագմատիկ և գաղափարական տարրեր: Պրագմատիկ առումով Թեհրանը չի մերժում տրանսպորտային ուղիների ապաշրջափակման գաղափարը, որպես այդպիսին, և նույնիսկ տեսնում է որոշակի տնտեսական հնարավորություններ Հայաստանի միջոցով: Սակայն գաղափարական և ռազմավարական մակարդակում նախագիծը դիտարկվում է որպես ԱՄՆ-ի տարածաշրջան ներթափանցման փորձ, որը կարող է երկարաժամկետ հեռանկարում սահմանափակել Իրանի մանևրելու ազատությունը: Այս երկակիությունը բացատրում է, թե ինչու են դիվանագիտական հայտարարությունները մնում զգուշավոր և պայմանական, մինչդեռ ռազմական և ռազմավարական շրջանակների գնահատականները՝ առավել կոշտ և անզիջում: Հատկանշական է նաև այն, որ պատերազմը ոչ թե ստեղծել է նոր մտահոգություններ, այլ ակտիվացրել և խորացրել է արդեն գոյություն ունեցողները: Մինչև հակամարտությունը Իրանի դիրքորոշումը հիմնականում կենտրոնանում



Իրանի Գերագույն Առաջնորդի գլխավոր խորհրդական Ալի Աքբար Վելայաթին և Իրանում ՀՀ դեսպան Գրիգոր Հակոբյանը

էր տարանցիկ դերի կորստի և սահմանային վերահսկողության հարցերի վրա: Հակամարտության սկսվելուց հետո այս մտահոգություններին ավելացավ անմիջական ռազմական սպառնալիքի ընկալումը, ինչը նախագիծը տեղափոխեց տնտեսականից անվտանգային հարթություն: Այս տեղափոխումն էականորեն բարդացնում է Հայաստանի փորձերը՝ համոզելու Թեհրանին, որ TRIPP-ը չի վտանգում նրա շահերը, քանի որ պատերազմական պայմաններում վստահության մակարդակը կտրուկ նվազում է: Այսպիսով, TRIPP-ը դառնում է կարևոր ցուցիչ այն բանի, թե ինչպես են մեծ տերությունների միջև առճակատումները վերաձևավորում տարածաշրջանային նախագծերի ընկալումը: Իրանի դեպքում նախագիծը վերածվել է ոչ միայն ենթակառուցվածքային հարցի, այլև ինքնիշխանության, անվտանգության և տարածաշրջանային կարգավիճակի պահպանման խորհրդանիշի: Այս համատեքստում Հայաստանի բազմավեկտոր քաղաքականությունը բախվում է լուրջ փորձության. անհրաժեշտ է միաժամանակ առաջ տանել արևմտյան ուղղությամբ ռազմավարական նախագիծ և պահպանել աշխատունակ հարաբերություններ Իրանի հետ՝ այն պայմաններում, երբ այդ երկու ուղղությունները գնալով ավելի են հակասում միմյանց:

Հղումներ

[1] https://en.irna.ir/news/86026219/Velayati-says-Trump-plan-for-Caucasus-mirrors-Zangezur-corridor

[2] https://en.isna.ir/news/1405030603597/Baghaei-to-ISNA-Iran-Firmly-Opposes-Destabilizing-US-Role-in

Հայաստանը և ՀԱՊԿ-ը մոտենում են անդարձելի կետին

Սարգիս Սարգսյան
Մոսկվայի Վ. Արծրունու անվան Սևծովյան-Կասպիական տարածաշրջանի ինստիտուտի առաջատար գիտաշխատող

2026 թվականի մայիսին ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը և ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոն Երևանում կայացած հանդիպման ժամանակ նախաստորագրեցին TRIPP (Trump Route for International Peace and Prosperity) նախագծի շուրջ ռազմավարական համագործակցության շրջանակային համաձայնագիր, Հայաստանի և Միացյալ Նահանգների միջև համապարփակ ռազմավարական գործընկերության կանոնադրություն և կարևորագույն հանքանյութերի և հազվագյուտ հողային տարրերի արդյունահանման և վերամշակման ոլորտում մատակարարումների ապահովման շրջանակային հուշագիրը: Արարողությունից հետո հայ նախարարը հայտարարեց, որ Հայաստանի և Միացյալ Նահանգների միջև համապարփակ ռազմավարական հարաբերությունները «այսօր ավելի ամուր են, քան երբևէ: Մենք մտել ենք պատմականորեն աննախադեպ փուլ: Միացյալ Նահանգների հետ ձեռք բերված բոլոր համաձայնագրերը օգտակար են Հայաստանի համար և աննախադեպ հնարավորություններ կբացեն երկրի համար»:

Լուրերը, որ Հայաստանի ԱՄՆ «արտասահմանյան» գործընկերոջ կարգավիճակը շուտով կբարձրանա «ռազմավարական» կարգավիճակի, շրջում էին դեռ 2023 թվականից: Համարյա միաժամանակ հանրապետության վարչապետը հայտարարեց ՀԱՊԿ-ից երկրի դուրս գալու մասին: Սակայն ընդգծենք, որ Հայաստան-ՀԱՊԿ համագործակցության ճգնաժամը չի առաջացել 2024 թ., և չի եղել 2023 թ. սեպտեմբերյան իրադարձությունների հետևանք:

Երևանի հեռանալը ՀԱՊԿ-ի հետ համագործակցությունից ավելի խորը արմատներ ունի: Հայաստանի և ՀԱՊԿ-ի միջև համագործակցության չեղարկումն արտացոլում է Հայաստանի արտաքին քաղաքականության ներկայիս իրողությունները և ստեղծում է նոր մարտահրավերներ Հարավային Կովկասում անվտանգության ապահովման համար:

2007 թ. դեկտեմբերի 25-ին ուժի մեջ մտած ՀՀ ռազմական դոկտրինի տեքստում, որը սահմանվում է որպես Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովման ռազմաքաղաքական, ռազմական-ռազմավարական, ռազմատնտեսական և ռազմատեխնիկական հիմունքները ներառող պաշտոնական հայեցակետերի համախումբ, նշվում է. «... ակտիվ և գործնական մասնակցությունը ՀԱՊԿ-ին և դրա ծրագրերին, անդամ պետությունների հետ երկկողմ ձևաչափով համագործակցությունը... միջազգային ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության առաջնահերթ ոլորտներ են»: Ընդգծենք, որ ՀՀ ռազմական դոկտրինը գործում է

և ուժի մեջ է: 2007 թվականին «Ռազմական դոկտրինի մասին» նախագահի հրամանագրի հաստատումից ի վեր փոխվել է գլոբալ և տարածաշրջանային աշխարհաքաղաքական իրավիճակը, և դրա հետ մեկտեղ՝ ազգային անվտանգությանը սպառնացող վտանգները:

Հիշենք, որ Հայաստանի մասնակցությունը ՀԱՊԿ-ի ձևավորմանը և զարգացմանը սկիզբ է առել 1992 թվականին ՀԱ պայմանագրի ստորագրումից: Երկրի անդամակցությունը կազմակերպությանը համապատասխանում էր 2000-ականների սկզբին Երևանի տարածաշրջանային և գլոբալ առաջնահերթություններին: Հանրապետության ակնկալիքները ՀԱՊԿ-ի շրջանակներում համագործակցության վերաբերյալ հիմնված էին ազգային շահերի վրա և ենթադրում էին գործընկերների աջակցությամբ անվտանգության ապահովում: ՀԱՊԿ-ում Հայաստանի առաջնահերթությունները չորսն էին՝

1. Ռազմատեխնիկական համագործակցություն. ռազմական տեխնիկայի գնում արտոնյալ պայմաններով:
2. Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորում:
3. Աջակցություն Հայաստանի դեմ ագրեսիայի դեպքում:

4. Տարածաշրջանում անվտանգությունն ապահովելու համար կոլեկտիվ մեխանիզմների, այդ թվում՝ խաղաղապահ արձագանքման ուժերի ստեղծում:

Հավաքական անվտանգության պայմանագրի ստորագրումից և ՀԱՊԿ ինստիտուցիոնալ կառուցվածքի ձևավորումից ի վեր Լեռնային Ղարաբաղի հարցը եղել է Հայաստանի քաղաքականության անկյունաքարը: Երևանը ձգտում էր ամրապնդել իր պաշտպանական կարողությունները, պաշտպանել իր տարածքային սահմանները և կանխել ռազմական գործողությունների վերսկսումը «Առաջին ղարաբաղյան պատերազմից» հետո: ՀԱՊԿ-ի հետ համագործակցությունից հեռանալու միտումը զուգահեռ էր Արևմուտքի հետ Հայաստանի կապերի զարգացմանը: 2018 թվականի «Գլխավոր քարտուղարի աթոռի ճգնաժամը» արտացոլեց ՀԱՊԿ անդամների միջև փոխըմբռնման պակասը, մինչդեռ Լեռնային Ղարաբաղում լարվածության սրացումը, որը թափ էր հավաքում 2016 թվականից ի վեր, թափ հաղորդեց նաև Հայաստանի աճող անվստահությանը կազմակերպության նկատմամբ:

2018 թվականին, երբ Նիկոլ Փաշինյանը իշխանության եկավ, ՀԱՊԿ-ից և Ռուսաստանից հեռանալու մտադրություններ իրականում չկային: 2020 թվականին Հայաստանի ղեկավարության հայտարարությունների ենթատեքստը փոխվեց: ՀԱՊԿ-ի քննադատությունը «ավելացրեց» Ռուսաստանի հետ հարաբերությունների վատթարացմանն ուղղված ընդհանուր միտումը: Դրան զուգահեռ Ռուսաստանի միջնորդությամբ 2020 թվականի նոյեմբերին եռակողմ համաձայնագրի կնքումը և «Երկրորդ ղարաբաղյան պատերազմից» հետո ռուսական խաղաղապահ զորախմբի (ՌԽԶ) տեղակայումը նպաստեցին տարածաշրջանում «անվտանգության վակուումի» շարունակական ընդլայնմանը: 2022 թվականին հայ-ադրբեջանական սահմանին տեղի ունեցած սրացումից հետո ՀԱՊԿ-ի միացյալ շտաբի աշխատանքային խումբը ժամանեց Հանրապետություն՝ իրավիճակը վերահսկելու համար: ՀԱՊԿ-ի աշխատանքային խմբին զուգահեռ, 2023 թվականի հունվարին հայ-ադրբեջանական սահմանին տեղակայվեց ԵՄ քաղաքացիական առաքելություն: Սակայն նրա մանդատը բավարար չէր հետագա սրացումը կանխելու համար, որը գագաթնակետին հասավ 2023 թվականի սեպտեմբերին: 2023 թվականի նոյեմբերին ՀԱՊԿ-ը մշակեց հայ-ադրբեջանական սահմանին իրավիճակը կայունացնելու միջոցառումների համալիր ծրագիր, սակայն պաշտոնական Երևանի խնդրանքով այս հարցը հանվեց օրակարգից: ՀԱՊԿ-ի օգնությունից հրաժարվելուն զուգընթաց՝ ԵՄ քաղաքացիական առաքելության մասնակիցների թվաքանակը մեծացավ (138-ից մինչև 209 անձնակազմ): Հայաստանի ՀԱՊԿ-ից հեռանալու վրա արտաքին քաղաքական հանգամանքներից բացի ազդել են նաև ներքաղաքական գործոններ: Դրանց ազդեցությունը նկատելի է պետական մակարդակով, Հայաստանի ղեկավարության հայտարարություններում և հասարակական կարծիքում: Հատկապես հետաքրքիր են Եվրասիական բարոմետրի կողմից 2017 և 2019 թվականներին անցկացված սոցիոլոգիական ուսումնասիրությունները: Դրանց արդյունքները արտացոլում են Հայաստանի ինտեգրացիոն տրամադրությունները և աշխարհաքաղաքական կողմնորոշումը ժամանակի ընթացքում (2012-2019): 2019 թվականի տվյալները նշանակալի են՝ հաշվի առնելով քաղաքական ղեկավարության փոփոխությունը 2018 թվականին: 2019 թվականին, հայ բնակչության ինտեգրացիոն կողմնորոշման ուսումնասիրության համաձայն, հարցվածների 15%-ը կողմ էր ՀԱՊԿ-ին Հայաստանի անդամակցությանը: Նմանատիպ գնահատական է ստացել նաև Հյուսիսատլանտյան վեկտորը: Այս արդյունքները 2024 թվականի ազգային և տարածաշրջանային

համատեքստում պրոյեկտելով՝ ՆԱՏՕ-ն փորձում է «նյութականացնել» Հայաստանի հիասթափությունը ՀԱՊԿ-ից՝ որպես անհուսալի գործընկերոջ, որը պատրաստ չէ օգնության ձեռք մեկնելու վճռորոշ պահին: Հայ-ռուսական հարաբերություններում ճգնաժամն իր հետքն է թողել. Ռուսաստանը կորցրել է հայ-ադրբեջանական խաղաղության գործընթացում մոդերատորի «բացառիկ դերը»: Քաղաքական գրավչության ուսումնասիրության արդյունքները 2012-2015 թվականներին արձանագրում են «եվրոպական համակրանքի» անկում (46%, 38%, 16%, 32%), իսկ ԱՊՀ երկրների նկատմամբ գրավչության բարձր ցուցանիշները (92%, 94%, 88%, 87%): 2017 թվականին այս ցուցանիշները հասել են համապատասխանաբար 34% և 76%-ի: Բարեկամության ինդեքսի առումով, հայ հասարակության կարծիքով կայուն առաջատարներն են Ռուսաստանը (73% 2017 թվականին) և Ֆրանսիան (33% 2017 թվականին): 2019 թվականից ի վեր «Focus» գործակալությունը ամեն տարի գնահատում է հայ բնակչության վստահության մակարդակը ՀԱՊԿ-ի նկատմամբ: 2023 թվականի հունվարին անցկացված հարցման համաձայն՝ հարցվածների 41.6%-ը կարծում էր, որ ՀԱՊԿ-ին անդամակցելը օգտակար է Հայաստանի համար՝ չնայած ղեկավարության քննադատությանը: Հայ-ադրբեջանական սահմանին ՀԱՊԿ առաքելության դերի վերաբերյալ ապրիլյան հարցման համաձայն՝ հարցվածների 47.8%-ը ՀԱՊԿ առաքելությունը, եթե, իհարկե, այն կայանա, բնութագրել է դրական: 2024 թվականի մայիսի 14-ին Կոպենհագենի ժողովրդավարությունների գագաթնաժողովում վարչապետ Ն. Փաշինյանը հայտարարեց. «...մենք այժմ պաշտոնապես ՀԱՊԿ անդամ ենք, բայց ես հայտարարեցի, որ սառեցրել ենք մեր մասնակցությունը»: Կազմակերպությանը մասնակցության սառեցման մասին հայտարարությունը Հայաստանի ղեկավարությունը արեց 2024 թվականի մարտին, իսկ մայիսին Երևանը դադարեցրեց ՀԱՊԿ-ի ֆինանսավորումը: Մեկ ամիս անց խաղադրույքները բարձրանում են, և հոետորաբանությունը ստանում է այլ երանգ. ղեկավարությունը հայտարարում է կազմակերպությունից հնարավոր դուրս գալու մասին: Նման հայտարարությունները պետք է դիտարկել Հայաստանի արտաքին քաղաքականության ընդհանուր դիվերսիֆիկացիայի և առաջնորդների հայտարարություններին նախորդող իրադարձությունների պրիզմայով: Հայաստանի համար ներկայիս ժամանակաշրջանը խաղաղության բանաձևի որոնման ժամանակաշրջան է: Հանրապետության հետագա քայլերը ՀԱՊԿ-ի հետ պայմանավորված կլինեն ներքին և արտաքին գործոններով: Թվում է, թե անհնար է հաղթահարել այս ճգնաժամը՝ առանց հայկական պետականության ներքին հիմքերը ամրապնդելու: Կառավարության և հասարակության միջև երկխոսությունը չափազանց կարևոր է այսօրվա պայմաններում: Ժողովրդական հիասթափությունը բաժանում է հայ հասարակությունը և մեծացնում անվստահությունը կառավարության նկատմամբ: Խաղաղության հիմքի կառուցումը, որն ունի ընդհանուր հայտարար, այդ թվում՝ ժողովրդի ձգտումները, նախապայման են հասարակության և պետության միջև անդունդի հետագա խորացումը կանխելու համար, որը ներկայացված է կառավարական ինստիտուտներով: Հաջորդ քայլը կարող է լինել սպառնալիքների վերանայումը և դրանց դեմ պայքարի ընդհանուր վեկտորի բացահայտումը տարածաշրջանային խաղացողների կողմից: Հայ-ադրբեջանական խաղաղության գործընթացը խոր ազդեցություն ունի: Դրա արդյունքները կորոշեն Հարավային Կովկասի զարգացման վեկտորը և տարածաշրջանային անվտանգության քաղաքականությունը:

Քաղաքական մտածողության հին հիմքերը վերաձևավորվում են կողմերի միջև: Երևանն ու Բաքուն ձգտում են կայուն խաղաղություն հաստատել տարածաշրջանում: Խաղաղության գործընթացին զուգահեռ որոշվում է նաև Հայաստանի արտաքին քաղաքականության ուղղությունը: Արևմտյան երկրների հետ մերձեցումը կշարունակի լարվածություն առաջացնել Հայաստանի և ՀԱՊԿ գործընկերների միջև: 2024 թվականի ամռանից սկսվեց ԵՄ-ԱՄՆ-Հայաստան շփումների ինտենսիվ ընթացք. Եվրոպական արտաքին գործողությունների ծառայության կառավարիչ տնօրեն Մայքլ Ջիբերտի այցից սկսած, մինչև ԱՄՆ պետքարտուղարի օգնական Ջոն Օ'Բրայենին այցը: Արևմտյան երկրների հետ Հայաստանի կա-

պերի համապարփակ ամրապնդման ուղղությունը թափ է հավաքում: Ռուսաստանի հետ հարաբերություններում կարևոր է բաց երկխոսությունը փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ: Ներկայումս էլ, վաղն էլ հայ-ռուսական համագործակցությանը այլընտրանք չկա: Ռուսաստանի ընտրությունը որպես Հարավային Կովկասում ապագա խաղաղության բանաձևի բաղադրիչ կնպաստի Մոսկվայի ազդեցության պահպանմանը տարածաշրջանում ուժերի հավասարակշռության վրա: Ներկայումս ՀԱՊԿ-ի նկատմամբ Հայաստանի քաղաքականության երեք հավանական ուղղություններն են հնարավոր՝ հոռետեսական սցենար, իրատեսական սցենար և լավատեսական սցենար: Համագործակցության զարգացման ուղղություններ՝ առաջին դեպքում Հայաստանի դուրս գալը ՀԱՊԿ-ից: Երկրորդ դեպքում՝ հեռավորության պահպանումը ՀԱՊԿ-ի հետ փոխազդեցություններում և Ռուսաստանի հետ հարաբերություններում: Երրորդ դեպքում՝ ՀԱՊԿ-ի հետ հարաբերություններում ճգնաժամի հաղթահարումը և Ռուսաստանի հետ համագործակցության ամրապնդումը:

Իրավիճակի ազդեցությունը Հայաստանի քաղաքական կուրսի վրա. հավանական է արտաքին քաղաքականության շարունակական դիվերսիֆիկացիա.

1. Ռուսաստանի հետ հարաբերությունների վատթարացում. ինչպիսի՞ն է 102-րդ ռազմաբազայի ապագան:
2. ԵՄ և ՆԱՏՕ-ի երկրների ներկայության ընդլայնում տարածաշրջանում:
3. Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) երկրների հետ հարաբերությունների վերանայումը չի կարելի բացառել,
4. քաղաքական անորոշության էքստրապոլյացիա տնտեսական համագործակցության վրա:
5. ԵՄ-ի հետ հարաբերությունների համակարգված զարգացում բոլոր ոլորտներում:

Տարածաշրջանային անվտանգության վրա ՀԱՊԿ-ից Հայաստանի դուրս գալու, կամ դուրս դրվելու ազդեցությունը: Հավանական է.

1. Անվտանգության վակուումի ձևավորում:
2. Հայաստանի խոցելիությունը արտաքին սպառնալիքների նկատմամբ:
3. Իրանի մտահոգությունների աճ արևմտյան և թուրքական ռազմական ներկայության վերաբերյալ:
4. Ռուսաստանի համար ռիսկեր՝ տարածաշրջանում ՆԱՏՕ-ի ազդեցության ընդլայնման տեսքով (բազաների տեղակայում):
5. «Ուժերի հավասարակշռության» շարունակական փոփոխություն. Ռուսաստանի դերի նվազում տարածաշրջանային գործընթացներում:
6. ՀԱՊԿ անդամ պետությունների միջև անվստահության մշտական դեֆիցիտ:

Հայաստանի ազգային անվտանգության վրա ազդեցությունը՝

1. արտոնյալ պայմաններով զենքի մատակարարումների դադարեցում:
2. Ռազմատեխնիկական համագործակցության ամրապնդում ԱՄՆ-ի և ԵՄ երկրների հետ:
3. Ֆրանսիայից զենքի զուգահեռ ներմուծման աճ:
4. Ռուսական սահմանապահ կետերի փակում:

Այս սցենարների իրականացումը կախված կլինի հայ-ադրբեջանական խաղաղության գործընթացի արդյունքից և Հայաստանում ներքաղաքական իրավիճակի դինամիկայից: Համագործակցությունը դրական ուղղությամբ տանելու համար անհրաժեշտ կլինի, որ Հայաստանը և ՀԱՊԿ-ը համակարգեն իրենց ռազմավարություններն ու ջանքերը՝ տարածաշրջանում նոր մարտահրավերներին դիմակայելու համար: Կարևոր է հաշվի առնել բոլոր շահագրգիռ կողմերի շահերը և ձգտել երկխոսության ու փոխզիջման՝ տարածաշրջանում կայուն խաղաղության և անվտանգության հասնելու համար: ՀԱՊԿ կանոնադրությունում ամրագրված նպատակները պետք է մնան անդամ պետությունների համար ուղեցույց սկզբունք՝ անկախ քաղաքական տարաձայնություններից: Եվ Կազմակերպության նպատակների իրականացման մեխանիզմները պետք է կատարելագործվեն՝ հաշվի առնելով անդամ պետությունների առջև ծառացած մարտահրավերների ողջ շրջանակը:

Արդյո՞ք լավ ենք ճանաչում մեր հասարակությանը

Մանվել Մկրտչյան
Հրապարակախոս

Զափազանց բարդ ու զգայուն հարցի հետ գործ ունենք: Չեք գտնի թեկուզ մի քիչ խելամիտ մարդու, որն անտարբեր անցնի այս խնդրի կողքով: Չեք գտնի գոնե մի երևելի հայ մտավորականի՝ գրող, փիլիսոփա, գաղափարաբան, նկարիչ ու դերասան, պետական, քաղաքական ու հասարակական գործիչ, որոնք ցավագնորեն չփնտրեն այս հարցերի պատասխանները: Ի դեպ, այդպես է նաև մյուս ազգերի դեպքում, նրանք ևս մեծ եռանդով փնտրել ու փնտրում են իրենց ինքնության եզրերը, իրենց նկարագրի ուժեղ և խոցելի կողմերը: Սակայն մեծագույն ճշմարտությունն այն է, որ անհնար է լիակատար ու համոզիչ բացատրություն գտնել այն հարցին, թե հատկապես ինչպիսին է տվյալ հասարակությունը: Այլ կերպ ասած՝ դեռ կարելի է զգալի վերապահումներով բնութագրել տվյալ էթնոտեսակը, բայց անկարելի է հասկանալ հասարակության սոցիալ հոգեբանական ամբողջական նկարագիրը, նրա մղումները, վախերն ու ներսում կուտակված արատները: Տարբեր առիթներով մեջբերել ենք մեր մեծերից շատերի՝ Ռաֆֆու, Թումանյանի, Նժդեհի, Հայկ Ասատրյանի և ուրիշների՝ հային տրված բնութագրումներից: Չենք անտեսել ռուսական, եվրոպական և ամերիկյան էթնոհոգեբանների՝ Բենեդիկտի, Լասուելայի, Նիկոլայ Բերդյաևի, Լուրիեի, և այլոց ուշագրավ մտքերից մի քանիսը՝ ազգերի նկարագրի մասին: Եվ այդուհանդերձ, չենք կարող ասել, թե հանդիպել ենք սպառիչ, բավարարող մեկնությունների: Եզրակացությունը պարզ է՝ **եզակի հայցաքը կամ մասը չի կարող ընդգրկել ամբողջը:** Հիմնականում, շատ բան խաղաղ ու անճգնաժամ պայմաններում տեսանելի չէ: Այս հարցերում խեղճանում են նաև սոցիոլոգները և քաղաքական մեկնաբանները: Օրինակ, մեր քաղաքագիտական հանրույթը սոցիոլոգների հետ միասին դեռ երեկ պրկել էր իր միտքը և ուզում էր հասկանալ, թե ինչպես Արցախի գլխին փորձանքներ բերած, դիվանագիտությունը տապալած, հայությանը հիմնահատակ պառակտած մարդը 2021 թվականին այդքան ձայն հավաքեց խորհրդարանի ընտրություններում: Այլ ձևերի մեջ, նույնիսկ առավել վատ եղանակներով նույնը կրկնվեց նաև վերջին ԱԺ ընտրությունների ժամանակ: Ինչպիսի քաղաքական բացատրություններ տրվեն ընտրակեղծարարությանը և իշխանության ապօրինի գործողություններին, միևնույն է, փաստ է, որ նույն անձնավորությունը շարունակում է հաջողել, մնալու անպատիժ: Այս պահին մի կողմ թողնենք նաև այն, որ գործընթացներում շատ լուրջ դերակատարում ունեցան մեզ համար անտեսանելի թուրքարևմտյան և սորոսական ազդեցության կառույցները, կապիտալը: Բայց և տեսանելի իրողություն է հասարակության



մի շերտի գրեթե հրեշավոր համակրանքը երկիրը դեպի լիակատար քայքայման տանող մարդկանց հանդեպ: Ըստ սոցիոլոգների՝ հասարակությունը եռաշերտ երևույթ է: Առաջին շերտը բարձրակարգ, կարգին մարդկանց խումբն է, որը թվով փոքր է: Մարդկանց այս տեսակը գիտի, թե ինչ է հայրենիքը, պետությունը, ազգային ընդհանրական շահը: Առանց ճոռոմախոսության նա իր տեղում անում է իր գործը, եթե տրտնջում է, ապա ուզում է, որ ավելի լավ լինի: Նա ապրում է պարկեշտ մարդուն վայել կյանքով, անհատականություն է և չի հանդուրժում, երբ բռնանում են իր կամքի վրա: Այս խմբի մարդիկ, ի տարբերություն իշխանության մեջ գտնվողների, որոնք անասելի ագրեսիվ են իրենց պայքարում, քանի որ անձնական շահեր են առաջ մղում, ունեն իդեալներ ու սկզբունքներ, բայց նրանք դժվար են համախմբվում: Նրանք լուրջ հարցեր են առաջադրում ու չեն սիրում, երբ մանրապճեղ քաղաքական գործիչները փորձում են ավելի խելոք երևալ, քան կան: Երրորդ շերտը ամբոխի վերածվող անուղեղ զանգվածն է, որն ամենամեծն է, իսկ սրանց մեջտեղում այն խավն է, որը նույնպես մեծ է և հենց նրանից են երբեմն կախված լինում ընտրությունների արդյունքները և հասարակության հիմնարար որակները: Ընդդիմադիր ուժերն իրականացնելով քարոզարշավ, որպես կանոն, համոզված են լինում, որ փայլուն կամ գոնե շատ լավ արդյունքներ են գրանցվելու: Շփումները հասա-

երբ մարդուն պահում ես իր փոքրիկ հացի կտորին կառչած, նա դառնում է լիովին կառավարելի: Իսկ երբ այս զանգվածը կշտանում և վերագտնում է իր արժանապատվությունը, այն դառնում է վտանգավոր ցանկացած իշխանության համար: Հասարակության այս մեծ հատվածի մյուս գլխավոր արատը պատասխանատվության զգացումի պակասն է կամ իսպառ բացակայությունը: Այդ խոհեմ և կարգին մարդկանց է թվում, թե Արցախի կորուստը բոլորը ծանր տարան: Բոլորովին: Նրա կերը տեղն է, իսկ որդին՝ կողքին, հետևաբար նա տառապելու ուրիշ ինչ պատճառ ունի: Մի քիչ ավելի պահանջկոտ ենք, երբ ասում ենք, թե նա չունի պատասխանատվության զգացում: Բանը նույնիսկ դրան չի հասնում, պարզապես այս հատվածի գիտակցությունը ողորմելի է: Տեսեք, հասարակ մարդ է, սովորական գործի տեր, դժվար կյանքով ապրող: Ոչ մի կերպ չես ասի, թե նա իշխանությունից ակնկալիքներ ունի և կամ կարող է ունենալ: Նա լավ էլ գիտի, որ ՔՊ-ին ու Նիկոլին ընտրելը չի փոխելու իր կյանքը: Ութը տարին բավարար էր սա հասկանալու համար: Գիտի, բայց գնաց ու հատկապես նրանց ընտրեց: Եթե հրապարակում այլ, առավել արժանավորներ չլինեին, դեռ կարելի էր ինչ-որ կերպ սա հասկանալ, բայց ոչ, նա մի անմիտ բացատրությամբ նախընտրում է իր և երկրի գլխին վտանգներ բերողներին: Սա ունի մի բացատրություն՝ նա բացարձակապես չի գիտակցում, թե ինչ է անում և ինչու: Հավանաբար այս մարդկանց համար չկան պետական ու քաղաքական գործիչների ամենատարրական չափանիշներ: Այսինքն՝ պարզվում է «կուկուռուզ ու պեռաշկի» լափող և ամեն ակնթարթ սուտ խոսող մարդն այս խավի համար առավել ընկալելի ու ընդունելի է: Ինչպես ցույց տվեց կյանքը, մենք սա չգիտեինք, բայց նրան տիկնիկի պես պարացնող դրսի քաղտեխնոլոգները լավ գիտեին: Ստիպված ենք ցավով մտածել, որ ստախոս, ցանկացած բան գլխիվայր շրջող դեմագոգը, անդաստիարակ, ժողովրդական խոսքով ասած՝ լափառոշ, ռեխը աջուձախ շաղ տվող մարդն այս խավի համար գուցե առավել հոգեբրակ մարդկանց հետ, երկրում տիրող իրավիճակը և մարդկանց դժգոհությունների տարափը խոսում են դրա օգտին: Բայց ահա արձանագրվում են հուսահատեցնող արդյունքներ՝ քաղաքական ընդդիմադիր գործիչներին դնելով շոկային վիճակներում: Հիմա հարց. ո՞ւր է այն ընտրողը, որը հանդիպումներում զայրացած խոսում էր վիճակը արմատապես փոխելու անհրաժեշտության մասին, և իր հստակ համակրանքն էր արտահայտում լուրջ գործիչների հանդեպ: Բանն այն է, որ նրանք նախընտրական հանդիպումների ժամանակ հանդիպում էին արդեն կողմնորոշված ընտրազանգվածի հետ: Մյուս զանգվածը այդտեղ չէր, կամ էլ՝ երկակի պահվածք էր դրսևորում: Իզուր չեն ասում՝ **հայ մարդուց այդքան հեշտ գլուխ չես հանի՝ մի բան կմտածի, մեկ այլ բան կասի, երրորդին կընտրի:** Սա հիմնականում ապաքաղաքական կերպար ունեցող մարդկանց վարքագիծն է: Եթե սրան ավելացնենք վարչական ռեսուրս կոչվող երևույթի հանդեպ կիրառված նենգ ու կեղտոտ վերաբերմունքը, որը նշանակում էր հարցեր լուծել վախ սերմանելով, ապա պարզ կդառնա, թե ինչն ինչոց է: Իշխանությունն ընտրություններից առաջ և ընթացքում արդեն դիրքավորվել էր բռնակալական դիրքերում և վախը մեծ հաջողությամբ օգտագործում էր իբր գործիք՝ իր նպատակներին հասնելու համար: Այնքան ողորմելի են օրվա պաշտոնյաները, որ նրանց բռնակալական հավակնություններն անգամ զավեշտի են նմանվում: Իզուր չի ասված՝ **«Եթե խոտ ես, ոչխարն էլ կարող է թվալ ահասարսուռ կենդանի»:** Այս մարդկանց հարկավոր պահին հուշեցին, թե քանի որ չկան ոչ քաղաքական ու ռազմական, ոչ դիվանագիտական և ոչ էլ տնտեսական արդյունքներ, ապա ճիշտ կլինի զանգվածին պահել վախի մթնոլորտում: Այս համատարած **«բռնոցի, ձերբակալոցի ցուցադրոցի և բացթողոցի»** խաղը հենց դրան էր միտված: Մի շատ ողորմելի ու վախկոտ անձնավորություն սկսում է սարսափ սփռել իր շուրջը և ողջ երկրում: Արաբ մեծ գրող, նոբելյան մրցանակի դափնեկիր Ջիբրան Խալիլն իր «Մարգարեն» հանճարեղ ստեղծագործության մեջ «Խրտվիլակը» **վերնագրով** մի գողտրիկ նովել ունի: - **Եվ մարգարեն հարցրեց այգում կանգնած խրտվիլակին,** - ասվում է նովելում, - **«Լսի՛ր, այ խրտվիլակ, ես հասկանում եմ այգու տիրոջը, որը քեզ այստեղ կանգնեցնելով ուզում է պաշտպանել իր բերքը: Ես հասկանում եմ անուղեղ թռչուններին ու կենդանիներին, որոնք գլխի չեն ընկնում, որ քո քրջերի տակ ոչինչ չկա: Բայց դու ո՞նց ես համաձայնում քեզնից ոչինչ չներկայացնելով այստեղ կանգնել զոր ու գիշեր: Եվ խրտվիլակն ասաց՝ Դրանք ոչ մի նշանակություն չունեն, կարևորն այն է, որ ինձնից ՎԱԽԵՆՈՒՄ ԵՆ»:**

Խորքային առումով չպետք է մոռանանք, որ հասարակության պարզունակ, ամբոխ զանգվածն ահավոր պահպանողական է, և նրա վախերի զգալի մասը բխում են այդտեղից: Կյանքում մտքի և վարքի նման որակները լավ հիմք են մարդկանց մանիպուլացնելու համար: Դեռ Նիկոլո Մաքիավելին էր նկատել, որ

հարազատ է ու սիրելի: Ու այս մասին օտար ուժերը ևս լավ գիտեին: Նիկոլահպատակ պարզ ու բավականին բթամիտ զանգվածին կառավարելու հզորագույն զենքերից մեկը բացասական խոսքն ու տեղեկատվությունն է: Սոցցանցերում դա լավ է երևում: Մտաբերենք, թե ինչ ուժգնությամբ էր աշխատում **«Քայլ արա, մերժիր Սերժին»** կարգախոս-հրահանգը: Եթե այդ օրերին հրապարակ նետվեին սեփական թեկնածուին վերաբերող որևէ դրական խոսք ու գովասանք, «հեղափոխական» գործընթացը կտապալվեր կամ չէր ունենա նման ռեզոնանս: Մերժելու խայծն այս խանդավառ ամբոխի գլխավոր կերակուրն էր: Հետագայում «ճաշացանկում» հայտնվում են նախկինները և Ռոբերտ Քոչարյանը: Նրանց տարբեր ձևերով կեղտոտելու տակտիկան ևս արեց իր սև գործն ու սպառվեց: Ամբոխին սնելու համար պետք էր նոր պերսոնաժ, և դրա համար ընտրություններից հետո ընտրվեց Գագիկ Ծառուկյանը: Եթե մի քանի ամիս առաջ իբրև իրավիճակի հանգուցալուծում տեսնում էինք ընտրությունները, ապա ներկայումս դրությունը շատ ավելի փակուղային է, քանի որ իշխանափոխության սահմանադրական ուղին այլևս ակնապատ է: Հիմա ասես, շատերն են գլուխներն ափերի մեջ առած մտորում պայքարի այլ տարբերակների մասին: Հավանաբար կգտնվեն գործընթացների վրա ազդելու նոր եղանակներ: Իսկ այս պահին փորձենք վերլուծել հասարակության երկրորդ շերտի հարցը, որից շատ բան է կախված: Եթե առաջին, խելամիտ հատվածը գիտի իր անելիքը, բայց ցավոք մեծ չէ, իսկ երրորդը կատարելապես ամբոխի դերում է, ապա դժվար երևույթ է մեջտեղի, կամ ինչպես ընդունված է ասել՝ միջին խավը: Այս խավը, որը ևս մեծաքանակ է, ընտրությունների ժամանակ բնավ էլ չէր համակրում Նիկոլին և նրա ՔՊ-ին: Այս խավի մեջ առաջին հերթին պետք է առանձնացնել վարչական ռեսուրս կոչվող հատվածին, բիզնեսի մանր ու մեծ շրջանակներին և այլն: Այս խավի քաղաքական ու ազգային գիտակցությունը ևս, մեղմ ասած, չի փայլում: Նրան հուզում է իր նեղ անձնական շահը՝ դիրքը, աշխատանքը, եկամուտները և այլն: Նա գամված է այս ամենին և ամեն ինչին նայում է այդ պրիզմայով, անգամ եթե երկիրը գտնվում է ճակատագրական ջրբաժանի առջև: Նա խելոք է բավարար չափով, հասկանում է իրավիճակի լրջությունը, բայց ոչ մի պայմանով չի զոհի իր անձնական շահից թեկուզ մի չնչին պատառ: Սա նաև վտանգավոր խավ է, պատեհապաշտ, գիտի ճիշտ պահին շրջվել դեպի ուժեղը կամ զոռբան: Նա նաև կարող է ազդել գործընթացների արդյունքների վրա նույնիսկ իր չեզոքությամբ ու անտարբերությամբ, իսկ անտարբերությունը խաբուսիկ, բայց սոսկալի զրահ է ցանկացած իրավիճակում: **Դեռ հին հույն փիլիսոփաները գիտեին, որ «Անտարբերությունը մահաբեր թույն է, որը գործում է դանդաղ և ի վերջո սպանում է բոլորին»:** Այս միջին շերտը նաև անկանխատեսելի է և խիստ հակասական իր արարքներում: Եթե ուզում ենք հասկանալ նրա գործելու կերպը, չպետք է շատ հեռուն գնալ: Պետք է ընդամենը տեսնել, թե ինչքան և որտեղ է նրա օգուտը տվյալ գործում: Քարոզարշավի բուռն օրերին ինձ հանդիպեցին թվով ոչ քիչ այդպիսի մարդիկ: Նրանք ատում ու արհամարհում էին Նիկոլին և նրա կամակատարներին, բայց հենց նրանց էլ ընտրեցին, թեև մինչ այդ կարող էին ճառել նրանց բերած աղետների մասին: Շատ երկրներում այս հատվածն էլ հենց կանխորոշում է ընտրության ելքը: Սակայն մի տարբերությամբ, որ կախումներն իշխանություններից այնտեղ զգալիորեն թույլ են, և տեղ է մնում մարդու ազատ կամարտահայտության համար, ինչպես և գոյություն ունի հակակշիռների ինստիտուտը: Ի մի բերելով մեր ասելիքը՝ անենք հետևյալ եզրահանգումները: Հասարակությանը թեկուզ նվազագույն չափով ճանաչելը, թե՛ տեսականորեն և թե՛ գործնականում գրեթե անհնար է: Պետական ու քաղաքական ինստիտուտների թերզարգացվածությունը մեզանում հասարակական խմբերին և անհատներին պահում է ուժեղ կախման մեջ իշխանություններից: Ազգային և պետական մտածողությունը ցավալիորեն զիջում է մարդկանց անձնական շահերին: Արտաքին ուժերի ազդեցությունը ներքաղաքական զարգացումների վրա աղետալի չափերով ուժեղ է և լի է ամենատարբեր վտանգներով: Շահագրգիռ ուժերը մինչև օրս կարողանում են շահարկել անցյալը՝ տեղ չթողնելով ներկայի և ապագայի առողջացման համար: Աշխարհում տուրբուլենտությունը հասել է իր պիկին, և կարծես ապրում ենք քաղաքական ու էկոլոգիական **«մեծ ջրհեղեղի»** շրջանում: Մեր հասարակությունը պետք է գիտակցի, թե ինչ է կատարվում աշխարհում, իր շուրջը և երկրում, ձգտի վերափոխվել հիմնահատակ, որպեսզի այսօրվա քաղաքական այլանդակությունների շղթան մեկընդմիշտ կտրվի, և տեղ բացվի առողջ, բանական և արդիական պետության ստեղծման համար: Դա է **մեծ ջրհեղեղին** դիմանալու միակ ճանապարհը: ■

Ինչն է «վատ» կամ «լավ» հայության համար

Արեգ Ղարաբեգյան
Բնապահպանութեան ճարտարագետ

Վերջին տարիներին Հայաստանի և Սփյուռքի հայությունը հիմնականում բաժանվել է երեք խոշոր խմբերի՝ Հայաստանի գործող իշխանությունների կողմնակիցների, գործող իշխանությունների ընդդիմադիրների և այն մարդկանց, որոնք թվով ավելի շատ են, քան առաջին երկու խմբերինը միասին վերցրած, սակայն չեն հետաքրքրվում ազգային հարցերով և պատրաստ չեն աշխատանք տանել հայրենիքի բարեկեցության համար:

Ես մարդկանց սոցիալական վարքագծի և/կամ նրանց քաղաքական դիրքորոշումների մասնագետ չեմ: Սակայն վերջին 10 տարիների ընթացքում ժամանակիս մեծ մասը Հայաստանում անցկացնելով՝ տեսնում եմ շատ բաներ և լսում եմ, թե մարդիկ ինչ են խոսում: Այս հոդվածում թվարկել եմ այնպիսի դեպքեր և երևույթներ, որոնց վերջին շրջանում անձամբ ականատես եմ եղել կամ որոնց մասին լսել եմ՝ նպատակ ունենալով ընդհանուր պատկերացում տալ ազգի հոգեվիճակի մասին:

Այս հոդվածը կարդալուց հետո ոմանք կարող են ասել, որ ես ընդդիմության անդամ եմ, և դրա համար եմ նման բաներ ասում: Մյուսները կարող են մտածել, որ ես չեմ սիրում զվարճանալ և վայելել շքեղ կյանքը, իսկ ուրիշները կարող են ունենալ բոլորովին այլ կարծիքներ: Իմ նպատակն է ներկայացնել տարբեր գործողություններ և իրադարձություններ՝ ցույց տալու ազգի վիճակն այնպես, ինչպես ես եմ այն տեսնում: Այս ամենը կարդալուց հետո դուք կարող եք ինքներդ եզրակացություններ անել:

Կառավարությունը դատական գործ է հարուցել Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի դեմ, քանի որ նա, չնայած դատարանի որոշմանը, հրաժարվել է վերականգնել մի վարդապետի հոգևոր պաշտոնը, որին հեռացրել էր եկեղեցուց, երբ վերջինս կառավարության կողմն էր բռնել եկեղեցու դեմ: Հայտարարվել էր, որ առաջին դատական նիստը տեղի է ունենալու ուրբաթ՝ կեսօրից հետո՝ Էջմիածնում: Սպասվում էր, որ դատարանի շենքի առջև մեծ բազմություն կհավաքվի՝ Կաթողիկոսին աջակցելու համար, սակայն այնտեղ ընդամենը մոտ 2.000 մարդ էր ներկա:

Ես մեքենաս կայանել էի դատարանի հետևի կողմի մի փողոցում՝ խցանումներից խուսափելու համար: Երբ հեռանում էի, մի բնակիչ, որը կանգնած էր իր տան դռան շեմին, հարցրեց ինձ, թե ինչ է տեղի ունենում: Ես հարցրի՝ արդյոք նա լսե՞լ է լուրը, սակայն նա չէր լսել: Ես պատմեցի նրան գործի մասին և հարցրի՝ արդյոք ինքն էլ կմիանա հավաքվածներին: Նա ուսերը թոթվեց, և ակնհայտ էր, որ Կաթողիկոսին աջակցելու որևէ մտադրություն չուներ:

Հաջորդ երեկոյան Գառնիի տաճարում երաժշտական միջոցառում էր՝ լուսային շոուով: Այնտեղ առ-

նվազն երկու անգամ ավելի շատ մարդ կար, քան դատարանի առջև: Մասնակիցները հիմնականում երիտասարդներ էին, որոնք վճարել էին 10.000-ից 20.000 դրամ ($28-ից $55)՝ կախված նրանից, թե երբ էին գնել տոմսերը, և Երևանից ավելի քան մեկ ժամ ճանապարհ էին անցել՝ միջոցառմանը մասնակցելու համար: Բոլորը կարծես երջանիկ էին և վայելում էին բաց երկնքի տակ անցկացվող միջոցառումը՝ խմելով տեղում վաճառվող սուրճ կամ ալկոհոլային խմիչքներ:

Այս երկու միջոցառումների վերաբերյալ կարող եք ինքներդ եզրակացություններ անել և որոշել, թե մարդիկ ինչպիսի վերաբերմունք ունեն լավ ժամանակ անցկացնելու և եկեղեցուն աջակցելու հարցում: Ես եկեղեցի կանոնավոր հաճախող կամ հավատացյալ մարդ չեմ, սակայն հարգում եմ Հայ Առաքելական Եկեղեցին, քանի որ այն շուրջ 1.000 տարի, երբ հայ ժողովուրդը պետականություն չուներ, փաստացիորեն կատարել է պետական կառավարման դեր:

Վերջին 12 ամիսների ընթացքում ես 16 անգամ թռել եմ Երևանից դուրս և վերադարձել Երևան: Ամեն անգամ ինքնաթիռը լիքն էր, և հայերը մեկնում էին արտերկիր՝ հանգստանալու և զբոսաշրջության նպատակով կամ վերադառնում էին այդպիսի ուղևորությունից:

Հետաքրքիր է նաև, որ Ատլանտյան օվկիանոսը հատող թռիչքներում բիզնես և պրեմիում դասերի ուղևորների մեծամասնությունը հայեր են: Դուբայի առևտրի կենտրոններում կարելի է տեսնել դիզայներական խանութների պայուսակներով հայերի, և եթե ցանկանում եք հայերի տեսնել, պետք է գնաք

լավագույն ռեստորաններ կամ հյուրանոցներ, օրինակ՝ Աթլանտիս Ռոյալ: Ես Աթենքում էի և պատմական վայրերում կամ թանգարաններում հայի գրեթե չտեսա, սակայն նկատեցի հայերին Աթենքի Ռիվիերայի ռեստորաններում, որտեղ սեղաններն ամբողջությամբ ծածկված էին ուտելիքով, իսկ նրանք անընդհատ կենացներ էին խմում:

Շարմ էլ Շեյխում ես նստած էի լողավազանի մոտ գտնվող բարում և պատահաբար օգնեցի մի երիտասարդ հայ տղայի խմիչք պատվիրել: Այնուհետև սկսեցինք զրուցել, և ես հարցրի՝ արդյոք նա արձակուրդի՞ էր եկել: Նա ասաց, որ երկու շաբաթով այնտեղ է՝ մեղրամիսն անցկացնելու համար: Նշեմ, որ սա ծովափին գտնվող հինգաստղանի հյուրանոց էր՝ նախատեսված միայն մեծահասակների համար: Այդ հյուրանոցում նաև այլ հայեր կային: Պետք է նշել, որ ամեն առավոտ Երևանից Շարմ էլ Շեյխ չորս չվերթ կա:

Կարելի է եզրակացնել, որ բնակչության բավական մեծ հատվածը փող ունի և վայելում է լավ կյանքը: Նման մարդկանցից չպետք է ակնկալել, որ ակտիվորեն ընդդիմանալու են ներկայիս իշխանություններին, քանի որ նրանք չեն ցանկանում վտանգել իրենց հարմարավետ կյանքը:

Վերջերս կեսօրից հետո հանդիպեցի Արմավիրի մարզից մի ընկերոջ, որն ակնհայտորեն վրդովված էր: Հարցրի, թե ինչու է նեղված, և նա պատմեց, որ իրենց գյուղում վիճաբանել էր մի խումբ գյուղացիների հետ, որոնք ասում էին, որ Թուրքիայի հետ սահմանը բացելը լավ կլինի իրենց համար, քանի որ այդ դեպքում կարող են իրենց լոլիկն ու վարունգը վաճառել թուրքերին և հարստանալ: Նա փորձել էր բացատրել նրանց, որ Թուրքիան աշխարհում լոլիկի խոշորագույն արտադրողն է, և թուրքերին մեր լոլիկները պետք չեն լինի, սակայն, ըստ նրա, դա այդ մարդկանց գլուխները չէր մտնում: Պետք է այս գյուղացիներին հարցնել, թե ինչու այս բոլոր տարիների ընթացքում նրանք իրենց լոլիկը չեն վաճառել Իրանին, որի հետ սահմանը բաց է: Ի՞նչ կատեգորիայի մեջ պետք է դասենք այս միամիտ գյուղացիներին:

Մեքենայիս համար նոր անվադողեր էին անհրաժեշտ, ուստի գնացի մի խանութ, որը Հայաստանում հայտնի անվադողերի ապրանքանիշերից մեկի ներկայացուցիչն է և ուր գնալ ընկերներիցս մեկն էր խորհուրդ տվել: Մինչ սպասում էի, որ անվադողերը տեղադրեն, սկսեցի զրուցել խանութի սեփականատիրոջ հետ: Երբ նա իմացավ, որ ես Լոս Անջելեսից եմ, ասաց, որ իր ընտանիքը բնակվում է Գլենդելում, և ինքը պարբերաբար այցելում է նրան, քանի որ ունի գրին քարտ:

Նա նաև իշխանությունների հաստատակամ կողմնակից էր և ինձ ասում էր, որ այժմ Հայաստանում ամեն ինչ շատ ավելի լավ է: Ես հարցրի նրան՝ եթե նա աջակցում է իշխանություններին և կարծում է, որ ամեն ինչ լավ է, ապա ինչո՞ւ է իր ընտանիքը Միացյալ Նահանգներում: Նա պատասխանեց, որ իր դուստրը UCLA-ում բժշկական կրթություն է ստանում, իսկ տղան հաջորդ տարի պետք է սկսի ԱՄՆ քոլեջում ուսումնառությունը: Նրա ձայնի տոնից ակնհայտ էր, որ նա մտածում էր՝ «ինչպե՞ս եմ ես համարձակվում կասկածի տակ դնել իր կյանքի ընտրությունները»: Սա արդյոք հակասություն չէ՞: Նա աջակցում է իշխանություններին և կարծում է, որ նրանք հիանալի աշխատանք են կատարում, սակայն, ըստ երևույթին, դա բավարար լավ չէ իր ընտանիքի համար:

1990 թվականի օգոստոսի 8-ին ՀՅԴ-ն հայտարարեց, որ իր կազմակերպական կառույցը վերադարձել է Հայաստան: Այդ հայտարարությունը տեղի ունեցավ խորհրդարանում, իսկ հետո այդ մասին հայտարարվեց նաև Օպերայի շենքի լեփ-լեցուն դահլիճում: Միաժամանակ հազարավոր մարդիկ կանգնած էին շենքին կից հրապարակում: Անցնենք 36 տարի առաջ և հասնենք 2026 թվականի օգոստոսի 8-ին՝ շաբաթ օրվա, ժամը 13:00-ին: Այդ օրը հայտարարվել էր հավաք Եռաբլուրում՝ այդ օրվա տարեդարձը նշելու և Արցախյան պատերազմներում զոհվածների հիշատակը հարգելու համար: Ներկա էր ընդամենը 64 մարդ: Դե ինչ, արդյո՞ք պետք է մտահոգվենք և վրդովվենք: Գուցե ոչ: Ի վերջո, ՀՅԴ անդամներն էլ նույն ժողովրդի մի մասն են, որը հիմա նախընտրում է զվարճանալ, խմել և ուտել շքեղ վայրերում:

Բացի Երևանի շքեղ ռեստորաններից, բարերից և ակումբներից, այժմ Հայաստանի մյուս հատվածներում նույնպես բազմաթիվ շքեղ վայրեր կան, ուր մարդիկ գնում են լավ ժամանակ անցկացնելու: Այն երեկո, Գառնիի տաճարից վերադառնալիս, տեսա Գառնիի մոտ մի քանի նոր բացօթյա ռեստորաններ, որոնք լիքն էին մարդկանցով և որտեղ կենդանի երաժշտություն էր հնչում: Այնուհետև Երևան վերադառնալու ճանապարհին անցանք Ձրվեժով, որտեղ ծանր երթևեկություն էր, քանի որ մի քանի շքեղ սրահներում խնջույքներ կամ հարսանիքներ էին: Ըստ երևույթին, հենց դա է այն, ինչ մարդիկ ցանկանում են այս օրերին:

Երևանում ամառային երեկոները հաճելի և տաք են, ուստի կարելի է տեսնել բազմաթիվ բացօթյա հավաքներ և միջոցառումներ: Մի շաբաթ գինու փառատոն է, մյուս շաբաթը՝ գարեջրի փառատոն, իսկ հետո՝ անվճար համերգներ Հանրապետության հրապարա-

կում: Բոլոր նման միջոցառումներին հազարավոր մարդիկ են մասնակցում, և երբեմն նույնիսկ դժվար է տեղաշարժվել բազմության մեջ: Այս տարի նաև համերգներ են անցկացվում Օպերայի շենքի տանիքում, որոնց տոմսերը սովորաբար արժեն 20.000 դրամ ($55): Եթե ցանկանում եք մասնակցել, պետք է տոմսը գնել հենց միջոցառման մասին հայտարարելուց հետո, հակառակ դեպքում այն արագ սպառվում է:

Մենք երկու օրով գնացինք Գյումրի: Ուշ ճաշելուց հետո մեքենայով շարժվեցինք քաղաքի կենտրոն՝ հյուրանոց գնալու համար: Ոստիկանությունը որոշ փողոցներ փակել էր, իսկ քաղաքի գլխավոր հրապարակի շրջակայքի փողոցներում խցանումներ էին: Պարզեցի, որ այդ երեկո անվճար համերգ էր նախատեսված՝ «Երիտասարդության միջազգային օրվա» կապակցությամբ: Բեմ էր տեղադրվել Աբովյան փողոցի վերջնամասում, որը միայն հետիոտների համար նախատեսված փողոց է: Երբ այդ երեկո համերգը սկսվեց, ամբողջ փողոցը լեփ-լեցուն էր մարդկանցով: Ես հիշեցի Սրբազան շարժման ժամանակ Գյումրու մշակույթի կենտրոնի դիմացի բաց տարածքում կազմակերպված հավաքը: Այն ժամանակ կազմակերպիչները կարծում էին, որ բավական մեծ թվով քաղաքացիներ էին մասնակցել, սակայն անվճար համերգի բազմությունը շատ ավելի մեծ էր: Հնարավոր է, որ Հայաստանի հաջորդ առաջնորդը լինի հանրահայտ սիրված երգիչ, որն իր հազարավոր աջակիցներից կակնկալի, որ քվեարկեն իր օգտին: Կասկած չունեմ, որ մեծ թվով մարդիկ կքվեարկեն, քանի որ Հայաստանում ընտրողների մեծ մասին չի հետաքրքրում տվյալ անձի դիրքորոշումը տարբեր հարցերի վերաբերյալ կամ թեկնածուի քաղաքական ծրագիրը: Նրանք քվեարկում են այն մարդու օգտին, որին պարզապես սիրում են կամ համակրում: Մի կարծեք, թե այս միտքը ծիծաղելի է: Վերջին ընտրություններից առաջ ես զրուցում էի մի կնոջ հետ, և նա ասաց, որ չի քվեարկելու Քոչարյանի օգտին՝ «Հայաստան» դաշինքի համար, քանի որ իրեն դուր չի գալիս նրա հարսը՝ Սիրուշոն, որը Հայաստանում հայտնի երգչուհի է:

Վերջերս զրուցում էի Սփյուռքի մի հին ծանոթի հետ, որն ինձ ասում էր, որ վերջին մի քանի տարիներին Հայաստանը ծաղկում է: Որպես դրա ապացույց նա նշում էր, որ ճանապարհները ասֆալտապատվել են, Երևանում շքեղ շենքեր են կառուցվել, մարդիկ լավ մեքենաներով են երթևեկում, իսկ Երևանի կենտրոնը նման է եվրոպական քաղաքի: Ինչ-որ իմաստով նա ճիշտ է: Սակայն պետք է ավելի խոր նայել՝ այսպես կոչված «ծաղկման» հետ կապված խնդիրները տեսնելու համար: Անկախությունից հետո առաջին 28 տարիների ընթացքում Հայաստանը կուտակել էր 7 միլիարդ դոլարի արտաքին պարտք, իսկ դրան հաջորդած վերջին ութ տարիներին արտաքին պարտքն աճել է ևս 7 միլիարդ դոլարով:

Իհարկե, եթե այդքան մեծ գումար կարճ ժամանակում ներդնես Հայաստանի նման փոքր երկրի տնտեսության մեջ, արդյունքում «ծաղկման» նշաններ

կլինեն: Սակայն հարց է ծագում՝ ինչպե՞ս և ո՞վ է վերադարձնելու այդ բոլոր վարկերը: Հայաստանի տնտեսությունն այնքան հզոր չի, որ կարողանա բավարար չափով դրամական միջոցներ ստեղծել 14 միլիարդ դոլարը վերադարձնելու համար: Սա այն խնդիրներից է, որին մարդիկ բավարար ուշադրություն չեն դարձնում: Նրանք ուրախանում են անմիջական արդյունքներով՝ առանց մտածելու ապագա հետևանքների մասին:

Կասկադը Երևանի գլխավոր տեսարժան վայրերից մեկն է և իմ սիրելի վայրերից՝ այնտեղ ճաշելու կամ ընթրելու համար: Այժմ, ամառային երեկոներին քաղաքապետարանն այնտեղ հաճախ միջոցառումներ է կազմակերպում, օրինակ՝ անվճար համերգներ, որոնց ժամանակ բեմ են տեղադրում Կասկադի ստորոտում, կամ պարային միջոցառումներ, որոնց ընթացքում մարդիկ Կասկադի ստորոտում շուրջպար են պարում: Հատկապես անվճար համերգների ժամանակ Կասկադի աստիճաններին նույնիսկ կանգնելու տեղ գտնելն է դժվար:

Կողքից նայող մարդը կարող է այնպիսի տպավորություն ստանալ, որ Հայաստանում ամեն ինչ հիանալի է ընթանում: Սակայն եթե գնաք Երևանից հեռու գտնվող գյուղեր, կտեսնեք աղքատություն, կեղտոտ ու չասֆալտապատված ճանապարհներ և միջակ բնակարանային պայմաններ:

Ժամանակ առ ժամանակ լավ է զվարճանալ, բայց ճիշտ չէ ամբողջ զվարճանքը կենտրոնացնել Երևանի կենտրոնում՝ անտեսելով գյուղերը: Ես ներկայացրի մի քանի մտքեր և իրադարձություններ, որոնք առաջին հայացքից կարող են թվալ միմյանց հետ կապ չունեցող պատահական դեպքեր: Սակայն կարծում եմ, որ դրանց միջև որոշակի օրինաչափություն է նկատվում, որը ցույց է տալիս, թե ինչպես է Հայաստանի բնակչության մեծ մասը մտածում կամ գործում:

Այս ամենի հիման վրա յուրաքանչյուրը կարող է ինքնուրույն եզրակացնել՝ Հայ ազգի հետ ինչ-որ բան «վատ» է՞, թե՞ ամեն ինչ «լավ» է:

Դուք եղեք որոշողը:

Ինչ է լինում, երբ «ասֆալտը՝ ասֆալտ» է և այդ բառը պետք է «խանդաղատանքով» արտասանել

Արմեն Վարդանյան
Լրագրող

«Ինչու են ասֆալտի վրա շատ կենտրոնանում, որովհետև ասֆալտից էդ ա, բանը... Ինչու ենք մենք ասֆալտը սիրում ի վերջո, որովհետև ասֆալտը՝ ասֆալտ է, էդ բառը խանդաղատանքով է պետք արտասանել: Հետևաբար էդ ասֆալտը էն ասֆալտը չէ, էնպես որ...»,- այս խոսքերը Նիկոլ Փաշինյանը հնչեցրել է իշխանափոխության հաջորդ տարում՝ 2019 թվականի ապրիլին կայացած կառավարության նիստում:

Վերջինս փորձում էր հիմնավորել, թե ինչու պետք է ասֆալտապատումը փոխարինել քարով սալապատմամբ՝ մինչև նոր տեխնոլոգիաների ի հայտ գալը՝ հիմնավորելով, թե ասֆալտապատումը բոլոր ժամանակներում դիտարկվել է որպես կոռուպցիոն ոլորտ, «ատկատների» հիմնական աղբյուր: Այդ տարի նրա ղեկավարած կառավարությունը սուբվենցիոն ծրագրերով մոտ 150 կմ ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատման համաֆինանսավորում էր տրամադրել համայնքներին:

Հետագա տարիներին, սակայն, կառավարությունը սկսեց գործել տրամագծորեն հակառակ տրամաբանությամբ՝ ամեն տարի ասֆալտապատելով 500-800 կմ ճանապարհ՝ նոր ճանապարհների կառուցման, հիմնանորոգման, միջին նորոգման աշխատանքների շրջանակներում: Այլ կերպ ասած, «հեղափոխությանը» հաջորդող տարիներին ասֆալտով պայմանավորված կոռուպցիոն ռիսկերը բազմապատկվեցին: Թերևս բացառություն էր միայն 2020 թվականը՝ 44-օրյա պատերազմի և քովիդի գործոնների պատճառով: 2021 թվականին կառուցվել, հիմնանորոգվել և վերանորոգվել էր արդեն 500 կմ ճանապարհ: Կառավարությունը 2022 թվականի համար նախատեսել էր վերականգնել և նորոգել 500 կմ ճանապարհ, սակայն պլանավորածը գերազանցել էր՝ հասցնելով 550 կմ-ի: Այն ժամանակ դեռ ՏԿԵ նախարարի պաշտոնը զբաղեցնող Գնել Սանոյանը հայտարարեց, որ ասֆալտապատված ճանապարհների մասով այն նախորդ բոլոր տարիների համեմատ ռեկորդային ցուցանիշ է, և դեռ նրանում ներառված չեն համայնքային միջոցներով, սուբվենցիոն ծրագրով կառուցված ճանապարհները:

2023 թվականին արդեն նույն նախարարը հայտարարեց, որ Հայաստանում 803 կմ ճանապարհի ասֆալտապատում կամ սալարկում է իրականացվել: Ընդ որում, այդ տարի իրականացրած սուբվենցիոն ծրագրերով կատարողականը կազմել էր 136.7 %:

Նրա խոսքով, ճանապարհաշինության ոլորտում այդ տարի կատարողականը 132 % էր եղել՝ պլանավորված 45 մլրդ դրամի փոխարեն ծախսվել էր 59.7

մլրդ դրամ: Իրականում 2023 թվականին իրականացված ճանապարհաշինական աշխատանքների ծավալը ավելի փոքր էր: Ըստ պաշտոնական տվյալների՝ այդ տարում սուբվենցիաներից դուրս հիմնանորոգվել և նորոգվել է ընդհանուր առմամբ 485 կմ ճանապարհ: Եթե սրանից հանենք Հյուսիս-Հարավի շրջանակներում իրականացված 31 կմ-ը, ապա կստացվի, որ ասֆալտապատման ծավալը կազմել է 454 կմ: Բանն այն է, որ երբ 2020 թվականին կառավարությունը հայտարարել էր, թե ամեն տարի 500 կմ ճանապարհ է ասֆալտապատելու դրա մեջ չէին մտնելու համայնքների հետ միասին կատարվող սուբվենցիոն ծրագրերը և Հյուսիս-Հարավ ծրագրով կառուցվածը: Առանց սուբվենցիայի, ըստ պաշտոնական տվյալների՝ 2024 թվականին Հայաստանում հիմնանորոգվել, վերակառուցվել և կառուցվել է ընդհանուր առմամբ 503 կմ ճանապարհ, որից 38 կմ-ը՝ կրկին Հյուսիս-Հարավ ճանապարհի շրջանակում: 2025 թվականին կառուցվել, հիմնանորոգվել է 500 կմ ճանապարհ և ևս 265 կմ՝ սուբվենցիաների միջոցով: Ամեն տարի սոբվենցիոն ծրագրերով մոտ 15-25 մլրդ դրամի ճանապարհաշինական աշխատանքներ էին արվում և ևս 50-60 մլրդ դրամի՝ կառավարության ծրագրերով: 2025 թվականին Երևանում իրականացվել է շուրջ 3 միլիարդ դրամի ասֆալտապատման աշխատանք: Մայրաքաղաքի ասֆալտապատման աշխա-

տանքներն ամեն տարի կատարվում են 3-4 մլրդ դրամի սահմաններում:

Ասֆալտապատման որակը

2026 թվականի խորհրդարանական ընտրություններից առաջ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց. «2025 թ. Հայաստանում ճանապարհներն այնպիսի որակի են, որպիսիք չեն եղել անկախությունից ի վեր»: Այս հայտարարությունը պատահական չէր: Մասնագետները, հանրային ակտիվիստները և սովորական քաղաքացիներն այս տարիներին պարբերաբար դժգոհում էին ասֆալտապատման աշխատանքների որակից: Նոր ասֆալտապատած ճանապարհները դիմանում էին մինչև առաջին աշուն, կամ ձմեռ, որից հետո նորակառույց ճանապարհները ծածկվում էին փոսերով ու ճեղքերով: Այստեղ հատկանշական է 44-օրյա պատերազմից հետո Տաթև-Լծեն նոր ճանապարհի կառուցման ոդիսականը: Արդեն 5-6 ամիս անց ամբողջովին նոր այս ճանապարհի որոշ հատվածներ գրեթե զրկվել էին ասֆալտի շերտից, և գործադիրը ստիպված ևս մի քանի միլիարդ դրամ հատկացրեց իրավիճակը շտկելու համար: Կառավարությունը նման մի քանի կրկնակի աշխատանք տարավ Սյունիքի մարզի նորակառույց ճանապարհների այլ հատվածներում ևս: Այդ օրերին ՏԿԵ նախարարը հայտարարեց, թե անորակ ասֆալտապատման համար կային օբյեկտիվ պատճառներ՝ ճանապարհը սեղմ ժամկետներում է կառուցվել, և գրունտային խնդիրներ էին առաջացել: Նախարարը հմտորեն շրջանցեց այն փաստը, որ ճանապարհների նախագծանախահաշվարկների պատրաստման փորձաքննության համար տասնյակ միլիոններ հատկացվում են դրանց վերաբերյալ փորձաքննության եզրակացություն ստանալու համար, որի ժամանակ պարտավոր էին արձանագրել օբյեկտիվ խոչընդոտող գործոնները, սակայն, չգիտես ինչու, իրենց այդ ուղեղի գործառույթը չէին կատարել: Պատկերն առավել ամբողջական կլինի, եթե նշենք, որ, ըստ մամուլում շրջանառվող տեղեկատվության, այդ փորձագիտական ընկերությունը կապ ուներ վարչապետի այն ժամանակվա աշխատակազմի ղեկավարի տեղակալի հետ: Բացի այդ, նախագծումից հետո կառուցված ճանապարհն ընդունելու համար գոյություն ունի մեծ պետական կառույց՝ «Ճանապարհային դեպարտամենտը», որն ունի ասֆալտ ծակող սարք և լաբորատորիա: Այս կառույցի պատասխանատուները պնդում են, որ ամեն տարի կառուցվող 500 կմ ճանապարհների 95 %-ն իրենք վերահսկում են, ինչպես նաև արձագանքում են սուբվենցիոն ծրագրերով արված ասֆալտապատման աշխատանքներին, եթե համայնքներում դժգոհ են լինում աշխատանքներից և դիմում են իրենց: Չնայած վերոհիշյալ վերահսկող կառույցներին՝ որոնց պահելու համար հարյուրավոր միլիոն դրամներ է պետությունը ծախսում՝ կրկին Հայաստանում անորակ ասֆալտապատում է արվում, և դա արհեստավարժության կամ

նախագծանախահաշվարկային սխալի հետևանք չէ, այլ ճանապարհաշինության հիմնական բաղադրիչի՝ բիտումի, նախագծով հաշվարկած չափաքանակից քիչ օգտագործման: Նման անորակ ճանապարհների ճնշող մեծամասնությունը փորձաքննությունից հետո էլ ընդունվում է, ինչն օրինաչափորեն հանգեցնում է կոռուպցիոն ռիսկերի մասին նաև փորձագետների շրջանում արվող եզրակացություններին:

Օրինաչափ հարց է ծնվում, թե ինչպես է ստացվում, որ ամերիկահայ բարերար Քըրք Քըրքորյանի ֆինանսավորմամբ «Լինսի» հիմնադրամի կառուցած ճանապարհները 15 տարուց ավել ծառայում են ժողովրդին և պետությանը, իսկ ՀՀ պետական բյուջեով, նույն չափանիշներին և պահանջներին համապատասխան, և նույնչափ ֆինանսավորմամբ ասֆալտապատված ճանապարհները ծառայում են մեկ, առավելագույնը՝ երկու տարի:

Կրկնենք՝ անորակ աշխատանքի պատճառը նախատեսվածից անորակ և քիչ բիտումի օգտագործումն է, որն ասֆալտի ինքնարժեքի հիմնական մասն է կազմում: Պարզ է, որ մեծագույն ցանկության դեպքում էլ հնարավոր չէ պատահականություն որակել նման խախտումները և անորակ ճանապարհների ընդունումը:

Ի վերջո, հենց ինքը՝ Նիկոլ Փաշինյանը, հիշելով ասֆալտի վերաբերյալ իր հայտնի «խանդաղատանքով» ելույթը, որից հետո տարեկան 112 կմ ասֆալտապատման աշխատանքները հասցվեցին 500 կիլոմետրի, իսկ սուբվենցիոն ծրագրերի հետ միասին՝ 700-800 կմ-ի, ստիպված էր հրապարակայնորեն արձագանքել արդեն իր կառավարությանը վերագրվող ատկատների թեմային: «Հետևողականորեն փորձ է արվում տպավորություն ստեղծել, որ ճանապարհաշինության ոլորտում տեղի ունեցող փոփոխությունները կապված են իշխանության բարձրաստիճան ներկայացուցիչների ընտանիքների հետ»,- կառավարության նիստի ժամանակ ասաց Նիկոլ Փաշինյանը և, հորդորով դիմելով իրավապահ մարմիններին՝ Հակակոռուպցիոն կոմիտեին, մամուլի նմանատիպ ոչ մի հրապարակում անպատասխան չթողնել, շարունակեց. «Շատ ուշադիր պետք է լինել սուտ մատնության սահմանագծերն անցնելու պարա-

գայում: Սա մեզ համար սկզբունքային հարց է: Փորձ է արվում տպավորություն ստեղծել, թե մենք հավաքվել ենք, ասֆալտի ու ատկատի գործ ենք անում: Նրանց մոտ դա չի հաջողվի: Նախկին իշխանությունների ընտանիքների անդամներն էլ են այսօր հաղթում մրցույթներում, որովհետև լավ են աշխատում: Հայաստանում այսօր կա՞ ճանապարհաշինության ոլորտի ընկերություն, որը պարապ նստած է, և աշխատանք չունի: Հակառակը՝ այսօր ուզում ենք ընկերություններ գտնել, որ ավելի մեծ ծավալներով աշխատանքներ իրականացնեն»: Անորակ ասֆալտապատման թեմային Փաշինյանը նախկինում էլ գործադիրի 1.5 ժամանոց նիստի 70%-ը հատկացրել էր, որի ժամանակ նախարարի հետ ճանապարհների թերությունների մասին բազմաթիվ «հիմնավորումներ» բերելու ընթացքում նաև սարկազմով ՏԿԵ նախարար Գնել Սանոսյանին հարցնում էր, թե. «կարո՞ղ է ատկատ է վերցնում»: Այդ օրերին մամուլով տեղեկություններ տարածվեցին, թե ՔՊ կուսակցության անդամները դժգոհել են հանրապետության մարզերում ասֆալտապատ ճանապարհների անորակությունից և հոսանքազրկումներից: Դրանից որոշ ժամանակ անց նախարարն ազատվեց զբաղեցրած պաշտոնից՝ այն բանից հետո, երբ նախարարության համապատասխան ստորաբաժանման ղեկավարի նկատմամբ քրեական գործ հարուցվեց: Հիշեցնենք, որ խոսքը տարեկան մի քանի տասնյակ միլիարդ դրամի ճանապարհաշինական աշխատանքների «որակի» մասին է:

Ասֆալտապատումը և 2026 թ. ԱԺ ընտրությունները

Լիովին օրինաչափ էր, որ խորհրդարանական ընտրությունների նախաշեմին անորակ ասֆալտի խնդիրը պետք է փորձ արվեր սրբագրելու: Ընտրական տարվա նախաշեմին կառավարության հերթական նիստը նվիրվեց հենց այդ կարևոր գործին, այս անգամ հիմնախնդրի պատճառ հռչակելով անորակ բիտումը, չնայած հանրային ակտիվիստները և քաղաքացիները ահազանգում էին, ասֆալտապատման ընթացքում բիտումի ծայրահեղ քիչ, իսկ որոշ դեպքերում՝ ընդհանրապես չօգտագործելու մասին: «Ճանապարհների որակի հետ կապված մենք բարելավումներ ունենք, բայց շարունակում է խնդիր մնալ բիտումի որակը»,- կառավարության այդ նիստում հայտնեց ՏԿԵ նախարար Դավիթ Խուդաթյանը՝ վստահեցնելով, որ էկոնոմիկայի նախարարության և ՊԵԿ-ի հետ շարունակում են սահմանին բիտումի որակի խիստ վերահսկողությունը: Նա ասաց, թե միջինը 10 մեքենայից վերջին շրջանում 1-2-ն է հատել ՀՀ սահմանը, մնացածը որակի չափանիշներին չհամապատասխանելու պատճառով հետ են վերադարձվել՝ վստահեցնելով, որ արդեն մի քանի տասնյակ նման դեպքեր են արձանագրվել: Խուդաթյանն ընդունեց, որ դրա արդյունքում մրցութային խնայողությունները կփոքրանան: «Եթե նախորդ տարի մրցույթներում միջինը 40 %-ը պակաս գին էին առաջարկում, քան նախագծանախահաշվարկային գինն էր, ապա հիմա արդեն ունենք 20 %, և նախորդ տարվա թոփ հաղթողներն այս տարի այլևս թոփ հաղթողներ չեն: Կազմակերպություններ կան, որոնք նախորդ տարի իրականացրել են Հայաստանի ճանապարհաշինական աշխատանքների 30%, 40%, նույնիսկ 50%-ը, բայց այս տարի նրանք տատանվում են նոր կայացած մրցույթների 10-12 %-ի շրջանակներում՝ պայմանավորված անորակ աշխատանքները չընդունելու հետ»: Այս հայտարարությամբ նախարարը փաստացի ընդունեց, որ ընտրությունների նախօրեին են միայն որոշել ասֆալտի որակի խնդիրը լուծել, որպեսզի խուսափեն քաղաքական ընդդիմախոսների ծանրակշիռ քննադատությունից: Նա նաև ակամայից ընդունեց, որ ոլորտում մենաշնորհ ունեցող ընկերություն է եղել, որը փաստացի չի համաձայնել որակով աշխատել և չի մասնակցել նոր մրցույթներին, իսկ նախկինում անորակ աշխատանք է արել, և այդ աշխատանքն ընդունվել է: «Որովհետև մեկ-մեկ շահարկվում է, որ ասֆալտը կա, գծանշում արված է, բայց իրականում անորակ աշխատանքի համար փողը չենք տալիս: Հիմնականում, իհարկե, լինում են դեպքեր, որ մենք որակի հետ պրոբլեմներն ավելի ուշ ենք հայտնաբերում, բայց ընդհանուր առմամբ սկզբունքը դա է»,- հայտարարեց Խուդաթյանը՝ շարունակելով. «Մենք նախորդ տարի, մոտավորապես 30 կմ՝ շինարարների միջոցների հաշվին, դրանից առաջ կատարված աշխատանքների քանդման և նորից կառուցման աշխատանքներ ենք իրականացրել: 2025 թ. համար, ցավոք սրտի, կամ բարեբախտաբար այդ թիվն ավելի մեծ է լինելու»: ՏԿԵ նախարարը հայտարարեց, թե զգալի ճանապարհներ են քանդելու անորակ աշխատանքի համար՝ անուղղակիորեն փաստելով, որ ընտրություններով պայմանավորված նոր են սկսել որակին հետևել:

Այն, որ կառավարության այդ ողջ նիստը առաջիկա ընտրությունների քարոզարշավի համատեքստում էր, Խուդաթյանը ամրագրեց իր ելույթի ավարտին՝ շեշտելով. «Արդեն մենք տեսնում ենք տենդենցներ, որ քարոզարշավի շրջանակներում լրատվամիջոցները չընդունված ճանապարհները գնում լուսանկարահանում են և տպավորություն են ստեղծում որ այդ ճանապարհները մենք ընդունել ենք»: Փաստը,

որ ճանապարհներն իրոք «անորակ են» նկատելի է անգամ անզեն աչքով: Նույնիսկ այնքան գովերգած Հյուսիս-Հարավ ճանապարհի հատվածներ կան, որտեղ նոր ասֆալտն արդեն մեկ տարի անց ճաքեր է տվել՝ չնայած որ շատ արագ այդ ճաքերը փակվել են բիտումով, բայց դա խնդրի լուծում չէ:

Ճանապարհից խնայած կարևորագույն բաղադրիչը

Ասֆալտապատման մեջ ո՞րն է կոռուպցիոն ռիսկի հիմնական բաղադրիչը: Այն սև, մածուցիկ նյութն է: Ասֆալտն անփոխարինելի նյութ է համաշխարհային ենթակառուցվածքներում: Ըստ Ասֆալտային ծածկույթների դաշինքի՝ ԱՄՆ ճանապարհների ավելի քան 94%-ն ասֆալտապատված է: Ասֆալտը, որը հաճախ անվանում են «բիտում», կպչուն, սև, բարձր մածուցիկ հեղուկ կամ կիսապինդ ածխաջրածնային նյութ է, որը ստացվում է նավթի վերամշակումից: Այն առաջանում է հում նավթի թորման ընթացքում, որպես ենթամթերք, որից հեռացվում են ավելի թեթև բաղադրիչները՝ բենզինը և դիզելային վառելիքը՝ թողնելով խիտ, կպչուն մնացորդ: Ասֆալտի հիմնական բնութագրերը ներառում են կպչունությունը, որը կապելով քարը, ավազը, խճաքարը՝ դրանք վերածում է միատարր, դիմացկուն խառնուրդի: Փաստորեն, նրա պակասը և վատ որակն ուղղակիորեն ազդում են ճանապարհի ծածկույթի որակի և նրա երկարակեցության վրա: Բավարար քանակի բիտումը ջերմաստիճանի տատանումների հետ լայնանում և կծկվում է՝ նվազեցնելով ճաքերի առաջացումը: Իսկ Հայաստանի, մասնավորապես մայրաքաղաքի, նոր ասֆալտապատված փողոցները չեն դիմանում առաջին իսկ ձմռանը: Ասֆալտը դասակարգվում է արտադրության ջերմաստիճանի և փոփոխության հիման վրա, որոնցից յուրաքանչյուրը հարմարեցված է տեղանքի կլիմայական պայմանների հետ: Որակյալ ծածկ ապահովելու համար պետք է հումքն անընդհատ մատակարարել պտտվող թմբուկի մեջ, որտեղ տաքացումը և խառնումը տեղի են ունենում միաժամանակ:

Ասֆալտե ճանապարհը հիմնականում բաղկացած է երեք շերտից՝

- մակերևութային շերտ 2.5-5 սմ բարձրորակ ասֆալտի խառնուրդ (օրինակ՝ HMA կամ տաք ասֆալտ խառնուրդ)՝ հարթության և սահքի դիմադրության համար:
- հիմնական շերտը՝ 10-20 սմ ագրեգատ-ասֆալտ խառնուրդ՝ երթևեկության բեռները բաշխելու համար:
- Ենթահիմք՝ խճաքար կամ վերամշակված ասֆալտ՝ ճանապարհային պատվածքը կայունացնելու համար:

Ծանր բեռնատար մեքենաների տակ «աշխատող» մայրուղիները պահանջում են ավելի հաստ հիմքային շերտեր (օրինակ՝ 15-20)՝ բեռնատարներին դիմակայելու համար:

Ասֆալտապատումը պետք է արվի սալարկող մեքենայի միջոցով՝ հաստատուն արագությամբ (3–5 մղոն/ժամ)՝ հաստությունը պահպանելու համար:



Խառնուրդի ջերմաստիճանը վերահսկվում է: Իսկ որակի հսկողությունը կատարվում է միջուկի նմուշներ վերցնելու, խտությունն ու ամրությունը ստուգելու միջոցով: Ամփոփելով նշենք, որ ասֆալտը ոչ միայն սալահատակման նյութ է՝ այն կայուն, ծախսարդյունավետ ենթակառուցվածքային լուծում է, որը կապում է միջպետական բնակավայրերը և խթանում տնտեսական աճը:

Եզրակացություն

Հայաստանում փորձագետները և հանրային գործիչները պարբերաբար բարձրաձայնում են բիտումի բացակայության կամ ասֆալտի շերտի հաստության պահանջների խախտման մասին: Փաստորեն, խախտումներ կան ամենակարևոր և թանկ բաղադրիչի հարցում, ինչի հետևանքով պետությունը նույն աշխատանքի համար վճարում է մի քանի անգամ: Երևանում փողոցներ կան, որոնք ասֆալտապատվում են գրեթե ամեն տարի, իսկ քարով սալապատված ճանապարհների երկարությունը մշտապես անբավարար է:

Ստացվում է, որ Նիկոլ Փաշինյանի առաջարկած կոռուպցիոն մեխանիզմը շրջանցելու ծրագիրը չի իրականացվել՝ ինչի հետևանքով ամեն տարի ահռելի բյուջետային միջոցներ են ուղղվում ասֆալտապատմանը, որի գերակշիռ մասն անորակ է արվում: Այնինչ, այդ ծավալի բյուջետային միջոցները, որակի հաշվին խնայելու դեպքում, կարող էին ուղղվել սոցիալական առաջնահերթ բազմաթիվ ծրագրերի իրականացմանը, որպեսզի ՔՊ-ի իշխանության 8 տարիներին աղքատության մակարդակն անփոփոխ չմնար՝ մեծացնելով աղքատների և հարուստների միջև հեռավորությունը:

Միացումից անկախացում: ՀՀ և ԼՂՀ (Արցախ) Միջպետական հարաբերությունները և դրանց ազդեցությունը ներքաղաքական կյանքի վրա
(1992 թ. սեպտեմբեր – 1993 թ. մարտ ամիսներին)

Տարոն Վլադիկի Հակոբյան
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի աշխատակից, դասավանդում է ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայում

Թվում էր, թե մարտական գործողությունների սաստկացման այդ շրջանում Պաշտպանության պետական կոմիտեի (ՊՊԿ)[1] ստեղծումով կիարթվեն Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության (ԼՂՀ) օրենսդիր մարմնի և Հայաստանի Հանրապետության (ՀՀ) ղեկավարության փոխհարաբերությունները, սակայն բանակցային գործընթացում (1992 թ. օգոստոսի 27-ի Ալմա-Աթայի և Սոչիի սեպտեմբերի 19-ի համաձայնագրեր) ի հայտ եկած տարաձայնությունները վատթարացրին երկկողմ հարաբերությունները: Իսկ այդ տարաձայնությունների հիմնական պատճառներից մեկն այն էր, որ ԼՂ շուրջ բանակցային գործընթացը տարվում էր առանց ԼՂՀ մասնակցության: Բանակցային գործընթացում ԼՂՀ օրենսդիր մարմնի և ՀՀ նախագահի միջև առաջացած տարաձայնությունները նոր խթան հանդիսացան լարվածության մեծացման համար: Թեև ԼՂՀ առաջին գումարման գերագույն խորհրդի (ԳԽ) նախագահությունը շարունակում էր ՀՀ իշխանությունների հետ հարաբերությունները բարելավելու ուղիներ որոնել, սակայն այդ որոնումներն ապարդյուն անցան:

Կարելի է ասել, որ բանակցային գործընթացում ՀՀ նախագահը նորից չէր վստահում ԼՂՀ օրենսդիր իշխանությանը: Ուստի, հակառակ թևը սկզբնական շրջանում փորձեց ուղիներ որոնել և բարելավել հարաբերությունները ՀՀ իշխանությունների հետ: Այդ առնչությամբ 1992 թ. հոկտեմբերի 13-ին ԼՂՀ ԳԽ նախագահության պաշտոնական պատվիրակությունը՝ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանի գլխավորությամբ, այցելեց Երևան և հանդիպումներ ունեցավ ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հետ: Այդ հանդիպումների նպատակն էր պարզել՝ արդյո՞ք փոփոխություններ տեղի չեն ունեցել ԼՂՀ հանդեպ վարած ՀՀ քաղաքականության մեջ, մանավանդ, ինչպես նշեցինք, երբ ԼՂՀ վերաբերյալ վերջին երկու համաձայնագրերը ստորագրվել էին առանց ԼՂՀ ներկայացուցիչների մասնակցության:[2] Սակայն, կարելի է եզրակացնել, որ բանակցություններն անցել են անարդյունք: Պատճառը երևի պարզ է. ՀՀ-ում Արցախյան հիմնախնդիրը պետք է շահարկվեր ներքին կայունությունը պահպանելու հիմնավորմամբ:

Երկու հայկական հանրապետությունների բարձրագույն իշխանությունների հարաբերությունների լարվածությունը ԼՂՀ-ում ծնունդ տվեց բացահայտ ներքաղաքական առճակատումների, որոնք հանգեցրին ՊՊԿ-ի կողմից ԳԽ նախագահության

անդամների, ԳԽ պատգամավորների և ԳԽ աշխատակազմի որոշ անդամների վրա ճնշումների գործադրման:[3] Վերլուծելով ստեղծված իրավիճակը, կարելի է գալ այն եզրահանգման, որ ՀՀ ղեկավարությունը ՊՊԿ-ի լծակներով փորձում էր նորից պատժել ԼՂՀ ԳԽ նախագահության «անհնազանդ» անդամներին:

Այդ առնչությամբ նոյեմբերի 24-ին ԼՂՀ ԳԽ նախագահությունը ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին հղեց հետևյալ նամակը. «Մեծարգո նախագահ. ՀՀ-ի և ԼՂՀ-ի միջև ժամանակի ընթացքում Երևանում սկսված բնական երկխոսությունների օգտակարությունը հուշում է գործընթացի շարունակման անհրաժեշտությունը: Վիճակի օրավուր սրման պայմաններում, պատիվ ունենք, մեծարգո նախագահ, հրավիրելու Ձեզ ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտ՝ արժեքավորելու և կոնկրետացնելու շահավետ երկխոսությունը: Համաձայնություն տալու դեպքում, խնդրում ենք մեզ տեղյակ պահել Արցախ գալու Ձեզ համար նպատակահարմար ժամանակի մասին:

Ընդունեք, պարոն նախագահ, Ձեր նկատմամբ տածած հարգանքների հավաստիացումը»:[4]

Պետք է նշել, որ այդպես էլ ՀՀ նախագահը չցանկացավ հանդիպել ԼՂՀ ԳԽ նախագահության անդամների հետ: Նման պայմաններում ԼՂՀ ԳԽ նախագահությունը գաղտնի նամակ հղեց ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին:[5]

Նամակի բովանդակության վերաբերյալ նշված ժամանակաշրջանի քաղաքական գործիչների շրջանում

մինչ օրս էլ կան իրարամերժ տեսակետներ, սակայն, ուսումնասիրելով դրանք, կարելի է եզրակացնել, որ նամակում ԼՂՀ ԳԽ նախագահությունը բանակցային գործընթացի վերաբերյալ արտահայտել է իր տեսակետներն ու առաջարկությունները:

1993 թ. փետրվարի սկզբներին Արցախի իշխանությունների միջև գոյություն ունեցող հակասությունները թևակոխեցին մի նոր շրջան: Փետրվարի 10-ին, Ադրբեջանի կողմից ԼՂՀ տարածքի բռնազավթման առիթով, ԼՂՀ ԳԽ նախագահությունը որոշում կայացրեց 3 ամսով, մինչև 1993 թ. մայիսի 12-ը, երկարաձգել 1992 թ. օգոստոսի 12-ի ԼՂՀ ԳԽ նախագահության հրամանագրով ԼՂՀ ողջ տարածքում հաստատված ռազմական դրության ժամկետը:[6] Նույն որոշմամբ, ռազմական դրության հայտարարման կապակցությամբ ստեղծված ՊՊԿ-ն պետք է փետրվարի 18-ին ԼՂՀ ԳԽ նախագահությանը ներկայացներ հաշվետվություն՝ անցած 6 ամսվա ընթացքում կատարած աշխատանքի վերաբերյալ: Ինչպես նաև առաջիկա այդ 2 օրերին ՊՊԿ-ն պետք է ԼՂՀ ԳԽ նախագահությանը հանձներ իր ընդունած որոշումները, կարգադրություններն ու այլ փաստաթղթեր: Փետրվարի 12-18-ը փորձագետները պետք է ճշտեին դրանց օրինականությունը:

Փետրվարի 14-ին ԼՂՀ ԳԽ մանդատային, մարդու իրավունքների, պարկեշտության և ազգությունների մշտական հանձնաժողովի նախաձեռնությամբ հրավիրվեց ԼՂՀ ԳԽ պատգամավորների խորհրդակցություն: Հանդիպման ժամանակ, որին մասնակցել են նաև ԼՂՀ ՊՊԿ-ի և ինքնապաշտպանության ուժերի (ԻՊՈՒ) ղեկավարությունը, առաջարկվեց քննարկել ՊՊԿ-ի լիազորությունների լրանալու և ռազմական դրության ժամկետի երկարաձգման հետ առնչվող հարցեր: ՊՊԿ-ին մոտ շրջանակների ներկայացուցիչները ռազմական դրությունը մինչև պատերազմի ավարտը երկարաձգելու[7] և ՊՊԿ-ին լրացուցիչ լիազորություններ տրամադրելու պահանջներ ներկայացրին:

Նման իրավիճակի պայմաններում ԼՂՀ ԳԽ նախագահությունը փետրվարի 17-ին կրկին գաղտնի նամակ հղեց ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին:[8] Նամակում հաղորդվում էր ՀՀ տնտեսական և քաղաքական իրավիճակի պատճառների, ՀՀ նախագահի և ԼՂՀ օրենսդիր մարմնի փոխհարաբերությունների, ինչպես նաև բանակցային գործընթացում ԼՂՀ դիրքորոշումների անտեսման մասին:

ԼՂՀ ԳԽ նախագահության և ՊՊԿ-ի միջև քաղաքական հակամարտությունը փետրվարի 18-ին մտավ իր վերջին փուլը: ՊՊԿ նախագահ Ռոբերտ Քոչարյանը չներկայացավ ԼՂՀ ԳԽ նախագահության ընդլայնված նիստին, ուր պետք է լսվեր ՊՊԿ-ի 6 ամսյա գործունեության հաշվետվությունը: Նիստին մասնակից ՊՊԿ-ին մոտ կանգնած շրջանակները միաժամանակ արշավ ծավալեցին՝ պահանջելով առանց ՊՊԿ-ի հաշվետվությունը լսելու վերանայել ռազմական դրությունը 3 ամսով երկարաձգելու որոշումը: Նրանք այն կարծիքին էին, որ ռազմական դրությունը պետք է հայտարարվի մինչև պատերազմի վերջը:

Նիստում նաև առաջարկվեց ստեղծել փոքր խորհրդարան կամ ընդլայնված նախագահություն՝ նրա կազմում ընդգրկելով ոչ պատգամավորների: Բացահայտելով նման որոշումների կործանարար էությունը երիտասարդ հանրապետության համար՝ ԳԽ նախագահությունը մերժեց ընդունել որոշումներ, որոնք կարող էին հանգեցնել «բռնատիրության» հաստատմանը: Ի վերջո, երկար քննարկումներից և բանավեճերից հետո, գործադիր իշխանությունների ներկայացուցիչները ստիպված էին համաձայնել ողջամիտ միակ տարբերակի հետ՝ հրավիրել նստաշրջան, որը պետք է լսեր ՊՊԿ-ի և ԳԽ նախագահության զեկուցումները և որոշ փոփոխությունների ընդգրկումը ԳԽ-կանոնակարգի մեջ: Այն ակնկալվում էր հրավիրել առաջիկա 1 ամսվա ընթացքում, նստաշրջանի հարցերից մեկն էլ պետք լիներ ԼՂՀ ԳԽ ղեկավարության թափուր պաշտոնների համար ընտրությունները:

Այս իրադարձությունների առիթով ՀՀ ԳԽ մի խումբ պատգամավորներ հրապարակեցին հայտարարություն, որով մտահոգություն արտահայտեցին ցավալի միջադեպի առիթով՝ կատարվածը գնահատելով Հայաստանի ղեկավարության կոպիտ միջամտության հետևանք, պահանջեցին վերջ տալ ժողովրդավարա-

կան եղանակով ստեղծված մարմնի հեղինակության հետ կատարվող խաղին, միասնական ու համերաշխ գործունեություն ծավալել ԼՂՀ օրինական պետական մարմնի հովանու ներքո:[9]

Ինչպես տեսնում ենք, ներքաղաքական իրադրության սրումը հետևանք էր այն հանգամանքի, որ օրենսդիր և գործադիր մարմինները, որոնք առաջին հայացքից, թվում է, յուրովի ճիշտ են գործում, չունեին համատեղ և ներդաշնակ գործունեության մշակված ծրագիր, ինչի պատճառով մեկը մյուսին նրանց ներկայացրած մեղադրանքները, փաստորեն, վերաբերում էին երկուսին էլ: Պարզ է, որ ժողովրդի կողմից օրինական կերպով ընտրված օրենսդիր մարմնի և պատերազմական շրջանի թելադրանքով ստեղծված գործադիր մարմնի միջև համերաշխության առկայության, երկուստեք քաղաքական ավելորդ պատվախնդրության բացակայության դեպքում նրանց երկուսի ջանքերը լիովին կկպատակամղվեին ընդհանուր շահին՝ ադրբեջանական ագրեսիայի դեմ հաղթանակի հասնելու գործին, այլ ոչ թե ներքին հակասությունների հաղթահարմանը կամ մեկը մյուսի նկատմամբ գերակայության հասնելուն: Չի կարելի ժխտել, որ ՊՊԿ-ն, որպես պատերազմական շրջանի ռազմաքաղաքական մարմին, պարտավոր էր Հանրապետության գերագույն ղեկավար մարմնի առջև իր պատասխանատվության ու իրավունքների շրջանակներում լուծել ոչ միայն ռազմական ոլորտին վերաբերող խնդիրները, այլև դրանցից բխող, դրանցով պայմանավորված և դրանց հետ առնչվող՝ ներքին կյանքի հարցերը: Հենց այդ շրջանակներից դուրս գալը, ԼՂՀ ԳԽ-ի ու նրա նախագահության գործունեությունը սահմանափակելու ձգտումը, ինչը պարզորոշ կերպով նկատելի էր ստեղծված իրադրության խորապատկերին, հանդիսացել է ներքաղաքական կյանքի լարվածության գլխավոր պատճառը:

Մարտի 21-ին իր աշխատանքը վերսկսեց ԼՂՀ առաջին գումարման ԳԽ առաջին նստաշրջանը: Օրակարգում էին հետևյալ հարցերը՝ ԼՂՀ ՊՊԿ-ի հաշվետվությունը, ԼՂՀ ամբողջ տարածքում ռազմական դրության ժամկետի մասին, ԼՂՀ ԳԽ ժամանակավոր կանոնակարգում և ԼՂՀ ԳԽ-ի մասին օրենքում փոփոխություններ մտցնելը, ԼՂՀ ԳԽ նախագահի և նախագահի տեղակալի ընտրությունները, ԼՂՀ ԳԽ նախագահության հրամանագրերի և օրենսդրական ակտերի ուղղությամբ որոշումների հաստատումը:

ՊՊԿ-ի հաշվետվությունը ներկայացրեց ՊՊԿ նախագահ Ռոբերտ Քոչարյանը:[10] ԼՂՀ ԳԽ նախագահության հաշվետվությամբ հանդես եկավ ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանը:[11] Նա անդրադարձավ պետականության ձևավորման խնդիրներին, ինչպես նաև նշեց օրենսդիր և գործադիր մարմինների միջև առկա տարաձայնությունների առարկայական և ենթաառարկայական պատճառները:[12]

ԼՂՀ ԳԽ նախագահի թեկնածուներից ոչ մեկին չհաջողվեց հավաքել ձայների անհրաժեշտ քանակություն: ԳԽ-ի նստաշրջանը որոշեց Գեորգի Պետրոսյանին թողնել ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար մինչև ապրիլի վերջը, այնուհետև կրկին անդրադառնալ այդ հարցին: Սակայն ապրիլի վերջին քվորում չլինելու պատճառով այդ նիստը տեղի չունեցավ, որոշում կայացվեց նիստը անցկացնել ԳԽ-ի կրկնական և նոր ընտրությունների անցկացումից հետո:

Մինչ նորաստեղծ հանրապետության ներքին կյանքին վերաբերող հարցերում իրար էին հաջորդում իշխանության օրենսդիր և գործադիր մարմինների միջև հակասությունների ծագման առիթները, որոնք ավելի ու ավելի ցայտուն էին դարձնում այդ հարցերի նկատմամբ նրանց մոտեցումների և, ընդհանրապես, որդեգրած գործելակերպի տարբերությունները, ռազմական գործողությունները հակամարտության գոտում նոր թափ էին ստանում միջնորդների անգործության պատճառով:

(Շարունակելի, սկիզբը՝ «Դրոշակ» 2026 2, 6, 7)

Հղումներ

1 Տես Հակոբյան Տ., ԼՂՀ հռչակումը և պետական շինարարության գործընթացը (1991-1994 թթ.), Եր., 2011,, էջ 127:
2 Տես «Երկիր», 30.10.1992:
3 Տես Հակոբյան Տ., նշվ. աշխ., էջ 140:
4 Տես ԱՀ պետարխիվ, Ֆոնդ 254, ցանկ 4, պահպանման միավոր 6, կապ 1, թերթ 22:
5 Տես Հակոբյան Տ., նշվ. աշխ., էջ 147:
6 Տես ԱՀ պետարխիվ, Ֆ. 254, ց. 4, պ.մ 7, կ.1, թ. 52-53:
7 Տես «Երկիր», 17.02.1993:
8 Տես «Երկիր», 23.02.1993:
9 Տես «Երկիր», 19.02.1993:
10 Տես ԱՀ պետարխիվ, Ֆ. 254, ց. 4, պ.մ 2, կ.1, թ. 41-50:
11 Նույն տեղում, թ. 59-65:
12 Տես «Երկիր», 23.02.1993:

Գաղափարական պայքարի Դրօշը դեռ երկար պետք է փողփողայ իր բարձունքին վրայ

Հարցազրոյց «Դրօշակի» խմբագիր ԱՐՏԱՇԷՍ ՇԱՀԲԱԶԵԱՆԻ հետ

Վրէժ-Արմէն – Սովորական երեւոյթ չէ Դաշնակցութեան պաշտօնաթերթի խմբագրին հետ հարցազրոյց մը՝ իր խմբագրած նոյն թերթին իսկ մէջ: Սակայն 2026 թուականը յոբելեանական է «Դրօշակի» համար, ինչ որ անկասկած կ՚արդարացնէ նման հարցազրոյցի մը գաղափարը: Բայց նախ քան թերթին մասին խօսիլդ, Արտաշէս, կ՚ուզէի սկսիլ քու հեւքոտ աշխատանքէն, որուն վկան եմ ես հեռուէ հեռու: Ինչպէ՞ս կը հասնիս դիմել աշխատակիցներուդ, ստանալ անոնց գրութիւնները եւ կազմել հերթական համարը՝ «Համազգային»-ի Կեդրոնական վարչութեան անդամակցութեանդ եւ այլ պատասխանատուութիւններուդ կողքին:

Արտաշէս Շահբազեան – Իսկապէս յոբելեանական է տարին Դաշնակցութեան անդրանիկ պարբերականի համար: Յոբելեանական ոչ պարզապէս չոր թուերի իմաստով: Երբ մտովի անդրադառնում ես «Դրօշակի» անցած ճանապարհին միանգամից կարծես ուսերիդ ծանրանում է հսկայական նուիրումի, գործի, ազգին անսակարկ ծառայութեան ժառանգուած բեռը: Այդ բեռն առաւել մեծ կշիռ ու խորհրդանշական իմաստ է ձեռք բերում, երբ մտաբերում ես նաեւ, թե կուսակցութեան անմահների փաղանգից ինչ երեւելիներ են իրենց դաշնակցական-յեղափոխական գործունէութեան մէկ շօշափելի բաժինը յատկացրել «Դրօշակի» պարբերական լոյսընծայման ոչ երկրորդական առաքելութեանը: Երբեմն ինձ թւում է, թե թիկունքումս կանգնած Քրիստափոր Միքայելեանը լուռ հետեւում է, թե ինչով եմ զբաղուած «Դրօշակի» աշխարհում: «Դրօշակի» հրատարակումը հսկայական պատասխանատուութիւն է, որ ստիպում է առնուազն հաւատարմօրէն շարունակել նախորդների գործը, հարազատ մնալով թերթի առինքնող կենսագրութեանը եւ հետապնդած նպատակին: Չէի ցանկանայ ծանրանալ աշխատանքի ծաւալի, «Դրօշակը» ստեղծողների ծանրաբեռնուածութեան հարցերի վրա, որովհետեւ մենք, ընդգրկուն առումով, այն «հարուստ» կուսակցութիւնն ենք, որի տանիքի ներքոյ, ոչ նուիրումով կարող ես մարդ զարմացնել, ոչ հերոսութեամբ, ոչ կատարած աշխատանքով, բայց այ անհամեստութեամբ իսկապէս կարող ես զարմացնել, դրա համար զգուշանամ չհասնելու համար այդտեղ: Տրուած հարցին այնուամենայնիւ պատասխանած լինելու համար աւելացնեմ, որ ի հարկե, ինչպէս դաշնակցական գործի իւրաքանչիւր ճակատում, մեր ընկեր խմբագիրները ամենուր եւ մշտապէս պարտաւորուած են եղել փոքր մարդուժով եւ տեխնիկական հնարաւորութիւններով իրականացնել անհամեմատ մեծ գործ, անհրաժեշտ կարիքի պակասը լրացնելով ծանրաբեռնուած աշխատանքով: Ես այդ աշխատանքը նմանեցնում եմ թմբուկի մեջ սկիւռի վազքին, որը վերջ չունի եւ ինչքան էլ անես թւում է թե դոփում ես նոյն տեղում: Մեր մամուլի իւրաքանչիւր թիւը հանձնելու օրն իսկ զգում ես, որ կարող ես յաջորդը ուշացնել եթե նոյն այդ օրը ծուլանալու շռայլութիւնը թոյլ տաս քեզ: Բարեբախտաբար այդ զգացողութիւնը ունեն նաեւ այն մարդիկ, ում գործակցութեամբ ապահովւում է «Դրօշակի» կանոնաւոր եւ անխափան գործունէութիւնը: Այնպէս որ մեր դէպքում նպատակը թելադրում է անելիքը:

«Դրօշակի» խմբագրատան մուտքը (Ժնեւ)

Վ.-Ա. – Հիմա պիտի խնդրէի, որ մեր ընթերցողին հակիրճ պատկերացում տայիր «Դրօշակի» անցած ճանապարհի, նրա պատմութեան մասին:

Ա. Շ. – «Դրօշակը» սկսել է լոյս տեսնել հեռաւոր 1891 թուականից: Միւս կողմից, յայտնի է, որ պատմական իրադարձութիւնների թելադրանքով, ինչպէս եւ այլ պատճառներով մի շարք անգամներ «Դրօշակի» հրատարակութիւնն ընդհատուել է: Այնպէս որ անցնող 135 տարիների ընթացքում ՀՅԴ գլխաւոր պաշտօնաթերթը լոյս է տեսել 80 տարի, ինչը, դարձեալ յոբելեանական լինելով նոյնպէս պատկառելի ժամանակահատուած է մամուլի համար:

Վ.-Ա. – Բայց միթէ ՀՅԴ հիմնադրութեամբ ալ չ'սկսիր «Դրօշակ»-ի պատմութիւնը:

Ա. Շ. – Կարելի է ասել, որ «Դրօշակի» կենսագրութիւնը սկիզբ է առնում դեռեւս իր ֆիզիկական ծննդից առաջ: 1890 թուականին (ամիսը յայտնի չէ), Դաշնակցութեան հիմնադրումը հռչակելու վերաբերեալ հրապարակուել է «Մանիֆեստ Հ. Յ. Դաշնակցութեան» մեկ էջանոց փաստաթուղթը: Մեզ է հասել նաեւ 1891 թուականի մայիսին No.2 թուագրութեամբ լոյս տեսած մէկ այլ հրապարակում, որը կրում է «ԴՐՕՇԱԿ-ի ԹՌՈՒՑԻԿ ԹԵՐԹ» անուանումը: Այս «Թռուցիկ Թերթի» ճակատային մասում գրուած է, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը մօտիկ ապագայում կ'ունենայ «Դրօշակ» անունով իր օրգանը: Իսկապէս էլ նոյն թուականի մայիսի ամսաթուով լոյս է տեսնում «Դրօշակի» առաջին համարը: 1891-ի սեպտեմբերին լոյս է ընծայուել «Դրօշակի» եւս մէկ թիւ, 1892-ին եւս 2-ական համար եւ այդպէս շարունակ: Առաջին 2 համարները հրատարակուել են Թիֆլիսում, 3-րդ համարը Ռումինիայի Կոստանցա քաղաքում, որից յետոյ հրատարակութեան մշտական վայր է դառնում Շվէյցարիայի Ժնեւ քաղաքը:

Վ.-Ա. – Ո՞վ, աւելի ճիշտ, որո՞նք խմբագրած են զայն այդ սկզբնական տարիներուն:

Ա. Շ. – «Դրօշակի» խմբագիր եղել է Քրիստափոր Միքայէլեանը, իր կողքին ունենալով հիմնադիր երրորդութեան միւս անդամներին՝ Սիմոն Զաւարեանին ու Ռոստոմին: Զանազան ժամանակներ իբր խմբագիր կամ խմբագրութեան անդամ նրանց կողքին եղել են նաեւ Սիմոն Շխեանը, Յոնան Դաւթեանը, Գարեգին Խաժակը, Միքայէլ Վարանդեանը, Էդուարդ Ակնոունին, Սիամանթոն, Աւետիս Ահարոնեանը եւ իբր աշխատակից ուրիշ շատերը: Ուրեմն եւ ոչ թե պարզապէս իր շուրջ եղած անուններով, այլ արձանագրուած գործից ելնելով կարելի է հաստատել, որ «Դրօշակը» Դաշնակցութեան գաղափարական խոսափողն է, կուսակցութեան հերոսական երթի մասնակիցը, ՀՅԴ եւ Հայոց պատմութեան տարեգիրը:

Սկիզբի այդ ընթացքը շարունակվում է մինչեւ 1914 թուականը, երբ դժնդակ իրադարձութիւնների բերումով «Դրօշակի» հրատարակումը ընդհատում է մինչեւ 1925 թուականը: Նշուած թուականից Փարիզում, Սիմոն Վրացեանի եւ Արշակ Զամալեանի խմբագրութեամբ «Դրօշակը» լոյս է տեսնում մինչեւ 1933 թուականը: Յաջորդ երկար ընդհատումից յետոյ «Դրօշակը» վերահրատարակում է Բէյրութում՝ 1969-1985 թուականներին՝ սկզբում Բարգէն Փափազեանի, ապա Սարգիս Զէյթլեանի խմբագրութեամբ, պետական գրանցման հետ կապուած պահանջներից ելնելով փոխուած անունով՝ որպէս «Ազդակ շաբաթօրեակ-Դրօշակ»: Սարգիս Զէյթլեանի ողբերգական անհետացումից յետոյ մինչեւ 2005 թուականը պաշտօնաթերթը խմբագրում է Նազարէթ Պէրպէրեանը՝ սկզբում Բէյրութում, ապա Աթէնքում, այնուհետեւ Երեւանում: 2007 թ. մինչեւ 2011 թուականը գլխաւոր խմբագիրն է Ռուբէն Յովսէփեանը՝ ընկերակցութեամբ Կարէն Խանլարեանի: Պետք է ասել, որ այս շրջանին հետեւած յաջորդ ընդմիջման ժամանակահատուածում եւս «Դրօշակի» հրատարակման պահանջը չի դադարել կուսակցութեան շարքերում: Առաջնորդուելով Ընդհանուր ժողովի որոշմամբ ՀՅԴ Բիւրոն ձեռնարկեց վերահրատարակութեան գործը 2020 թուականի յունուարից, երբուանից սկսած մինչեւ այսօր «Դրօշակի» խմբագրման պատիւը վերապահուել է ինձ: Յուսանք, որ կուսակցական ու ազգային արժէքի վերածուած «Դրօշակի» ընթացքը, դեռ երկար կը շարունակուի եւ կը փոխանցուի կուսակցութեան գալիք սերունդներին:

Վ.-Ա. – Այո, «Դրօշակի» հրատարակման ոդիսականին միայն հպանցիկ արձագանգը արդէն պատկառանք կը ներշնչէ, սակայն աւելի պատկառելի է մեր անդրանիկ օրգանի առաքելութիւնը, վաստակը եւ ունեցած դերակատարութիւնը:

Խնդրեմ կարելի՞ է անդրադառնալ այս հարցերուն եւս՝ վեր առնելու համար ոչ միայն «Դրօշակի» հարուստ կենսագրութիւնը, այլեւ արժէքը:

Ա. Շ. – Համաձայն եմ, որ «Դրօշակը» դաշնակցական մեծ արժէք է, աւելին՝ այն մի իրատեսակ խորհրդանիշ է ու, թող չափազանցութիւն չթուայ, եթէ ասեմ

որ ինձ համար ՀՅԴ խորհրդանիշների՝ օրհներգի, զինանշանի ու դրօշի նման մի խորհրդանիշ էլ «Դրօշակն» է եւ պատահական չէ, որ թերթն այդ անունն է կրում: Իմացողը գիտէ, որ Դաշնակցութիւնը ոչ թե նեղկուսակցական, այլ ազգային ամբողջական գաղափարախօսութեան դաւանող կուսակցութիւն է: Նա իր գործունէութեան առաջին շրջանից իսկ վերածուել է ազգային-յեղափոխական եւ գաղափարական շարժման: «Դրօշակին» վերապահուել է գաղափարական առաջնորդող մամուլի առաքելութիւնը: Պատահական չէ, որ մեր զինատարները, ֆիդայիներն ու գործիչները զէնք-զինամթերքի հետ Էրգիր էին հասցնում նաեւ պաշտօնաթերթը: Պատահական չէ, որ «Դրօշակի» խմբագիր եղել են իրենք՝ կուսակցութեան հիմնադիր այրերը, իսկ թերթի շուրջ մշտապէս խմբուած են եղել մեր լաւագոյն մտաւորականները:

«Դրօշակի» համար Արեւմտահայաստանի անցուդարձի, այնտեղ ծաւալուած ազատագրական պայքարի փոթորկուն իրադարձութիւնների մասին թղթակցութիւններ էին փոխանցում յայտնի ֆիդայիներն ու գործիչները ինչպիսիք էին Հրայր Դժոխքը, Պետոն, Յովսեփ Եուսուֆեանը եւ ուրիշներ: «Դրօշակի» այդ օրերի համարները թերթելիս կարծես երեսիդ է խփում իրականութեան տաք շունչը, որն արտացոլուած է Վանից, Կարսից, Մուշից, Սասունից, Էրզրումից ու այլ վայրերից ուղարկուած թղթակցութիւններում:

1892 թուականին տեղի ունեցած կուսակցութեան Առաջին ընդհանուր ժողովը Թիֆլիս ու Թաւրիզ կենտրոնների կողքին ղեկավար Բիւրոյի իրաւասութիւններով է օժտում նաեւ Ժնեւում հաստատուած «Դրօշականներին», ի դէմս Քրիստափոր Միքայէլեանի ու միւսների: 1895 թուականին Թիֆլիսում տեղի ունեցած ռայոնական ժողովը փոխում է Թաւրիզի մարմնի կարգավիճակը, իսկ 1896-97-ի ռայոնական ժողովը որոշում է «Կազմակերպել մի ուժեղ խմբագրութիւն «Դրօշակի» համար ... որ միեւնոյն ժամանակ լինելու է ամբողջ Դաշնակցութեան արտասահմանեան ներկայացուցիչ-Բիւրոն»: Փաստացի ստեղծուում է Արեւմտեան Բիւրոն, որի կարգավիճակը պաշտօնապէս հաստատում է 1898-ի Երկրորդ ընդհանուր ժողովը: «Դրօշակի» խմբագրութիւնը ներկայացնող Արեւմտեան Բիւրոյի իրաւասութեան ներքոյ էին գործում Պոլսոյ, Իզմիրի, Կիլիկիայի, Բալկանների, Եգիպտոսի, Ամերիկայի կենտրոնական կոմիտէութիւնները եւ Եւրոպայի ուսանողական միութիւնը: Ես հաւանաբար մի փոքր շեղուեցի, սակայն նպատակս էր փաստել, թե կուսակցութեան մեջ ինչ կարեւորութիւն ու արժէք էր իրենից ներկայացնում «Դրօշակը»:

Վ-Ա. – Հաճելի է ի հարկէ երեւակայութեամբ վերապրիլը այդ ամենը, սակայն այդ այլեւս պատմութիւն է, ժամանակները փոխուեր են, փոխուեր են խնդիրները եւ այս իրողութիւնը չի կրնար չազդել նաեւ մեր մամուլի վրայ:

Ա. Շ. – Անշուշտ շատ ջրեր են հոսել այն օրերից, ցաւօք հայ ժողովրդի համար շարունակւում է գոյատեւման, ինքնիշխանութեան համար պայքարը: Հայաստանի վերանկախացումից յետոյ, որի մասին ոչ միայն մենք, այլեւ մեր նախորդ սերունդներն էին երազել, նոր ու ոչ պակաս բարդ մարտահրաւէրների առջեւ կանգնեց հայ ժողովուրդը: Բանական հայ մարդը չի կարող հանգիստ մտածել այն ողբերգութեան մասին, որը բաժին հասաւ Արցախին ու արցախահայութեանը: Անհերեւակայելի էր, որ Հայաստանում իշխանութեան կը գայ թրքամէտ տեսակ, որը հարցականի տակ կը դնի Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխանութիւնը: Որպէս մէկ հայութիւն, Սփիւռքի հետ միասնականանալու փոխարէն, դրածոյ իշխանութիւնները, մերժեցին ու օտարեցին Սփիւռքը, առնուազն արտերկրի հայութեան այն մեծամասնութեանը, որը չի պարում իրենց դուդուկի տակ եւ չի ծափահարում իրենց հայրենադաւ, ազգակործան ծրագրերին: Ցաւով պիտի ասել, որ «Դրօշակն» այս պայմաններում պարտաւորուած է նախկին ժամանակների եռանդով լծուել հայրենիքի ու հայութեան շահերի պաշտպանութեան գործին, կանգնել առաջին գծի վրա այն պայքարի, որը մղում է իրեն կեանք տուած կուսակցութիւնը: Որպէս Դաշնակցութեան հարազատ զաւակը «Դրօշակը» շարունակական պայքարի մէջ է մեր արժէքների, մեր ռազմավարական նպատակների, արցախահայութեան իրաւունքների համար:

Վ-Ա. – Ի՞նչ տարածում ունի պաշտօնաթերթը, ի՞նչ է պահանջարկը: Արդեօք այսօր մամուլի թղթային տարբերակին փոխարինելու չի՞գար էլեկտրոնային տարբերակը:

Ա. Շ. – Գաղտնիք չէ, որ այսօր էլեկտրոնային մամուլը թղթային տարբերակի իր աւագ եղբօրը բաւականին նեղն է դրել եւ որոշ պարագաներում ամբողջովին գրաւել է նրա տեղը: Այնուամենայնիւ ամենահզօր ու զարգացած երկրներում անգամ շարունակւում է մեծ տպաքանակով մամուլի տպագրութիւնը: Սա նշանակում է, որ վերջինիս պահանջարկը չի մարում: «Դրօշակը» այսօր նոյնպէս ոչ մեծ տպաքանակով տպագրւում եւ բաժանւում է մեր կուսակցական կառոյցներին ու ընկերներին, տրամադրւում է տարբեր գրադարանների, մտաւորականների, յօդուածագիր հեղինակների, ինչպէս եւ պարզ ընթերցողների՝ միշտ անվճար: «Դրօշակի» հասցէատիրոջ մասին խօսելիս աւելացնեմ նաեւ հետեւեալը. ՀՅԴ առաջին պարբերականը շարունակում է իրականացնել գաղափարական, քաղաքական, քարոզչական, դաստիարակչական գործառոյթ, որն էլ որոշում է, թէ ի՞նչ թիրախի է այն ուղղուած:

Վ-Ա. – Ակնարկեցի ժամանակներու փոփոխութեան մասին. կ՚ըսուի, թէ հիմա գաղափարախօսութիւններու ժամանակը չէ, մարդիկ լուրջ ու ծաւալուն յօդուածներ կարդալու փոխարէն կը

նախընտրեն զիրենք հետաքրքրող լրատուութիւնը փնտռել առցանց: Շատ կարեւոր են, բովանդակութեան հետ, նաեւ ձեւի, մատուցման մօտեցումները:

Ա. Շ. – Անշուշտ ծանօթ եմ գաղափարախօսութիւնների, քարոզչութեան հնացած լինելու մասին խօսակցութիւններին: Բայց տեսնում եմ նաեւ գաղափարախօսութիւնները մերժող քարոզչութեան խորքում ազգերի իրաւունքները մերժող, ինքնութեան պաշտպանութեանն ուղղուած խօսոյթը նացիոնալիզմ ու ֆաշիզմ պիտակաւորելու գաղափարախօսութիւնը: Այս ամենը այլ բան չէ, քան լիբերալ գլոբալիզմի գաղափարական արշաւը, որի ներքոյ սեփական ընտրեալութեան եւ գերակայութեան ռասիստական դիրքերից փորձ է արւում աշխարհը վերաենթարկեցնել, ոչնչացնելով միւսների ինքնիշխանութիւնը, ինքնատիպութիւնը, պատմական ու հոգեւոր ինքնութիւնը: Հայաստանում նոյնպէս իշխանութեան եկող ուժը յայտարարեց, թե մերժում է գաղափարախօսութիւնները, ինքը, սակայն հետեւողականօրէն թունաւորեց ու պառակտեց ազգային միասնականութիւնը, հենց լիբերալ գլոբալիզմից ծնունդ առած ազգի պատմական, արժէքային ինքնութիւնը մերժելու, դրանք վերազգային գաղափարներով փոխարինելու քաղաքականութիւն իրականացրեց:

Ես կը պնդէի հակառակը՝ այսօր աշխարհում տեղի է ունենում գաղափարական հակադիր բեւեռների սուր բախում, լիբերալ-գլոբալիզմի համաշխարհային գերիշխանութեան հետ առճակատուել է ժողովուրդների ու պետութիւնների ինքնիշխանութեան, ինքնութեան, բազմազանութեան, պատմական, հոգեւոր ու բարոյական աւանդական արժէքների համար պայքարող համաշխարհային մեծամասնութեան հոսանքը:

Վ.-Ա. – Իսկ այդ առճակատումը տեղի կ՚ունենայ նաեւ մեր երկրին մէջ:

Ա. Շ. – Դժբախտաբար հայ ապազգայինների սադրանքով այս բախման գիծն անցնում է մասնաւորապէս հենց մեր երկրով, սպառնալիք դառնալով պետութեան, ազգի, ընտանիքի, եկեղեցու իրաւունքների համար: Ուրեմն ապագաղափարական ժամանակների մասին խօսոյթը մաս է կազմում դրա հեղինակների նենգօրէն մտածուած ծրագրերին: Հետեւութիւնն ակնհայտ է, օտար ու հակազգային գաղափարներին կարելի է յաղթել միայն աւելի կենսունակ, ազգաշահ ու հարազատ գաղափարներով: Դէմ չեմ, որ մեր արագընթաց ժամանակներում մարդիկ ձգտում են արագ մատուցուող կարճ տեղեկատուութեան, բայց այդ, այսպէս ասած, կսմիթներով կարելի է պահի մեջ տրամադրութիւններ ընդհանրացնել, հնարաւոր չէ, սակայն, իրականացնել մտքերի խմորում, մտքի յեղաշրջում, զանգուածային մտածողութեան բարեշրջում: Ժամանակակից մարդը լողում է տեղեկատուութեան ովկիանոսում եւ երբ դու չես կարողանում քոնը հրամցնել նրան, ապա անպայման ուրիշն է անում այդ բանը: Այսօրուայ հայ հասարակութիւնը հենց այդ գործընթացի զոհն է:

Վ.-Ա. – Իսկ ի՞նչ պիտի ընենք ընթերցողի հետ այսօրուան լեզուով խօսելու, զայն աւելի ամուր առնչելու համար մեր մամուլին, սկսելով «Դրօշակ»էն:

Ա. Շ. – Ինչ վերաբերւում է ժամանակակից լինելուն՝ ասելիքով, բովանդակութեամբ եւ ձեւով, ապա նորացման ձգտումը պետք է լինի մշտական ընթացք, առանց սակայն շեղուելու «Դրօշակի» եւ մեր աւանդական մամուլի առաքելութիւնից բխող էութիւնից, արմատներից: «Դրօշակը» ազատ, սակայն ոչ անկախ մամուլի միաւոր է: Պաշտօնաթերթի թղթակիցների մեծամասնութիւնը ոչ կուսակցական, միաժամանակ հայրենասէր, ազգային ինքնութիւնը կրող երիտասարդ մտաւորականներ ու գիտնականներ են: Ես որպէս «Դրօշակի» խմբագիր մեր հեղինակների գրածի հետ խնդիր չունեմ մինչեւ այս պահը, երբ նրանցից որեւէ մեկը փորձի ապացուցել օրինակ, թե Արցախը մերը չի եղել, քննութեան առարկայ կը դարձնի Հայոց սուրբ եկեղեցու դրուածքը եւ նման այլ յիմարութիւններ: Բարեբախտաբար այդպիսի արտառոց երեւոյթների հետ դեռ չենք բախուել, ինչպէս ասուած է նմանը զնմանն կը գտանէ եւ մեզ հետ համագործակցելու ձեռք ենք մեկնում նրանք ովքեր լաւ գիտեն եւ իրենց եւ մեզ:

Հասկանում եմ, որ ժամանակակից աշխարհում ուր սահմանները ամենուր խորտակուած են տեղեկատուական հոսանքների առաջ եւ նորարարութիւնները փոխանցւում են համացանցային արագութեամբ, կարեւոր է ոչ միայն ասելիքը, այլեւ վերջինիս մատուցման ձեւը: Կարծում եմ ընթերցողի համար ակնյայտ է, որ «Դրօշակի» պարագայում մենք այդ պահանջները նկատի ենք առնում: Եւ աւարտեմ հետեւեալ համեմատութեամբ. խորհրդային կայսրութիւնը իրեն մաս կազմող ժողովուրդների մշակոյթների համար շրջանառութեան մէջ էր դրել մի խորամանկօրէն մտածուած կարգախօս՝ *ձեւով ազգային՝ բովանդակութեամբ սոցիալիստական*: Այսօրուայ գլոբալիստական աշխարհի համար կենսունակ այս կարգախօսը, ըստ որի ազգայինը պետք է լինի ձեւ, իսկ համընդհանուրը՝ բովանդակութիւն, մենք պետք է կիրառենք ճիշտ հակառակ կերպով՝ **բովանդակութեամբ ազգային՝ ձեւով համամարդկային**:

Վ.-Ա. – Եւ այդպէս է, որ պիտի տանինք մեր գաղափարական պայքարը:

Ա. Շ. – Այո, անկասկած գաղափարական պայքարի այդ Դրօշը դեռ երկար պետք է փողփողայ իր բարձունքի վրայ: ■

Հարցազրոյցը վարեց ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ

Մկրտիչ Արմենի անտիպ նամակները Գևորգ Ղարիբջանյանին
(Մկրտիչ Արմենի ծննդյան 120-ամյակի առիթով)

Դավիթ Գասպարյան
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մկրտիչ Արմեն (Մկրտիչ Գրիգորի Հարությունյան – Ալիքյան, 27. 12. 1906, Ալեքսանդրապոլ – 22. 12. 1972, Երևան): Բանաստեղծ, արձակագիր, սցենարիստ, թարգմանիչ, գրական գործիչ: Չարենցի աջակցությամբ 1925-ից բնակություն է հաստատել Երևանում: Չարենցի գնահատած ու բարձրացրած երիտասարդ գրողներից է: «Հոկտեմբեր» գրական խմբակցության կազմակերպիչներից, «Նոյեմբեր»-ի եռանդուն գործիչներից մեկը: 1932-ին ավարտել է Մոսկվայի կինեմատոգրաֆիայի ինստիտուտի սցենարական բաժնի երկամյա դասընթացը: Նրա «Ինչպե՞ս են գրվում վեպերը» («Գրական թերթ», 1932, թիվ 7, 30 ապրիլ), հատկապես «Չարենցի և հարակից խնդիրների մասին» («Գրական թերթ», 1933, թիվ 7, 21 ապրիլ) հոդվածները ժամանակի գրական կարևոր վավերագրեր են: Հիշարժան են նրա «Երևան» (1931), «Սկաուտ N 89» (1933) վեպերը և «Հեղնար աղբյուր» վիպակը (1935, 1971-ին Հայֆիլմը նկարահանել է որպես գեղարվեստական շարժանկար): 1937 թ. նոյեմբերի 5-ին կալանավորվել է, բռնադատվել, ազատվել է 1945 թ. հուլիսի 7-ին: Հետագայում ռուս կնոջ հետ ապրել է Մոսկվայում՝ շարունակելով մասնակցել հայ գրական կյանքին: Ժառանգներ չի ունեցել: Հրատարակել է «Յասվա» (1953), «Ժիրայր Գլենց» (1967) վեպերն ու «Պատվիրեցին հանձնել ձեզ» (1964), պատմվածքների ժողովածուն: Հայերեն է թարգմանել Չեխովի, Գորկու, Շոլոխովի, Մայակովսկու և այլ գրողների առանձին երկեր: 1966-1973 թթ. տպագրվել է նրա «Երկեր»ի հինգհատորյակը:

Գևորգ Ղարիբջանյան (5. 05. 1920, Ալեքսանդրապոլ – 28. 12. 1999, Երևան) – հեղափոխական Բագրատ Ղարիբջանյանի որդին, պատմական գիտությունների դոկտոր (1956), պրոֆեսոր (1957), ԳԱ թղթակից անդամ (1965), ակադեմիկոս (1971), գիտության վաստակավոր գործիչ (1968): ԽՄԿԿ անդամ 1942-ից: 1948-1950 թթ. ՀԼԿԵՄ Կենտկոմի քարտուղար, 1951-1954 թթ.՝ ԽՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի ԽՄԿԿ պատմության բաժանմունքի վարիչ, 1968-1977 թթ.՝ նույն մասնաճյուղի տնօրեն, 1954-1961 թթ.՝ ՀԿԿ ԿԿ պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչի տեղակալ, 1961-1968 թթ.՝ ՀԿԿ Լենինականի քաղկոմի առաջին քարտուղար: 1957-ից՝ պրոֆեսոր: 1977-1982 թթ.՝ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար: 1985-ին ղեկավարել է ԳԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնը:

Արմենի նամակները Ղարիբջանյանին հասցեագրվել են այն տարիներին, երբ նա եղել է ՀԿԿ Լենինականի քաղկոմի առաջին քարտուղար:

Նամակները մեզ է տրամադրել նրա որդին՝ պատմական գիտությունների թեկնածու Ստեփան Ղարիբջանյանը: Նամակները մեքենագիր են, Արմենի ուղղումներով և ստորագրությամբ: Տպագրվում են առաջին անգամ:

5-րդ նամակը Ղարիբջանյանի անունից Գյումրիի բարբառով Արմենը հասցեագրել է իրեն:

Նամակ 1. Շատ հարգելի և սիրելի Գևորգ Բագրատովիչ

Ցավում եմ, որ Լենինականում եղածս կարճատև օրերի ընթացքում չկարողացա նորից տեսնել ձեզ և անձամբ հայտնել իմ ջերմ, լենինականցուն հատուկ շիփշիտակ շնորհակալությունս այն ամենի համար, ինչ արվել և արվում է մեր երկրորդ քաղաքում, իմ սիրելի ծննդավայրում:

Ճիշտ է, ես չօգտվեցի ձեր սիրալիրությունից և չվերցրի ձեր մեքենան՝ շրջելու և դիտելու համար Լենինականը, բայց դրա պատճառն այն էր, որ ես կյանքում աշխատում եմ ավելի շատ ինքս ծառայել մարդկանց և ջերմ շնորհակալությամբ խուսափել նրանց թեկուզ և մի փոքր նեղություն տալուց:

Ես շրջեցի Լենինականը, դիտեցի, անչափ ուրախացա այս վերջին տարիների շատ մեծ փոփոխությունների համար: Այնուհետև, շաբաթ օրը, գնացի մինչև Թորոս, իսկ կիրակի՝ մինչև Ղազանչի:

Վերադառնալով այնտեղից երեկոյան կողմ, ես ցավով լսեցի, որ գտնվել են մարդիկ, ովքեր ձեր այդ



Մկրտիչ Արմեն

Գևորգ Ղարիբջանյան

լավ ձեռնարկումների վրա մռթմռթացել են որպես շռայլության:

Թքեցեք այդպիսիների վրա, հարգելի Գևորգ Բագրատովիչ: Թքեցեք՝ ովքեր էլ որ նրանք լինեն: Ես հիշում եմ մի մարդու, որը թաշկինակով քիթ սրբելը համարում էր շռայլություն, խորհուրդ էր տալիս ուղղակի խնչել գետնին և մի թիզ կտորեղեն «չշռայլել» մաքրության և կուլտուրայի համար:

Լենինականցիներն աշխատող ժողովուրդ են: Բայց բացատրեցեք՝ ում որ պետքն է, որ մարդը մրջյուն չէ, որ միայն աշխատի ու աշխատի: Նա կարիք ունի նաև հանգստի, զվարճության, էսթետիկական բավականության: Իհարկե հրապարակի վրա ձեր կառուցած ավազանն անմիջական կապ չունի տեքստիլ ֆաբրիկայի արտադրողականության բարձրացման հետ, բայց ո՞վ ասաց, թե բոլոր կապերը կյանքում անմիջական են, և ո՞վ ասաց, թե ձեր կառուցած ավազանների շատրվանների բարձրությունը վերջին հաշվով չի անդրադառնալու տեքստիլ ֆաբրիկայի արտադրական տոկոսների բարձրության վրա: Կարճ մտածող մարդիկ դեռ շատ կան մեզ մոտ, բայց կյանքում ամեն բան չէ, որ կատարվում է նույնքան կարճ, անմիջական և ուղղագիծ ճանապարհով:

Մի քանի խոսք էլ «Հեղնար» կաֆեի մասին:

Դեռ նախքան իմ Լենինական գալը հարյուրավոր մարդիկ Երևանում ինձ հաղորդել էին այդ մասին: Կրկնում եմ՝ հարյուրավոր մարդիկ: Ձեր մտահաղացումը պակաս ժողովրդականություն չի վայելում, քան իմ վիպակն ինքը:

Եվ ահա, հարյուրավոր մարդկանց գոհունակությունից հետո լսեցի. մի «ղեկավար ընկեր» ասել է՝ «ինչո՞ւ եք կաֆեն անվանել էդ բոզի անունով»:

Ես չգիտեմ, թե ով է այդ «ղեկավար ընկերը», բայց անկախ դրանից կարծեցի, թե նա կատակ է արել: Բայց Լենինականում դուք ինձ հայտնեցիք, որ հանելու եք «Հեղնար» անունը, որովհետև ժողովրդի մեջ սկսել են անեկդոտներ պատմել այդ անվան մասին: Ես հասկացա, որ «ղեկավար ընկերը» կատակ չի արել, և հասկացա, որ դուք ուզեցիք ոչ այնքան խնայել «ղեկավար ընկերոջը», որքան որ մեղմացնել իմ հնարավոր դժգոհությունը, որովհետև, իրոք, եթե այդ անունը չի ընդունում ոչ թե մի մարդ, այլ ժողովուրդը, ապա՝ «ձայն ժողովրդո – ձայն աստծո»:

Սակայն Լենինականում ևս հարյուրավոր մարդկանց մոտ ես տեսա միայն գոհունակություն և հպարտություն՝ իրենց քաղաքում իրենց գրական քաղաքացուհու անվամբ կաֆե ունենալու համար:

Կրկնում եմ, ես չգիտեմ, թե ով է այդ «ղեկավար ընկերը», բայց դա բացարձակապես միևնույնն է: Եթե նրա խելքը որևէ բան կտրեր գրականությունից, նա դուրս չէր տա այդպիսի հիմարություն:

Գուցե պարտիական դիսցիպլինան թույլ չի տա, որ թքեք նաև նրա ասածի վրա, բայց, իմ կարծիքով, պարտիական դեմոկրատիան պետք է որ լիուլի տա այդ հաճելի հնարավորությունը:

Չեմ ուզում ժխտել. ինձ համար, անձնապես շատ հաճելի էր, որ իմ հերոսուհու անվամբ կաֆե էր լինելու իմ հայրենի Լենինականում: Շատ ավելի հաճելի, քան եթե լիներ իմ անունով: Ի դեպ, ես իզուր եմ կատարում այդպիսի համեմատություն. ես տանել չեմ կարող անձնական մեծարումներ: Երբ մի քանի տարի առաջ գրողների միությունը որոշում էր հանել տոնելու իմ հոբելյանը, ես գրավոր կերպով կտրուկ հրաժարվեցի դրանից: Իհարկե, սա էլ լավ չեմ անում, որ այժմ ասում եմ այդ մասին, բայց ուզում եմ վստահեցնել ձեզ, որ հարցն այստեղ իմ անձնական, թեկուզ և օրինավոր հպարտությունը չէ, այլ այն, որ ձեր ձեռնարկումը, որպես ժողովրդի սրտից բխող գործ, արդեն վայելում



Հին Գյումրին

է այնպիսի ժողովրդականություն ամբողջ Հայաստանում, որ դրանից հրաժարվելը չի կարող ափսոսանք չառաջացնել և տեղիք տալ հենց անեկդոտների:

Հարգելի Գևորգ Բագրատովիչ: Իմ նամակի տոնից կարող է ստացվել այն տպավորությունը, թե ես ինձ համարում եմ ձեզանից ավելի խելոք մարդ և խորհուրդներ եմ տալիս ձեզ: Իհարկե, դա այդպես չէ: Ես պարզապես արտահայտում եմ իմ կարծիքը, և եթե դա ունի խորհուրդի ձև, ապա միշտ չէ, որ խորհուրդ կարող ես տալ ավելի բանիմաց ու կարող մարդիկ, դրանով զբաղվում են բոլորը: Պետք է ներել նրանց, այդ թվում նաև իմ մարդկային այդ թերությունը:

Նորից ջերմագին շնորհակալությամբ՝
ձեր Մկրտիչ Արմեն
29 հոկտեմբերի 1962 թ., Երևան

Նամակ 2. Սիրելի Գևորգ Բագրատովիչ

Այս նամակը գրում եմ ձեզ՝ առաջին հերթին որպես Լենինականի պատրիոտ: Ձեմ կարծում, որ ձեզ համար հետաքրքիր կլինի, եթե ասեմ, որ ահա մի տարի է, ինչ ես աշխատում եմ Լենինականի և մասնավորապես Տեքստիլի կյանքից վերցրած մի օպերետայի վրա: Բացի սիրային սյուժեից, որն անխուսափելիորեն անհրաժեշտ է այդ ժանրի մեջ, ես դրել եմ երիտասարդության դաստիարակության հարցերը և, մասնավորապես, այն, որ եթե ուզում ես հետաքրքիր ապրել, ապա աչքդ մի տնկիր դեպի ավելի հետաքրքիր վայրեր, այլ ինքդ այդպիսին դարձրու քեզ ու քո շրջապատը:

Օպերայի երկու գործողություններն արդեն պատրաստ են: Ձայնագրում է մի այլ լենինականցի, Վարդան Տիգրանյանը, «Անուշի»՝ Արմեն Տիգրանյանի որդին: Գրում եմ հանգամանորեն ոչ թե նրա համար, որ տեղեկություններ տամ ձեզ քաջ ծանոթ բաների մասին, այլ որ ինձ հաճելի է գիտակցել, որ մենք, լենինականցիներս, որտեղ էլ լինենք, չենք կարող մեր տուրքը չտալ մեր սիրելի քաղաքին:

Այս մի քանի օրս, մասնավորապես ամսի 21-ին կամ 22-ին, օպերետայի այդ երկու պատրաստի գործողություններն ընթերցելու եմ թատրոնին:

Կոմպոզիտորն արդեն սկսել է իր աշխատանքը և բավական բան գրել: Ավելորդ եմ համարում ասել, որ երգերի բոլոր տեքստերը նույնպես իմն են: Գրել և ձայնագրել ենք կամ գրել ենք և ձայնագրելու ենք «Լենինականի վալս», «Տեքստիլագործների երգը» և այլ լենինականյան երգեր: Ավելորդ է նաև ասել, որ ամբողջ օպերետան ներծծված է լենինականյան զվարթությամբ ու հումորով, սակայն ոչ թե գոյություն ունեցող ֆոլկլորի սրամտություններն օգտագործված, այլ տակետակ իմ հորինած: Հերոսներիցս երեքը խոսում են Լենինականի բարբառով, այլ կերպ ոչ հնարավոր էր, ոչ ցանկալի:

Իհարկե, դուք հիանալի գիտեք, որ «Տեքստիլի կյանքից» - դա չի նշանակում գրել դոկումենտալ կերպով Տեքստիլի մասին, այլ, կատարելով գեղարվեստական ընդհանրացումներ, այդ մատերիալի հիման վրա դնել մի քանի խնդիրներ և հարցեր, որոնք ընդհանուր են մեր ժամանակի, մեր մարդկանց համար: Այդ տեսակետից, գուցե գոյություն ունեցող «փաստական» տեքստիլից շատ բան չլինի այնտեղ: Բայց, ինչպես էլ որ լինի, եթե անունը դրել ես «Լենինականի կյանքից», «Տեքստիլի կյանքից», ապա դա պարտավորեցնում է որոշ և որոշակի նմանության, համենայն դեպս, աղավաղումներ թույլ չտալու իրականության նկատմամբ:

Ուստի և, սիրելի Գևորգ Բագրատովիչ, ես կցանկանայի գալ մոտ օրերս Լենինական և կատարել օպերետայի այդ պատրաստի գործողությունների ընթերցումը: Այս նամակիս գլխավոր նպատակն է խորհուրդ հարցնել ձեզանից, թե ինչ շրջանակներում և ում համար է ցանկալի կատարել ընթերցումը: Ես, որպես նախնական ցանկություն և առաջարկ, կուզենայի, որ օպերետան լսեն ղեկավար ընկերները, Տեքստիլի ղեկավարները և բանվորները, թատրոնի մարդիկ և քաղաքի զանազան խավերի ներկայացուցիչները: Իսկ թե տասը հոգի կլինեն այնտեղ, թե հարյուր կամ ավելի – դրա մասին ես ոչինչ չեմ կարող ասել:

Եթե, սիրելի Գևորգ Բագրատովիչ, դուք ևս գտնեք ցանկալի այդ ընթերցումը, խնդրում եմ, որ տեղեկացնեք ինձ և մինչև անգամ առանց ինձ հարցնելու նշանակեք օրն ու ժամը, միայն թե դա լինի ամսի 23-ից հետո: Ես իսկույն կգամ մեքենայով և կկարդամ, կլսեմ ինձ համար այնքան անհրաժեշտ ձեր դիտողությունները:

Մի բան միայն կարող եմ ասել և մի բանում վստահեցնել ձեզ, առանց վախենալու, որ ինձ կմեղադրեք հեղինակային մեծամտության մեջ, որ, ընթերցումը, համենայն դեպս, ձանձրալի չի անցնի ոչ մեկի համար, և դուք մի քիչ կթարմացնեք ձեր թոքերը ծիծաղով, եթե, իհարկե, ես չեմ չափազանցնում օպերետան արդեն ընթերցած ընկերների դրական կարծիքները:

Ջերմ բարևներով, սիրելի Գևորգ Բագրատովիչին,
ձեր Մ. Արմեն
Հասցե: - Երևան – 33, Կասյանի 3, բն. 35
կամ Երևան – 19, Բարեկամության 3,
գրողների միություն,
Մ. Արմենին,
հունիսի 66 թ., Երևան

Նամակ 3. Շատ սիրելի Գևորգ Բագրատովիչ

Շնորհակալությամբ ստացա ձեր շնորհավորական հեռագիրն իմ տարեդարձի և Նոր տարվա առթիվ: Ի՞նչ ասեմ: Շատ կուզենայի, որ դա քառասունամյակ լիներ, բայց գոնե այնքանով եմ գոհ, որ յոթանասունամյակ չէ: Իսկ ընդհանրապես, ես ինձ զգում եմ շատ լավ և, մանավանդ, երիտասարդ: Առողջություն եմ ցանկանում նաև ձեզ ու բոլորին:

Դեկտեմբերի վերջին օրերին Մելիքսեթն[1] ինձ զանգ տվեց և հարցրեց, թե չե՞մ գալու արդյոք Հայաստան: Ճիշտն ասած, քանի որ արդեն եղել էի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, որոշել էի նորից վերադառնալ մի քիչ ավելի ուշ: Գալով իմ տարեդարձին, ապա, բարեբախտաբար, այժմ այդպիսի տարեդարձները նշվում են միայն մամուլում և շատ սակավ – գրական երեկոների միջոցով: Ամեն դեպքում, ես կտրուկ հրաժարվելու էի գրական երեկոյից, մեծարանքի երեկոյից: Երբ լրացել էր իմ 50 տարին, մեր գրողների միության վարչությունը որոշում կայացրեց նշել դա մի երեկոյով: Ես գրավոր և կտրուկ հրաժարվեցի, շնորհակալություն հայտնելով վարչությանը:

Քավ լիցի, ես դա պարտադիր չեմ համարում ուրիշների համար: Ընդհակառակը, մեծ բավականությամբ ներկա եմ լինում այն երեկոներին, երբ նշում են մեր կուլտուրայի և գրականության գործիչների տարելիցները: Իմ ասածը վերաբերում է միայն ինձ, և ես դրա վրա չեմ նայում որպես պարտադիր և ցանկալի կանոնի:

Այժմ գանք Լենինականին: Լենինականն իմ ծննդավայրն է, իմ սիրելի Գյումրին, իմ «թույլ» կողմը: Երբ Վարդան Տիգրանյանը՝ կոմպոզիտորը, ինձ զանգ տվեց և խնդրեց մի օպերետա գրել, ես շնորհակալություն հայտնեցի և կտրուկ մերժեցի: Բայց նա ասաց մի մոգական բառ և զինաթափեց ինձ «Լենինականի կյանքից»: Եվ օպերետան ահա պատրաստ է:

Ճիշտ այդպես էլ, երբ Մելիքսեթն ասաց, որ դուք մտադիր եք նշել իմ տարեդարձը, մեղքս ինչ թաքցնեմ, դա ինձ հաճելի էր: Միայն թե, ի սեր աստծու, ոչ թե «մեծարանքի երեկո», այլ հենց այնպես, որպես հերթական հանդիպում գրողի և ընթերցողների:

Այսօր նամակ ստացա Երևանից: «Սովետական Հայաստան» թերթն իմ տարեդարձի մասին գրելու է հունվարի առաջին օրերից մեկում: Չեն էլ իմացել, որ ես «հոբելյար» եմ: Եվ դա միանգամայն բնական է, ես ոչ ոքի չեմ ասել, իսկ մեր գրողների միությունը, գլուխները ողջ լինի, մի՞թե այդպիսի չարչարանք կվերցնեն իրենց վրա, որ գոնե զանգ տան հեռախոսով և հաղորդեն այդ մասին: Մարդիկ հո պարտավոր չե՞ն իմանալ ամեն մի գրողի ծննդյան տարին և օրը: Ես համոզված եմ, որ մյուս թերթերը նույնպես: Եվ ստացվում է այնպես, որ, ասենք թե, Նոր-Այրի հիսնամյակը նշում են մեր բոլոր թերթերն առանց բացառության, նշում են Մահարունը, Նորենցինը, Վիգեն Խեչումյանինը և այլն, իսկ իմը, լավագույն դեպքում՝ ուշացումով: Եվ, հավատացած եղեք, սիրելի Գևորգ Բագրատովիչ, ես մազաչափ չեմ վշտանում դրա համար: Այ, կվշտանայի, եթե այսինչի գիրքն այս տարի տպեն, իսկ իմը հետաձգեն եկող տարվան: Գիրքը, եթե լավն է, հարկավոր է ընթերցողին: Իսկ առանց հեղինակի էլ կարելի է յոլա գնալ:

Լենինականում կառուցում եք «Հեղնար աղբյուր»: Շատ ուրախ եմ, կարո՞ղ եմ արդյոք ձևացնել, թե դա միևնույնն է ինձ համար: Կաֆեն, որ սկզբում անվանել էիք «Հեղնար», ինչ-ինչ անհիմն հիմունքով փոխվեց «Հանգստի»: Կարո՞ղ եմ թաքցնել, և հարկ կա՞մ թաքցնելու, որ դա ինձ վշտացրեց: Շատ կուզենայի, որ այդպես չլիներ: Բայց, այս ամենի մեջ դարձյալ առաջին պլանի վրա գիրքն է կամ դրա պերսոնաժը և ոչ թե հեղինակը, և դա այդպես էլ պիտի լինի, ես հենց այդպես կուզենայի:

Այս ամսից հետո, սիրելի Գևորգ Բագրատովիչ, եթե հաստատ եք որոշել, որ ես գամ, և մի գրական երեկո կազմակերպենք «իմ կապակցությամբ», ապա ես դեմ չեմ: Իսկ եթե շատ չեք ուզում, դա, ի սեր աստծու, մտքերովդ էլ չանցնի, թե ինչ-որ բանից զրկում եք ինձ, ինչ-որ բանով նեղացնում եք ինձ և այլն և այլն: Այնպես որ, ամեն ինչ թողնում եմ ձեզ և երկու դեպքում էլ երկու ձեռքով ստորագրում եմ ձեր որոշման տակ:

Նորից ջերմագին շնորհավորանքներ ձեզ, սիրելի Գևորգ Բագրատովիչ: Բացի նրանից, որ դուք լավ և հաճելի մարդ եք ինքնին, ես ձեզ հարգում եմ նաև

նրա համար, որ դուք եք իմ հին Գյումրու և նոր Լենինականի զարգացման անմիջականորեն պատասխանատու մարդը: Շատ բաներ այն ամենից, ինչը որ կատարում եք իմ քաղաքում, իր ժամանակին եղել են իմ մանկության և պատանեկության երազները: Ինչպիսի երջանկություն, երբ տեսնում ես քո երազներն իրականացած: Իսկ իմ ամենագլխավոր երազն այն էր, որ իմ պրովինցիալ փոքրիկ Գյումրին դառնար ժամանակակից իսկական քաղաք, Լենինական:

Մելիքսեթին գրում եմ առանձին նամակ, որտեղ գրում եմ նաև «տեխնիկական մանրամասնությունների» մասին, եթե դրանք պետք գան:

Շնորհակալություն այն ամենի համար, որ կատարել եք ռադիոյով և թերթով, իմ տարեդարձը նշելու համար:

Միշտ ձեր Արմեն
3 հունվարի 67 թ., Մոսկվա

---

[1] Մելիքսեթ – Մելիքսեթ Մելքոնյան (1932, Լենինական-1994, Երևան), բանասիրական գիտությունների թեկնածու, «Մկրտիչ Արմեն» («Սովետական գրող», 1981) մենագրության հեղինակ, գիրքը լույս է տեսել մեր խմբագրությամբ:

Նամակ 4. Շատ հարգելի Գևորգ Բագրատովիչ

Վաղուց էի պատրաստվում ձեզ նամակ գրել, բայց շարունակ հետաձգում էի, որպեսզի ժամանակ գտնեմ լավ նամակ գրելու: Չեմ ասի, թե դժգոհում եմ ժամանակի սղությունից, բայց ներկա դեպքում դա նշանակում է գտնել համապատասխան տրամադրության ժամանակ, քանի որ ուզում եմ գրել իմ սրտին այնքան մոտիկ նյութերի մասին:

Չեմ ասի նաև, թե արդեն գտա այդ իդեալական ժամանակը: Դժբախտաբար կյանքի մանրուքն այնքան է շրջապատում մարդուն, որ սպասել անվերջ ինչ-որ աստվածային տրամադրության՝ անհնար է: Պարզապես պետք է պոկել իրեն այդ մանրուքից ու լուրջ հոգսերից և գտնել պահեր, զբաղվելու համար այնքան նվիրական նյութերի մասին գրելով:

Մի ինչ-որ անգամ ես գրել եմ ձեզ և շնորհակալություն հայտնել այն ամեն լավ բանի համար, որ դուք անում եք իմ սիրելի Լենինականի համար: Դա սոսկական սիրալիրություն չէր իմ կողմից, այլ ի խորոց սրտի եկած խոսք, որովհետև, իրոք, որտեղ էլ լինեմ, որտեղ էլ ապրեմ, Լենինականն ինձ համար մնում է նվիրական վայր ու նվիրական անուն: Եթե իմ մեջ կա որևէ լավ բան, պարտական եմ իմ ծննդավայր քաղաքին: Ճիշտ է, ես ամբողջ աշխարհին եմ պարտական, ինչպես և ամեն մարդ, բայց այն, ինչ ստանում է մարդն իր կյանքի առաջին տասնամյակներում, կարելի է ասել. որ իրենով որոշում է նրա ամբողջ հետագա դեմքը:

Ամեն անգամ, երբ ես գալիս եմ Լենինական ու շրջում, ես նորից հուզվում եմ այնքան, որքան ինձ չի հուզում աշխարհի ոչ մի ուրիշ վայր, ծանոթ, թե անծանոթ: Ամեն փողոց ու անկյուն, բառացիորեն ամեն քար իր մեջ պահում է իմ որևէ հիշողությունը:

Թվում է, թե այս ամենի հետևանքով ես պիտի միշտ էլ ուրախանայի, տեսնելով իմ հարազատ վայրերը նույնությամբ պահպանված: Սակայն, թող զարմանալի չթվա, դա այդպես չէ: Այդ մասին, բավականին ինքնակենսագրական երանգավորումով, ես գրել եմ իմ «Մենք ուզում ենք ապրել» վիպակի մեջ: Երբ տխուր է եղել մանկությունը, երբ խղճուկ է եղել դրա միջավայրն ու շրջապատը, դու, ընդհակառակը, ուզում ես, որ փոփոխված, նորացած ու հարստացած լինի այն: Դրա համար էլ, Լենինականում կատարված ամեն մի լավ փոփոխություն ոչ թե ափսոսանք, այլ ուրախություն է առաջացնում իմ էմոցիաների աշխարհում:

17-18 տարեկան հասակում ես քանի-քանի անգամ եմ նստել մեր բոստանների պռունգին, քաղաքի ծայրին, մի փոսադիր տեղի մոտ և երազել. այ, ինչպիսի լավ լիճ կլինի այստեղ… Եվ ուղղակի աչքերիս չհավատացի, երբ, տարիներ հետո, այցելելով նույն վայրը, տեսա այնտեղ, ճիշտ այն տեղում իմ երազած լիճը: Կամ կանաչապատումը, որից համարյա զուրկ էր իմ քաղաքը: Կամ գունավոր շենքերը, որոնցից նույնպես զուրկ էր, չհաշված սև քարի գույնը թարմացնող դեղինը: Եվ այլն, և այլն:

Ես ուզում եմ այս նամակիս մեջ շարադրել իմ երազանքներից մի քանիսը, կապված իմ քաղաքի հետ: Քաջ գիտեմ, որ դրանց զգալի մասը, եթե ոչ ամբողջը, կարող է չլինել ռեալ կամ չհամընկնել ձեր նախագծումների հետ: Սակայն եթե մի փոքր չափով էլ դա հետաքրքրություն ներկայացնի ձեզ համար – ես դարձյալ գոհ կլինեմ: Ընդ որում, եթե մինչև անգամ չներկայացնի գործնական հետաքրքրություն, ապա գոնե կարող է հետաքրքիր լինել որպես անիրագործելի վարիանտների հավաքածու, որը եթե հարկավոր չէ քաղաքին, ապա հարկավոր է եղել դրա մի զավակին, որպեսզի իր մտապատկերների մեջ այդպես տեսած լինի իր քաղաքը տարիներ շարունակ:

Լենինականը, ավելի ճիշտ հին Գյումրին, եղել է կանոնավոր, բայց նեղ փողոցների քաղաք: Քաղաքի նոր թաղամասերում այդ թերությունը չկա, բայց հին մասերում դեռ մնում է: Մնում է նաև կարևոր հանգույցներում: Ի՞նչ կարելի է անել: Իմ կարծիքով, քանդել տների մի շարքը և իրար միացնել երկու զուգահեռ փողոցների լայնությունը:

Պատկերացնենք, սիրելի Գևորգ Բագրատովիչ, հետևյալը: Քաղաքային այգին և դրանից ներքև ձգվող երկու փողոցները, որոնք անվանվում էին 13 և 15-րդ փողոցներ: Ես պատկերացնում եմ այդ երկու փողոցներն իրար միացած լայն մի փողոց մինչև բոստանները, մինչև Կազաչի պոստ: Քանդված է դրանք իրարից անջատող տների շարքը: Քանդված է նաև այգին, որի տեղը փողոց է: Թատրոնի ճակատն ու մուտքը փողոցի վրա են: Փողոցի վրա է նաև «Գորկայի» մուտքը,- քաղաքի այդ զբոսավայրի: Այգուց փողոցները մինչև վերև նույնպես քանդված է տների շարքը, և իրար են միացված երկու Շիրակացու փողոց: Լայն և երկար պողոտա քաղաքի մի ծայրից մինչև մյուսը…

Շատ ավելի համեստ մասշտաբի մի առաջարկ, ֆիլիարմոնիայի շենքի մուտքի առջև ինչպես հայտնի է, ի սկզբանե անտի կա մի սանդղահարթակ և աստիճաններ, որոնք բարձրանում են դեպի շենքի դուռը:

Այդ սանդղահարթակը խիստ նեղացնում է մայթն այդ մասում, մինչդեռ դա գտնվում է ամենաբանուկ փողոցներից մեկի վրա: Ես կառաջարկեի քանդել այդ սանդղահարթակը և տանել ներս: Դուռը բաց անելուց հետո մարդիկ կհայտնվեն մի փոքրիկ հարթակում, ապա իրենց առջև կտեսնեն աստիճաններ, որոնք կբարձրանան մինչև նախասենյակի հատակը:

Մի ժամանակ սքանչելի, թեև փոքր զբոսավայր էր կայարանի այգին: Խոսքը վերաբերում է այն այգուն, որի ցանկապատը հանդիսանում է կառամատույցի ցանկապատի շարունակությունը դեպի հյուսիս գնալիս: Դա բուսականության մեջ կորած մի այնպիսի վայր էր, որտեղ մտնելիս մոռանում էիր մասշտաբները, քեզ զգում էիր մի մեծ անտառում, իսկ հենց կողքին գտնվող կայարանը թվում է յոթ սարի ետևում: Այդ զարմանալի հատկությունն ունեն, օրինակ, Մոսկվայի փոքրիկ պուրակները: Մեծ թատրոնի առջև, մասնավորապես Մարքսի արձանի ետևում գտնվող պուրակն այնպիսին է, որ այնտեղ նստած մարդը խիտ ու համատարած կանաչի բարձր պատվարով կղզիացած է շրջապատի բանուկ փողոցից:

Չի՞ կարելի արդյոք վերականգնել կայարանի այդ այգին:

Չերքեզի ձորը… Ես կյանքում չեմ տեսել այլևս ու չեմ տեսնի այդպիսի ռոմանտիկ, ուղղակի հեքիաթային անկյուն: Ոչ, ես ասում եմ ոչ թե նրա համար, որ այդ վայրը գունազարդված է իմ մանկական հուշերով, այլ, որ դա այդպես էր իրոք: Մի այլ առիթով ես կնկարագրեմ Չերքեզի ձորի հին տեսքը, և կհամոզվեք: Եվ որպեսզի ավելի համոզվեք, մեջբերում կանեմ յոթանասուն տարի առաջ տպված մի գրքից, հույժ պրոզայիկ մի գրողի վեպից, որտեղ ևս նկարագրված է Չերքեզի ձորը, և մինչև իսկ այդ մարդու պրոզայի և անտաղանդության միջից այդ վայրը երևում է գեղեցիկ տեսիլի նման:[1]

Չի՞ կարելի արդյոք վերականգնել այդ զբոսավայրը, այդ չքնաղ, բայց անճանաչելիորեն փչացած անկյունը:

Մեծ գոհունակությամբ լսեցի, որ ուզում եք հանգստի զոնա դարձնել Վարդապետի բաղը: Վարդապետը – դա իմ տատի, այսինքն՝ հոր մոր, հորեղբայր Աղեքսանդր վարդապետ Արարատյանն է, կաթոլիկների եկեղեցու հիմնադիր-կառուցողը և «Անի քաղաք նստե կուլա» երգի հեղինակը: Սակայն, անշուշտ, նրա լավագույն գործն այդ զբոսավայրն է: Ավելի ճիշտ, էր: Գորշ ու լերկ շրջապատում կարծես երկնքից ընկած մի կանաչ հրաշք, ծաղիկներով ու վարդերով, զրուցարաններով և այլ չքնաղ, թեթև կառուցումներով... Ռոմանտիկայի համար կարելի է և չծախսել լրացուցիչ գումարներ, բավական է ծախսել լրացուցիչ ֆանտազիա: Չգիտեմ, դրանով զբաղվող ճարտարապետները կունենա՞ն այդ ֆանտազիան, թե ոչ: Հուսով եմ, որ այո: Բայց Վարդապետի բաղի և մանավանդ Չերքեզի ձորի տրադիցիոն գեղեցկությունը պահելու համար ցանկալի կլիներ վերականգնել հնում գտնված մի շարք մոմենտներ: Վերցնում եմ ինձ վրա համարձակություն մտածելու, որ ես վատ կոնսուլտանտ չէի լինի դրա համար իմ համեստ խորհուրդներով և ռեստավրացիաներով:

Լենինականի շինարարության մեջ, գոնե Լենինականի շինարարության մեջ, չպիտի մոռանալ այնքան սքանչելի դեղին տուֆը, որը հազար անգամ ավելի գեղեցիկ է իր տաք երանգով, քան վարդագույնը: Վարդագույնը լոկալ գույն է և չի համադրվում ոչ մի գույնի հետ, բացի սպիտակից: Իսկ դեղին տուֆը ոչ միայն գեղեցիկ է ինքնին, այլև սևի հետ միասին տալիս է արտակարգ հաճելի համադրություն: Կլասիկ են մեր սևաքար շենքերը դեղինի երիզավորումներով, շրջանակավորումներով ու քիվերով: Իսկ սևի գույնը զվարթացված է քարերի միացման վայրերը գծող սպիտակ երիզներով: Սա մի ինքնատիպ և սքանչելի ճարտարապետական դետալ է, որը չպետք է մոռացության տրվի: Ընդհակառակը, հարկավոր է, որ գտնի լայն գործածություն Լենինականի շինարարության մեջ, որով մեր քաղաքի շենքերը կունենան իրենց ինքնուրույն և ինքնատիպ տեսքը: Նույնը և կամարաձև դռներն ու լուսամուտները կարմիր ու սև քարերից կազմված հիանալի կամարներով:

Ի սեր աստծու, Գևորգ Բագրատովիչ, փրկեցեք մեր սքանչելի շենքերի կառնիզների արտակարգ գեղեցիկ զարդաքանդակները, էստամպներ հանել տվեք դրանցից: Ես կարող եմ ուղարկել այդ տեսակետից ամենահետաքրքիր շենքերի հասցեները,- փողոցներն ու տների համարները: Եվ լուսանկարել տվեցեք ճակատները: Ի՞նչ ասեմ այդ փնթի և անտարբեր մարդկանց, որոնք մինչև հիմա չեն հասկացել, որ «Հեղնար աղբյուրը» կարող էր դառնալ շատ լավ կինոնկար: Իսկ ես երբեք չեմ դիմել կամ առաջարկել: Ինչո՞ւ ասեմ, մի՞թե իրենք չգիտեն, որ գոյություն ունի մի այդպիսի գրվածք: Ով ահա, եթե դա էկրանացվեր, ես դրա վրա դրոշմել կտայի ամբողջ հին Գյումրին, որպեսզի, երբ տարիներ անցնեին, ոչինչ չկորչեր, և մարդիկ, տեսնելով, թե որքան ուսանելի բաներ են եղել այնտեղ, կարողանային օգտվել դրանից:

Եվ այսպես, սիրելի Գևորգ Բագրատովիչ, ես կարող եմ շարունակել անվերջ, բայց վախենում եմ ձանձրացնել զբաղված մարդուն:

Ջերմ շնորհակալություն Լենինականում Անդրանիկի անվան փողոցի համար, որի մասին լսեցի միայն վերջերս: Ես Անդրանիկի հարցով մի երկու տարի առաջ դիմել էի Համամիութենական, Ադրբեջանի և Հայաստանի կենտկոմներին մի մանրամասն նամակով: Պատասխան ստացա Համամիութենական մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի դիրեկտորի տեղակալից, - իմ նամակն ուղարկված է եղել այդ ինստիտուտը:

Ուղարկում եմ պատճենն այն բանաստեղծության, որն ուղարկել եմ «Բանվոր»-ին տպելու համար: Շատ կուզենայի, որ տպվեր: Չեմ կարծում, թե դա դժվար է: Իսկ եթե սխալվում եմ, ի՞նչ արած: Նաիրի Զարյանը «Սովետական Հայաստանում» վերջերս գրել էր, որ աշխատում է Անդրանիկի կյանքից մի վեպի վրա: Մի՞թե նրա անունն արգելված է արտասանել: Իհարկե, ոչ: Մի խոսքով, տեսեք:

Ջերմագին բարևներ ձեզ, սիրելի Գևորգ Բագրատովիչ: Աշնանն ըստ երևույթին գալու եմ կնոջս հետ Երևան, և կլինենք նաև Լենինականում և անձամբ կխոսենք այս և նման հարցերի մասին, կապված իմ սիրելի քաղաքի շինարարության հետ:

Միշտ ձեր՝ Մկրտիչ Արմեն
1 օգոստոսի 67 թ. Մոսկվա

---

[1] Ակնարկված մեջբերումը նամակի մեջ բացակայում է:

Մկրտիչ Արմեն

ԱՆԴՐԱՆԻԿԻ ԱՆՎԱՆ ՓՈՂՈՑԸ ԼԵՆԻՆԱԿԱՆՈՒՄ

Ջրոսնելիս լինես միայն,
Շրապելիս դու գործով՝
Կտրիճի պես անցիր սակայն
Անդրանիկի փողոցով:

Դիր վշտերդ դրա եզրին
Եվ հոգսերդ լեփ-լեցուն,
Երգի խոսքեր գան քո լեզվին
Անդրանիկի փողոցում:

Ո՞վ է այնտեղ քայլում կքված,
Կրծքի տեղակ մեջքը ցից,
Հեռու գնա դու լայնաբաց
Անդրանիկի փողոցից:

Բայց ո՞ւր գնաս խեղճ ու կրակ՝
Ոտքերով թույլ ու տարտամ.
Թե՞ Լենինի հրապարակ,
Շահումյանի պողոտան,

Շիրակացո՞ւ ճամբով պիտի
Ուղղես քայլդ ցիրուցան,
Կուրղինյանի՞, թե Վարպետի,
Հերոսների՞ Մայիսյան...

Մի մոռանա՝ մարդ ես, թե մի,
Եվ մեզ հետ է թե քո չուն՝
Մեր քաղաքը, հնում Գյումրի, -
Լենինական է կոչվում:

Դու Լենինի եղիր զինվոր՝
Շահումյանի ջոկատում,
Կուրղինյանի նման դու բորբ՝
Հոկտեմբերի ճակատում,

Շիրակացու նման անծիր,
Վարպետի պես հույզի ծով,
Եվ կտրիճի նման անցիր
Անդրանիկի փողոցով:

Նամակ 5. Բարև Մկրտիչ Արմեն

Անկեղծիս կպավ օր էս քանի օրս դարցեր ես վացցուն տարեկան: Է, ե՞ր դարձար, օր մենք չիմացանք: Թե հաստատ կուզես իմանալ, դու ոչ թե վացցուն տարեկան ես, այլ էրկու եռեսուն: Մարդ օր քեզի տեսնի տրոլեյբուսի մեջը, ոչ թե տեղից պիտի ելնի ու տեղ առաջարկե քեզի նստելու, այլ աշքով պիտի էնե, թե «իջնինք վար, մե-մե բաժակ պիվա խմենք»:

Ինչո՞ւց է էդիկ: Էնորից է, որ դու մեր քաղքի տղա ես ու մեզի պես արսզ ես:

Էդիկ լավ է: Հմը, ինչքան էլ ջահել մնացած էղնիս, վեր՞վեր թոնիս, մե հաշիվ է, արդեն վացցուն տարեկան ես ու վացցուն տարվա հաշիվ պիտի տաս քո ժոդովրդիդ: Ինչ ես էրե վացցուն տարվա մեջ:

Լավ, ըսենք թե առջի տասսը տարին ուսումնարան ես գնացե ու բազի-բազի էլ ճան ես խաղցե յոխուշի գլուխը: Մնա՞ց հիցցուն տարի: Տասսը տարի էլ քցենք սիրահարվելու-միրահարվելու վրա: Մնա՞ց քառսուն տարի: Ինչ ես էրե քառսուն տարվա մեջ, ըսա աշեմ:

Իհարկե, գիտեմ, քիչ-մի՞չ բզբզացեր ես գրականության մեջ, հմը էդիկ շատ քիչ է: Մի մոռանա, օր դու լենինականի տղա ես, իսկ մեր քաղաքը Ավետիք Իսահակյան ու Շուշանիկ Կուրղինյան է տվե, Հովհաննես Զարիֆյան ու ջուխտ-ջուխտ կոմպոզիտոր Տիգրանյան է տվե, արձանագործ Մերկուրով ու գիտնական Կոշտոյանց է տվե, Զարուհի Դոլուխանյան ու Գարեգին Լևոնյան է տվե, Ջիվանի ու Շերամ է տվե, էլ չեմ խոսի մնացած հայտնի գուսաններու, բանաստեղծներ Հովհաննես Տեր-Մարտիրոսյանի ու Արտաշես Տեր-Մարտիրոսյանի, Իսահակ Իսահակյանի ու Գևորգ Աֆրիկյանի մասին: Հատկապես կշեշտեմ, Շիրազ է տվե: Մե քիչմ էլ օր խորքերն էրթանք, Անանիա Շիրակացի է տվե:

Ինչքան էլ օր չլոպպզնանք, մեր քաղաքն օր աշխրքի մեջ երկրորդ տեղը չգրավե, երրորդ տեղը չգրավե, չորրորդ տեղը չգրավե գոնյա առաջին տեղը կգրավե՞:

Էդ ամմենը քիչ էր, քսանչորս թվին մենք Լենինի պատվավոր անունը վերցուցինք մեզի վրա, իսկ էդիկ մեզի ավելի շատ կպարտավորեցնե:

Մե դրացիմ տղա կա, տասնութ տարեկան է, հմը իշու բոյ ունի, հմը խելքի կողմից առայժմ գլուխդ սաղ եղնի: Ամմեն անգամ հանդրպելիս խրատ կուտամ կսեմ. «Ուր էլ էրթաս, ուրտեղ էլ էղնիս, բանցր պահե մեր քաղքի անունը: Չէղնի-չիմանամ անկարգություն էսես: Հմը, բան է, եթե էրեցիր, Լենինի պատվավոր անունը մեջը չխառնես: Կսեն «Ո՞ւրտից ես», ըսա «Կողքի գեղերուց եմ»: Հմը գեղի անունը չտաս, թե չէ գեղացիք սաղ կտորը կապրոնե գալստուկդ կթողնեն»:

Ըպը, Մկրտիչ Արմեն, մենք էդպես քաղաք էնք: Դու էլ գրականության մեջ անկարգություն չէսես, տաղանդավոր բաներ չգրես: Ինչ օր գրես թող հանճարեղ էղնի: Իսկ եթե ձեռքդդ չէկավ ու չկրցար, քեզի մի կոտրե: Մի՞տքդ է.- մե լենինականցի տղեմ իրան Գևոր անունով ընկերոջ հետ կէրթա Երևան: Հանաքո՞վ կէղնի, թե իսկականից, հետը գյուլաշ կկպնի, ինքը կընկնի տակը, էրեվընցին կնստի վրեն: Իսիկ տկից էլ իրար չի խառնվի ու հանգիստ ձեն կուտա ընկերոջը. «Գևոր, մե արի էս բմբուլը վրայես վերցու»:

Դու ինձնեն լավ գիտես, Մկրտիչ Արմեն, օր մենք շատ լավ-լավ կողմեր ունինք: Հմը մեկ-մեկ չեմ հաշվե, օր էլի չըսեն, թե լոպպըզցավ: Վերցնենք օրինակի համար, մեր բարբառը: Իհարկե, հայոց լիզուն բոլորիս լիզուն է, հմը մեր բարբառն իրան տեղն ունի: Օրինակի համար, շատ օր զարմացար, խո չեմ ըսե «Այս կողմ նայեցեք»: Պիտի ըսես «Իսդին աշեք»:

Նույնիսկ եր օր ուրիշ տեղից կուգան Լենինական աշխատելու, շատ օր չեղնի, գոնյա մե մասնավորըմ կընկնի մեր լիզվի ազդեցության տակ: Կամ ինչքան էլ զարգացած քաղքըցի եղնին, գիտնական էղնին, էլի նույն բանը: Անցած օրը գնացեր էի ընկեր Ղարիբջանյանի քովը, դիմում էի տարե մե գործովըմ: Ըսի մաքուր գրական լեզվով. «Ընկեր Ղարիբջանյան, խնդրում եմ կարդաք դիմումս և ըստ հնարավորին չմերժեք»: Ձեռքն երկնցուց ու ըսավ. «Տու աշեմ»:

Բանձր պաե մեր քաղքի անունը, Մկրտիչ Արմեն: Հմը ինչ ես էրե մինչի հիմի «Հեղնար ախպուր» ես գրե: Լավ, էդիկ Գյումրվա մասին: Ըպը Լենինականի: Իմացա օր «Շիրակ» օպերետա ես գրե, մեր քաղքի, մեր տեքստիլի մասին: Շուտ էրէք խաղցեք, տեսնինք ինչ բան է:

Աշխատի էնպես, գրել Մկրտիչ Արմեն, օր ժողովուրդն ընդունե, իրանը հաշվե ու թեկուզ քեզի էլ բանի տեղ չդնե, օրինակ, մե քանիմ տարի առաջ Լենինական էիր էկե, գնացիր Ձորի մայլեն ման գալու: Քեզի ճանչըցան, ժողվան քովդ: Էդ ժամանակ մե մարդըմ դարձավ մե հալիվոր մարդում ու ըսավ. «Տիա, հեղինակն իտեղ է, թող ինքը լուծե մեր վեճը: Ըսա Մկրտիչ Արմեն, Հեղնար ախպուր ուրտեղ է կայնած էղե»: Դու խնդացիր ու ըսիր օր Հեղնար ախպուր գոյություն չի ունեցե, էդիկ դու ես հնարե: Բայց էդ հալիվոր մարդը ձեռքը թփթփացուց մեջքիդ ու ըսավ. «Ճիժտ է, դու ես գրե, հմը չիտես օղուլ, Հեղնար ախպուրը կանգնած էր տիա-ա-ա ինտեղ»…

Ուրեմն, ինչ դուս էկավ: Դուս էկավ օր քու հնարած պատմությունն իսկական կհաշվեն ու քեզի էլ բանի տեղ չեն դնե: Հպրտնալու բան չէ:

Յա թե չէ մե ուրիշ բանըմ: Հիմի վո՞վ գիտե, թե դու ես գրե էս երգը.

Միրահարվե, կորցուցեր եմ
Ես հուսին ու հարաֆը,
Ուր էլ էրթամ, վերջը կուգամ
Էլի ձեր գրան թարաֆը:

Մի լոպպըզնա, Մկրտիչ Արմեն, հմը հպրտցի, օր բազի-բազի էդ տեսակ ես գրե: Ու միշտ էլ էնպես գրե, օր մարդիկ յա հուզվին, յա էփած քյալլի պես ակռեքը բանան, խնդան:

Ինչքան ժամանակ ես խոսեի կը Լենինականի մասին, օր Լենինականի անունը բանձր պաենք: Հմը մենք բոլորս էլ հայ ենք, ուրեմն Հայաստանի անունն էլ բանձր պիտի պահենք Խորհրդային Միության առաջ: Իսկ Խորհրդային Միության անունն էլ երկրագնդի առաջ: Տիա, էգուց-մեկել օր տիեզերքը կդառնա ջաղցի ճամբա: Ուրեմն երկրագնդի անունն էլ բանձր պիտի պահենք աստղերու առաջ: Յուպիտերն ինչ է, օր հասնի մեր երկրագնդին: Ես էնոր կլոր թշերն ուտեմ, տես ինչ տեսակ քաղաքներ ունի վրեն.- Մոսկվա, Լենինգրադ, Լենինական… և այլն:

Հմը, Մկրտիչ Արմեն, մարդու սիրտը տիեզերքից էլ մենձ լինի ու բարի: Շատ էլ չփնովենք արբանյակներուն, էնոնք էլ մերոնք են, թող էնոնց վրա էլ արև առնե: Մարսն ու Յուպիտերը, ինչխ օր մեր Մարուսն ու Յուղաբերը:

Կրնա պատահի, Մկրտիչ Արմեն, օր երեկո կազմակերպեն, քեզի պատիվ տան: Չեղնի-չիմանամ լոպպըզնաս, մտածես, թե դու իդոր արժանի ես: Էդ պատիվն օր քեզի կուտան ոչ թե վերջնահաշիվ է, այլ ավանս, կուտան օր իսդից ետև ավելի լավ գրես: Վռազե, մե վացցուն տարի էլ ապրիս յա չապրիս, էդ է: Էնպես օր ջահելությունդ ցուց տու ոչ թե կնկնոց առաջ, այլ գրասեղանիդ:

Ու ժողովրդիդ մասին խոսիս, թե ժողովրդիդ հետ, համեստ խոնարվի ու շափկեդ հանե: Ինչ էնենք օր քյաչալ ես:

Ու մենձ, շատ մենձ շնորհակալություն հայտնե քու իշխանությանդ ու կուսակցությանդ, քու հայ ժողովրդիդ ու ամենաքիչը էրկու հազար հինգ հարուր վացցունվեց տարեկան Գյումիաս – Կումայրի – Գյումրի-Լենինականին: ■

Մնամ քեզնից շատ ու շատ բան սպասող
Մկրտիչ Արմեն

Նամակի առաջին էջին ձեռագրով ավելացված է.
Միրելի Գևորգ Բագրատովիչին՝ ջերմ սիրով՝
Մ. Արմեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ
1919 -1920
1-ԻՆ ՆԻՍՏ

1 օգոստոսի 1919 թ.

Այսօր ժամը 12-ին տեղի ունեցավ Միացյալ ու Անկախ Հայաստանի առաջին ընտրովի պառլամենտի բացումը՝ նախագահությամբ ավագ պատգամավոր Ավետիք Սահակյանի: Ներկա էին 56 պատգամավոր, նախարարական ամբողջ կազմը, դիվանագիտական ներկայացուցիչները: Անգլիական և ֆրանսիական դիվանագիտական ներկայացուցիչները իրենցից անկախ պատճառով քաղաքից բացակայում էին և վարչապետի միջոցով ներողություն էին խնդրել: Հասարակության տեղերը բերնեբերան լիքն էին:

Ա. Սահակյանի բացման ճառը

Քաղաքացիներ, պատգամավորներ Միացյալ Հայաստանի, ուղիղ մի տարի առաջ, ճիշտ օգոստոսի 1-ին, երբ երկիրը շրջապատված էր տաճկական զորքերի օղակով և թշնամու սուրը շողշողում էր մեր գլխին, երբ հայրենիքը բանտ էին դարձրել մեզ համար, ես, իբրև նախագահ Գերագույն Ազգային խորհրդի, բանալով այս դահլիճում անդրանիկ նիստը Հայաստանի Խորհրդի, անսասան հավատով և խորին համոզմունքով հայտարարեցի, որ մեր հանրապետության նեղ հորիզոնը և նրա խեղդող սահմանները պետք է ընդարձակվեն և մեր մարտիրոս, հերոս ժողովուրդը պիտի տեր դառնա իր սիրուն հայրենիքին: Այսօր ես բախտավոր եմ վկայել, որ այդ իմ գուշակությունը ոչ միայն կատարված փաստ է, և իրականություն, այլև մեր ժողովրդի սրբազան կամքով հայության երկու հատվածները գրկախառնված միացել են և հռչակել մի պետություն՝ Միացյալ, Անկախ, և Ազատ Հայաստան, որի պաշտպանության համար երդվել են զոհվել և կռվել մինչև վերջին շունչը: Այո, այժմ մենք ունենք կազմակերպված պետություն, որը ստեղծել ենք դժոխային արտաքին ու ներքին պայմաններում համարյա ոչնչից. ավերված, թալանված ու հիմնահատակ եղած երկրում՝ շնորհիվ միայն հայ ժողովրդի հրաշալի շինարար հանճարի, անսպառ կորովի: Մենք պարծենում ենք մեր նորածին պետությունով. գուցե նա թույլ է դեռ, հեռու կատարելությունից և ամբողջացած չէ իր տերիտորիայով, սակայն ժողովուրդը սիրում և փայփայում է իր մատաղ հանրապետությունը. նա ընդգրկել է պետականության գաղափարը, նրա մեջ մարմնացել է անկախության զգացմունքը, որից նա երբեք չի բաժանվել և ոչ ոքի չի զիջել: Ճիշտ է, մինչև հիմա շարունակվում են փակված մնալ մեր առաջ նախկին Տաճկահայաստանի դռները և այնտեղ թշնամին կատարում է իր սև գործը, ճիշտ է, նա դավեր է լարում մեր հանրապետության սահմանների նաև այս կողմը, բայց ես չեմ տատանվում պնդել, որ վաղը մենք կճեղքենք այդ դռները մեր մեծ դաշնակիցների հետ և կտիրանանք մեր անհամար նահատակների և հերոսների արյունով ներկված մեր երկրին: Հայ ժողովրդի արյունոտ դատը անկասկած բարեհաջող և արդար լուծում պիտի ստանա, որովհետև նա մարդկության խղճի, պատվի և իրավունքի հարցն է նույնպես, որոնց գոյությունը ոչ ոք չի կարող ժխտել: Եվ ես կուզեի հավատալ, որ մեր հարցն, ըստ էության, արդեն վճռված է խաղաղության կոնֆերանսում: Մի տարի է արդեն, որ պետության օրենսդրական ֆունկցիան կատարում էր Հայաստանի Խորհուրդը իր համեստ ուժերով: Բայց ամենքը փափագում էին տեսնել շուտով ժողովրդից ընտրյալ պատգամավորներ:

Այսօր՝ Հայաստանի խորհրդի բացման տարեդարձին, իրականացած ենք տեսնում ժողովրդի իղձն, ու ես երջանիկ եմ ոգևորված ողջունել մեր առաջին ընտրովի պառլամենտը: Այս մեծ պատմական օրը Հայաստանի Խորհուրդը դադարում է գործելուց ու տեղի է տալիս հանրապետության իսկական և գերագույն տիրոջը, երկրի, Հայաստանի Պառլամենտին: Առանձնապես ողջունենք մեր մեծ դաշնակիցներին՝ Անգլիային, Ամերիկային, Ֆրանսիային, Ռուսաստանին և Իտալիային, հանձինս իրենց ներկայացուցիչների, որոնք վերջ տվին աշխարհավեր պատերազմին՝ իրենց փառահեղ հաղթանակով և փրկեցին մեր պետությունն ամենածանր մոմենտին: Ողջունենք և մեր հարևան հանրապետություններին, Վրաստանին, Պարսկաստանին, և Ադրբեջանին՝ հանձին իրենց ներկայացուցիչների և հայտնենք մեր անկեղծ և բուռն ցանկությունը, որ նրանք ևս բարգավաճեն և նրանց անկախությունն ամրանա ու հարատևի: Վերջապես ես ողջույնի խոսք ունեմ պահած մեր քաջարի բանակի համար, որ անսահման անձնվիրությամբ և հայրենասիրությամբ կռվում է և պաշտպանում հայրենիքն արտաքին և ներքին թշնամիներից:

Մեր հանրապետությունն անշեղ կերպով ձգտել է հաստատել այնպիսի կարգեր, որ երկրում ապրող բոլոր ազգերն օգտվեն հավասար իրավունքներով և զգան իրենց իբրև հարազատ զավակներ ընդհանուր հայրենիքի և լծվեն միասին պետական գործը առաջ տանելու:

Անկասկած մեր անդրանիկ պառլամենտն իր հեղինակությամբ ավելի ևս կամրապնդի ազգերի հավասարության, համագործակցության և բարեկամության կապերն ու հիմունքները: Չեմ կարող չգրավել այս բարձր ժողովի ուշադրությունն և այն հանգամանքի վրա, որ անսպասելի արտաքին պայմանները թույլ չեն տվել բավականաչափ զբաղվել շինարար աշխատանքներով, որին այնքան կարոտ է մեր երկիրն և չենք մտցրել մի շարք սոցիալական բարենորոգումներ՝ բավարարելու արդար պահանջները մեր վաստակավոր աշխատավորության: Մեր հանրապետության ներկա վիճակն առաջադրել է հսկայական խնդիրներ, որոնց լուծման համար մենք կլարենք մեր բոլոր ուժերն և ամբողջովին կնվիրենք մեր պատասխանատու պետական պարտականություններին:

Կեցցե՛ Հայաստանի առաջին ընտրված պառլամենտը:

«Հայաստանի աշխատավոր», 3 օգոստոսի 1919

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 1918-1920 թթ., ԵՐԵՎԱՆ, 2010, էջ 234-235



Ստացվել է Թերաբիայում գտնվող դեսպանատանը՝
օգոստոսի 26-ին, ժամը 6-ին

Մենք այստեղից դուրս չենք գա երկու օրից շուտ:
Մեր պահանջներն են՝

1. *Երկրում ապահովել խաղաղություն՝ միջազգային միջամտության միջոցով:*
2. *Ընդունել այն պահանջները, որոնք ներկայացրել է Հայ Յեղափոխական Դաշնակցության Կոստանդնուպոլսի Կենտրոնական Կոմիտեն՝ «Դաշնակցություն» անվամբ:*
3. *Մեր դեմ ուժ չկիրառել:*
4. *Ամբողջական երաշխիքներ տալ այստեղ՝ բանկում գտնվող բոլոր անձանց կյանքի, ինչպես նաև վերջին իրադարձություններին մասնակցած անձանց անվտանգության համար:*

Բանկի կահույքն ու կանխիկ դրամը կմնան անձեռնմխելի՝ մինչև մեր պահանջների կատարումը: Հակառակ դեպքում կանխիկ դրամը և բոլոր գործառնական փաստաթղթերը կոչնչացվեն, և մենք, բանկի անձնակազմի հետ միասին, կմեռնենք բանկի ավերակների տակ:

Մենք ստիպված ենք դիմելու այս ծայրահեղ միջոցներին:

Մեզ այս աստիճանին հասցրել է մարդկության հանցավոր անտարբերությունը:

Կոստանդնուպոլսի Հայ Յեղափոխական Դաշնակցության Կենտրոնական Կոմիտեի՝ «Դաշնակցություն» անվամբ, ներկայացուցիչներ՝

Բաբկեն Սյունի
Հրաչ Թիրաքյան
Արմեն Գարո

1896 թ. օգոստոսի 14-ին, Կոստանդնուպոլսի ՀՅԴ կենտրոնական կոմիտեի որոշմամբ, մի խումբ նվիրյալ հայորդիներ գրավում են Օսմանյան գլխավոր դրամատունը (Բանկ Օտոման) և եվրոպական երկրների դեսպաններին ուղղված պահանջագրով, փոխանցում են թուրքական իշխանություններին ուղղված իրենց պահանջը՝ հայկական գավառներում բարենորոգումներ իրականացնելու վերաբերյալ: Եվրոպական դիվանագիտական ներկայացուցչությունների անունից Ռուսաստանի դեսպանատան թարգմանիչ Մաքսիմովը հանդուգն ու անձնազոհ գործողության մասնակիցներին հավաստիացնում է, որ ճնշում կգործադրեն Սուլթանի վրա այդ բարեփոխումները իրականացնելու համար, ինչպես և երաշխավորում է դրամատան գրավման մասնակիցների անվտանգ հեռանալը երկրից: Եվրոպացիները իսկապես ապահովում են գործողության մասնակիցների նավով հեռանալը Ֆրանսիա, իսկ բարենորոգումների գաղափարը մնաց թղթի վրա մինչև 1914 թվականը:

Լուսանկարային տարբերակով ներկայացնում ենք վերոնշյալ պահանջագրի ֆրանսերեն բնօրինակը, որն այժմ գտնվում է Ֆրանսիայի Նանտ քաղաքի դիվանագիտական արխիվների կենտրոնում (Centre des Archives diplomatiques de Nantes):

Բանկ Օտոմանի գործողության ղեկավարներից Արմեն Գարոն իր «Ապրուած օրեր» հուշագրությունում հիշատակում է այս պահանջագրի մասին հետևյալ կերպ. ***«Այս յայտարարագրութիւնները կանխաւ պատրաստուած էին Վռամեանի, Բորիսի և իմ աջակցութեամբ, ուղղուած վեց մեծ պետութիւններու դեսպաններուն և ստորագրուած բանկան մնոյ մեր չորս ղեկավար ընկերներու կողմէն, իբրև ներկայացուցիչներ Հ.Յ.Դաշնակցութեան Պոլսոյ Կեդր. կոմիտէին: Մեր այդ հրաժեշտի ընթրիքի սեղանին վրայ, Բաբգէնը, Հրաչը, Աշոտը և ես ստորագրեցինք թուղթերը...»*** (Արմէն Գարո, «Ապրուած Օրեր», էջ 109, Բոստոն, «Հայրենիք» տպարան, 1948): Պահանջագիրը ստորագրել են՝ Բաբկեն Սյունին, Հրաչ Թիրաքյանը, Արմեն Գարոն և Աշոտը, կնքված է՝ Հ Յ Դաշնակցության Կ. Պոլսի Կենտրոնական կոմիտեի կնիքով: Վավերաթղթի վերևում նշվում է Թարաբիայի (Թերաբիա) դեսպանատան մասին: Օսմանյան կայսրության ժամանակշրջանում, Ֆրանսիայի հիմնական դեսպանատունը գտնվում էր Կ. Պոլսի Բերայի արվարձանում, իսկ ամառային նստավայրը՝ Պոլսո եվրոպական ցամաքամասում գտնվող Թարաբիայի տարածքում: Հավանական է, որ պահանջագիրը հետագայում փոխանցվել է Նանտ քաղաքի դիվանագիտական արխիվների կենտրոնին:

Փաստաթղթի ֆրանսերեն բնօրինակը հայտնաբերել է Մխիթարեան միաբանության անդամ, պատմաբան և ուսումնասիրող Հայր Վահան Օհանյանը, բնօրինակի կողքին ներկայացված է հայերեն թարգմանությունը: Բնօրինակը հրապարակվում է առաջին անգամ:

ԴՐՕՇԱԿ